# ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐԲՅԱՆ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

# АКОП АКОПЯН

## СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

ТОМ ВТОРОЙ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1956

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99
Հ-17

ՄՏՄՈԳՎԱԾ Է 1981 Թ.

# ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

## ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ա 283/4

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1956

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

*Տեքստը պատրաստեցին և ծանոթագրեցին*
*Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ և Խ. Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ*

*Խմբագիր ՀՍՍ. Ա. ԱՍԱՏՐՅԱՆ*



## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հակոբ Հակոբյանի երկերի ժողովածուի երկրորդ հատորն ընդգրկում է հեղինակի պոեմներն ու չափածո բարգմանությունները:

Հատորի տեքստը պատրաստելիս օգտագործվել են հեղինակի կենդանության օրով հրատարակված նրա երկերի ժողովածուները, նախապատվելական և սովետական պարբերական մամուլը, ինչպես նաև Հայկ. ՍՍՌ ԳԱ. Գրականության և Արվեստի թանգարանի Հ. Հակոբյանի արխիվը, որտեղ պահվում են հատորում տպագրվող գրեթե բոլոր երկերի ինքնագրերը, անագրություններն ու հետագա մշակումները:

Հատորի առաջին բաժնում զետեղված են հեղինակի կենդանության օրով տպագրված պոեմները:

Երկրորդ բաժինն ամփոփում է մեկ անտիպ պոեմ և հատվածներ մեկ ուրիշ անավարտ և անտիպ պոեմից:

Երրորդ բաժինն ընդգրկում է ռուս և արևմտաեվրոպական գրողների չափածո երկերի՝ Հ. Հակոբյանի կատարած բարգմանությունների մի մասը:

Առաջին և երրորդ բաժիններում իրեն հիմնական տեքստեր ընդունված են հեղինակի կենդանության ժամանակ վերջին անգամ տպագրված տեքստերը՝ ժողովածուներում կամ մամուլում: Այդ մասին հիշատակվում է յուրաքանչյուր երկի ծանոթագրության մեջ:

Երկրորդ բաժնում իրեն հիմնական տեքստեր են ծառայել Հայկ. ՍՍՌ ԳԱ. Գրականության և Արվեստի թանգարանի Հ. Հակոբյանի արխիվում պահվող առավել մշակված ինքնագրերը: Հիմնական տեքստում հանդիպող չնչված կամ կրկնակ բառերն ու տողերը ցույց են տրվում տողատակ: Անավարտ պոեմի այն հատվածները, որոնք վերնագրված են, տպագրվում են իրենց վերնագրերով, մյուսներր՝ առանց վերնագրերի:

Հատորում նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով, ըստ որում, այս կամ այն երկի գրության ժամանակը որոշելիս հիմք են ընդունված հեղինակի վերջին թվագրություններ:

Հեղինակի կատարած ջնջումներն առնվում են քառակուսի [ ] փակագծերի մեջ սուր <>փակագծերում տրված են բաց թողնված բառերը և կիսատ բառերի լրացումները: Հեղինակի գործածած կլոր ( ) փակագծերը բողնված են նույնությամբ:

Տեքստերում տողատակի ծանոթությունները հեղինակինն են:

Օգտագործված ինքնագրերը, ըստ նրանց գրության ժամանակի հերթականության, նշանակված են հայկական այբուբենի գլխատառերով (Ա, Բ, Գ և այլն):

Հատորի վերջում տրվում են յուրաքանչյուր երկի ծանոթագրությունը, վարիանտներ և տեքստային տարբերություններ, որոնցով լրիվ պատկերացում է տրվում պոեմի կամ բարգմանության ստեղծագործական պատմության, հեղինակի կատարած լաբորատոր աշխատանքի ու դրա արդյունքների մասին:

Իբրև հավելված հատորում զետեղված է «Նոր առավոտ» պոեմը՝ Ստեփան Շահումյանի կատարած դիտողություններով:

*ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ*

# ՊՈԵՄՆԵՐ

# 1909

## ՆՈՐ ԱՌԱՎՕՏ

(Stella-ին)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Ահա իմ մուտան կյանք առավ նորից
Եվ պատանեկան աշխուժով եռուն
Ետանց արտիս հետ անցած օրերից—
Անցած օրերի հմայքը սիրուն.
Օրեր՝ որ անցան ծաղիկների մեջ,
Լի վաչելքներով անմեղ մանկական,
Օրեր՝ որ անցան շարնշար, անվերջ,
Բուռն հույզերով պատանեկական:
Եվ ի՞նչ է կյանքը... մի երգ դյութական,
Որ կրկնվում է հիասքանչ, թովիչ
Ելևէջներով, եղանակներով,
Որը հնչում է այնպե՞ս գրավիչ
Ու մարում ցավի արձագանքներով...
Կյանքը մի նկար, որը հյուսվում է
Հաղար գույներով, հաղար ցոլքերով,
Կյանքը հակա ծով, որ փոթորկում է,
Նավեր խորտակում ու վերջը մնում
Մենակ ու տխուր իրա խոհերով...
Ահա իմ մուտան տեսնում եմ նորից
Տանջված անցյալի ծանր երկունքից
Պոետիս ծնեց կյանքի նո՛ր գարուն—
Մի պատկեր սիրուն.
Պատկեր մի կույսի, որին շա՜տ վաղուց

Որոնում էի, բայց չէի գտնում,
Նա մի իդեալ, որին հինավուրց
Ե՛վ տենդում էի, և՛ չէի տեսնում,
Որին ես ձգտում՝ բայց չէի հասնում...

## II

Այժմ, ահա, նա... տեսնում եմ, զգում,
Որ իմ հոգին է նրա մեջ ապրում.
Որ իմ և նրա հոգու ծալքերում
Կա մի հարազատ իրար նման գիծ՝
Որը ակռաված միապես ցավից...
Քա՜ղցր է, քա՜ղցր, ես չեմ կշտանում
Նրա դրախիչ, խոստուն աչքերից,
Եվ ամեն անգամ մի բան եմ գտնում,
Մի միտք հղանում նրա պատկերից,
Երբ ուշքս լարած նայում եմ նորից,
Ա՛խ այն աչերում մի ամբո՛ղջ աշխարհ,
Այն Բախծոտ շուրթին մի ցավոտ ժպիտ,
Իսկ հրապույրը գնդի վշտահա՛ր...
Զգում ես, որ նա կրնէ է մի վիշտ,
Մի խոր, անհուն վիշտ, որը չդիտես
Ո՛ւր է վերջանում, նրան ո՛ւր տանում,
Կամ ինչո՛ւ հոգիդ այնպես տատանում.
Ու մտածում ես, ու մտածում ես՝
Եվ չես հասկանում...
Զգում ես, որ նա մատաղ հասակում
Շա՛տ է տուժացել, շա՛տ է դիմացել,
Ու թևև նրա կյանքը ծաղկալից
Հոգմերի տակ է անվել, մեծացել՝
Բայց էլի անցած վշտերի բովից
Մի գեղեցիկ բան դարձյալ մնացել:
Օ՜, ես սիրեցի՛ այդ նազան կույսը
Շողը երեսի.
Քանի նայում եմ—էլ չեմ կշտանում,
Չտեսած ժամին խորը վշտանում,
Կարծես կորուսած մի անձ թանկագին,

Նրա սուգըն է սրտիս ծանրանում։
Ահա ես մենակ սպասում եմ լուռ
Ամեն մի րոպե, թե՝ հա՛, պիտի գա
Ու բանա իմ սան դռնակը ախուր,
Նվ իմ առաջև կանգնի հեկեկա,
Կանգնի ու ասի՝ տեսա՞ր որ եկա,
Եկա պիտանալով, որ կրակի պես
Հալվում ես մենակ... եկա որ շոյեմ
Ճակատդ ախուր ու քեզ փայփայեմ,
Որ սրտիդ ցավը հեշտությամբ տանես
Ու տեսնես, որ ես այնքան էլ անգութ,
Այնքա՛ն էլ քար չեմ, ինչպես կարծում ես...
Ու երդվի պես անորոշ ու մութ
Ասես ու դնաս, ասես ու դնաս՝
Ու մեկ էլ տեսնեմ, որ դու էլ չկա՛ս,
Որ դու էլ չկա՛ս...

## III

Տեսնում եմ նորից, քո մեն մենյակում
Նստել, դիտում ես աչքերով թաքուն.
Սիրո՞ւմ ես դու ինձ, թե՞ հոգիս պննում—
Այդ չեմ հասկանում.
Այդ խորհրդավոր լռակյաց ժամին
Քո հրապույրն եմ ես միայն զգում.
Կյանքի արևը իրա իմաստով
Զգում եմ, աչքիս հմայք է առնում
Ու շոյող, անուշ մի ճառագայթով
Հալվում ու ձուլվում իմ հոգու խորքում։
Հա՛, դու նայում ես երկար ու թաքուն...
Աչքերդ կարծես տերևով ծածկված
Մի աղբյուր լինին, որ ուզի բացած՝
Տերևի տակից գնում է, հոսում,
Նայում երեսիս, սրտիս հետ խոսում.
Ու ես ծարավի տալ մարդ չըրիդ,
Ու ես կարոտի մաքուր բյուրեղիդ՝
Ընկնում եմ լանջիդ, որ սիրտս բացեմ,

Փղձրկամ կրծքիդ, ցավս կուշտ լացեմ.
Բայց մեկ էլ հանկարծ աչքես չքացած,
Որպես մի այծյամ սարն ի վեր նյութ՝
Տեսնում եմ, ավա՛ղ, որ դու էլ չկա՛ս,
Որ դու էլ չկա՛ս...
Օ՛, այդ աչերը այնքա՛ն դրավիչ—
Կարծես սպասում մարգարիտ-ծաղիկ
Հետուն ցնորող, բայց կյանքի կարոտ՝
Ինձ խոստանում են մի նոր առավոտ:
Զգում են նրանք ինչ որ անհայտ,
Կարծես որոնում մի աշխարհ գաղտնի,
Գաղտնի մի աշխարհ, ուր եթե հոգին
Երջանիկ գտար ու շուտ մահանար՝
Ոչ մի ափսոսանք չէր առաջանալ:
Զգում են նրանք, որոնում մեկին:
Գեղեցկա՛ն աչեր, դուք ո՞ւմ եք ուզում,
Գուցե երջանիկ կյա՛նքը երազում,
Կյանք խնամասիրց, կյանքը իրական,
Կյանքը կյանքի մեջ գաղափարական,
Էի հույսերով, տանկություններով
Եվ երջանկության փոթորիկներո՛վ...

## IV

Եվ ես վազուց է հետս կարոտ
Մի ցավ եմ գտում իմ ցավոտ սրտում.
Եվ ես վազուց է սերո՛ անոթի՝
Նրա գող ու հույզն էի կարոտում.
Արթնացավ իմ մեջ նա մի նոր ուժով,
Սիրտս լրջորեն այնպիսի հույզով՝
Կարծես վիրավոր մի խոցն սրտոնջ,
Կարծես փայփայող կանացի մի շունչ
Ողջ էութիւնդ շոյում, զուգուրում
Ու հոգուդ բերում
Մաղկունքից բուրող մի քաղցր պրպիտ,
Մի անուշ թմբիր...
Եվ այդ ժամերին մի կյանքըն ի՞նչ է,

Հարյուր կյանք ինձ տամ այդ բախտին՝ թիշ է...
Ու ես իմ հոգու ուժերի թափով,
Որ խրտացել է ծով-սրտիս խորքում,
Ուզում եմ քեզ դամ ձիշ ու սարսափով
Ու ալիքի պես ծնկներդ փարիմ,
Ոտքերդ մարմար գրկեմ, համբուրեմ,
Ասեմ՝ ի՛մ անգին, այսպես իմ կյանքում
Ես դեռ չեմ սիրել, բայց պիտի՛ սիրեմ,
Ու մեկ էլ աչքս ես վերև հառեմ,
Տեսնեմ ինձ մենակ, իսկ դու էլ չկա՛ս,
Ծո՞ւլ ես, մարմի՞ն, որպես խուլ երազ...

## V

Ու վերջին անգամ տեսա, նազելիս,
Հազար պչրանքով, հազար թովչանքով,
Տեսա քեզ մենակ սիրտդ հուզվելիս
Մտախոհ ծովի բուռն հորձանքով,
Գլուխդ ետ տարած, մազերդ ցիրցան,
Հուսահատ թափով ջրաձգական
Ձեռքերդ ջարդում, մատներդ անդուռ,
Արդյոք ո՞ւմ մասին ես դու մտածում.
Հայտի՞, անհայտի՞, նեղկա մի անձի՞,
Թե՞ մի ցնորքի.
Տեսա քեզ ինչպես լարած միտք ու խելք
Ուզում ես գտնել կատարժիդ մի ելք...
Ու մի սիրալիր ժպիտ իմ բաժին
Պայքում է հանկարծ շուրթերիդ ուժգին,
Ջարդ, բարդի ուժերն են կռվում,
Թե՞ հանապարհիդ վարդերը փուշում.
Նեղկացի փշե՞ր, անցյալի հուշե՞ր,
Թե՞ դեռ անորոշ մի համբ պիշեր...
Եվ մտածում եմ. գուցե՞ սա ունի
Հետու աշխարհում իդեալ սիրուն,
Գուցե փայփայած մի անհա՞տ ունի
Գնդմարդ կոչվելուն հպարտ արժանի...
Ասա՛, իմ սիրուն, իմ հոգու պատկեր,

Ո՞վ է այն հսկան, որ կարողացավ
Քեզ լինել ընկեր.
Ո՞վ այն ախոռանը, որին հաջողից
Տիրել քո սրտին, իշխել քո մարմին.
Ո՞վ այն երկինքը, որը խեղդանից
Ամփոփել իր մեջ քո օվկիան հոգին...
Կյանքի ծարա՞վը նահականության,
Անհաս բուի՞շքը բանականության,
Արդյոք աշխարհիկ վայելչությո՞ւնը,
Թե՞ փարթամ կյանքի սին կեր ու խումը...
Օ՜, թե նա տեսներ իմ ցավ ու թախիծ՝
Քեզ ինձ կթողներ այն հետու տեղից,
Քեզ ինձ կթողներ ո՛չ թե անձնական
Լոկ բախտիս համար— իրեն կարեկից,
Այլ ձեռքդ առած, որպես թևակից—
Աշխարհ կներթայինք կյանքը մտնելու,
Մեր միտքն ու հոգին մարդկության տալու:
Եվ, ասա՛, ինչո՞ւ մի ձայն հաղթական
Որտուն նման ինձ է թևևդրում,
Որ դու միայն իմ աշխարհն ես սիրում,
Կամ ինչո՞ւ սիրտս հուժկու ձայն առած՝
Աղաղակելով միշտ նույնն է ասում—
Որ քո խնկացի աչերը անուշ,
Որ քո այդ ազնիվ ժպիտը քնքուշ
Մեկին սիրելու համար չեն առնծված:
—Մեռած են նորա ամբոխի համար,
Նորա ծուխըն են տառապած կյանքի,
Նորա ծնունդ են մի այլ աշխարքի,
Եվ ի՛ղ որ ապրեն մարդկության համար:
Օ՜, նեն փղձի իմ դլխին կամար,
Ես չե՛մ հավատալ, ես չե՛մ հավատալ,
Որ հոգիդ պայծառ և սիրուդ ազատ
Կարենա գերել ա՛յլ էակ—անհատ.
Դու ինձ ես սիրում, դու իմ իդեալ,
Ես չե՛մ հավատալ,
Որ միտքդ ճնշի սրտի բարեխոսում,
Սրտիդ մեջ մի ա՛յլ կրակ է մխում...

Եվ այդ գոհարը նվիրել մեկին
Շա՜տ է նաևկան—կաշկանդող հոգին.
Նրա թռիչքը մի ցնորք անտես,
Երերուն մի հոգ, ուր ինչ էլ ցանես՝
Պիտի բառամի, պիտի չորանա,
Սկիզբ ու վախճան երբեք չունի նա...
Եվ ի՞նչ է մեկը.
— Մեկը՝ մի սովից, որ ինչ էլ լինի,
Նման թույլ ու մեղկ օտար հնչունի
Արձագանք չունի.
Ա՛յլ է հաղարը, ա՛յլ նրա կոչում,
Նրա գլոհից աշխարհն է բնդում...
Ա՜հ, այն աշխարհում կա մի ճանապարհ—
Անճուկ ու փշոտ.
Ուր եթե գնաս՝
Քեզ պիտի շողի ոսկի առավոտ.
Նա չէ մի երազ,
Սիրելի ընկեր, և ոչ սին պատրանք.
Նա խոստանում է քեզ իրական կյանք,
Ինձ՝ նոր առավոտ...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

## VI

Եթե իրավ է, նապելի սիրուն,
Որ քո աչերը կյանքի ջերմ կարոտ
Մի նոր, իրական աշխարհ են փնտրում,
Եվ ինձ խոստանում մի նոր առավոտ,
Արի առանձնիմ քեզ իմ սիրածի մոտ.
Գնալն գործարա՞ն՝
Արի առանձիմ քեզ, ուր բանվոր մարդիկ
Չեն ապրում միայն ցավով անձնական,
Ա՛յլ ցավը քաշում չարքաշ մարդկության.
Ուր գործ և կռվի մեջ են որոնում
Հմայք-բանալին բախտավորության:

Աչնանը միասին և քնկերովի
Բարթ ին կաանք, նեցուկ կլինենք,
Որ ցավ ու պրկանք հեշտությամբ տանենք.
Ես քեզ կսիրեմ ո՛չ լոկ սիրելու—
Հառույցի համար,
Այլ անդամ ծուլվելու քո մատաղ հոգում,
Որ դու ավելի լինես պիտանին
Այս դաժան կյանքում:
Ա՛խ, մանկությանդ քնկեր սիրելու
Նվիրական եմ ես,
Ու քեզ հետ լաս՝
Երգս միասին,
Էլ չես մոռանալ անհատիդ տասին.
Երանի՛ նրան,
Ով կանցնի քեզ հետ կյանքի նոր ուղին:

## VII

— Գնա՛նք դպրոցդան...
Բայց լսի՛ր ասեմ, սիրելի քնկեր,
Որ չկան աչնանը ծառ ու ծաղիկներ,
Բաղեղ ու խոտեր,
Հավքերի նվագ, գույ-գույ ապրյուրներ,
Ինչ ո՛չ ալ վարդեր.
Չե՛ս տեսնիլ աչնանը լուռնյակ պիշերի
Լուսաշող ամպեր,
Ո՛չ էլ սիրահար ջահել արեի
Կրքոտ համբույրներ.
Աչնանը ծառի տեղ ցցված են խրտխռտ
Երկաթի սյուներ:
Բաղեղ-խոտի տեղ ցանցերի փշոտ
Պաղպատե լարեր,
Գեղախոտ թռչնոց երգի փոխարեն
Կը լսես աչնանը
Ճախարակների անդադին որոտ,
Եվ խեղի փոկերի համերգը ահեղ.
Աչնանը խեղդվում են շոգու ամպերեն.

# ՆՈՐ ԱՌԱՒՕՏ

(ՊՕԼՍ)

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍ
ՀԱՅԿԱԶՈՒՆՔԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ Ն. ՍԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ Ի
1910

Հնոյ առաւօտ պոեմի 1910 թ. հրատարակութեան առիւանաթերթը։



Գաղ աղբյուրի տնէ՝ քրտինք ամէն օր,
Վարդի փոխարէն՝
Մորում, քամվում է արյուն սրտերեն,
Եվ շուրջդ բոլոր
Շռինդ ու ժխո՛ր...
Կը տեսնես, ինչպե՛ս թանձրացած մխով
Մխանելույղները
Երկինք են կառչել ապահ երախով,
Մրոտ պնչերը
Կարծես հրաշունչ վիշապի նման
Ուզում են շնչել
Ու իրենց քարշել
Անհուն բարձունքից փայլուն աստղերը,
Որ նրանց բաղեն մշուշ-ծխի մեջ.
Կը տեսնես շարված ագռավոր ու խեղճ
Արհեստանոցի աղյուս պատերը
Խոնավ ու թաց-թաց,
Կարծես բանվորի քրտինքով թրջված...

## VIII

Եվ դու կմտնես այն գործարանի
Կամարներին տակ,
Որտեղ եռում է բախտով աշխատանք.
Կը տեսնես այնտեղ արհեստանոցի
Հարազատ զավակ կաղնի-բանվորին,
Կարծես Բահալը նստել է նրա
Կորացած մեջքին։
Ա՛խ, շա՛տ եմ տեսել նրան, ի՛մ ընկեր,
Սևացած երես, ծխի մեջ կորած,
Ու դեռ հասակը երեսուն չառած՝
Կամ մեքենան է ճխլում իր բախտում—
Ոտքերը փշրում, բազուկը հատում,
Կամ ալ հեղուկը այրում, փոթորում...
Ես տեսա նրան, սիրելի ընկեր,
Մի մթին դիշեր
Քուրան էր վառվում, փնչում կատաղած,

II 28314



387—2

Ամեն անկյունից, որպես վիշապներ,
Կարմիր կրակը լեզուներ հանած՝
Օդը լիզելով երկաթն էր ծամում—
Ծուխ-ծուխ շիկանում,
Եվ նրա դիմաց դարբինը կանգնած,
Ալ բոցի գույնից թաթ, նռանգ առած՝
Ջորցած մատներով երկաթն էր կռում
Եվ պողպատ մեջքով հսկային ծռում,
Կռե՜ւմ ու կռմո՛ւմ...
Եվ մինչ մի նոր ձև, մի կյանք չէ՛ր տալիս
Անշունչ մետաղին՝ չէ՛ր հանգստանում։
Եվ խորհում էր... ահա՛ թե ուր է
Զգում բանվորի առնչծոց ոգին,
Ահա՛ թե ինչու կարմիր-ալ գույնը
Նա սիրից այնպես խանդաղատագին.
Ու թեև կաթ-կաթ քրտինք է ծորում
Մրոտ ճակատից,
Բայց էլի մի խ՛ր, մի գործ է ձուլում
Անշունչ երկաթից,
Մի գործ հոյակապ,
Որով կոփվում է իր կամքը երկաթ,
Սնվում ու բոլվում հավատն անհաղթ։

* * *

Մի ուրիշ անգամ այս սիսառնիերին
Ես տեսա, ընկեր, մեծ ձուլարանում.
Դույլեր ու ձողեր ձեռքերը առած՝
Ջեռուն հնոցի շուրջը բոլորած՝
Թո՛ւջ էին հալում։
Վարպետն ամեհի կարմրել էր, փսփսել,
Ուզում էր պայթել...
Եվ ահա մեկը անվհհնեներից
Սուր ձողը ձեռքում
Վարպետի կուրծքն է պայրուքով մխում,
Երակը խայթում.
Կարմիր հալոցքը արյունն նման

Վիժում է ուժդին,
Կարծես հոխորտում կլանել նրան՝
Ով որ խիզախեց վերք տալ իր կրծքին.
Բայց բանվորը քաջ սովոր է նրան,
Տաղտում է, հնգնում չեռուն հեղուկին.
Հալոցքի մե՛ջ է անվել, մնծացել
Նրա հաղթ հոգին։

## IX

Որպես հրաբուխի չեռուն ձուլածո՝
Շիկնած դույլերում հալոցքն է եռում,
Մարդիկ վառանդի հարայ-հրոցով
Հալոցքը դնալի ձևերն են բերում,
Ահա հասել են ձև-կաղապարին—
Մահ ու դժոդքի այս ճանապարհին՝
Հանկարծ վարպետի խրոխտ հրամանն...
Ու մի վայրկյանում տասնյակ բաղուկներ—
Լարված մկանունք, ուռած երակներ
Դույլն են ծռում դե՛պ ձևի բերան,
Կոկորդը թափում հալքը հուրհրան.
Կարմիր հեղուկը հալած չուգունի
Խլրտում է խեղճ հոտանքի նման.
Բոցեր են ելնում կրծքիցը հողի,
Ծծմբահոտից գաղջանում օդը,
Բայց ո՞վ է նայում վիշապի խաղին—
Բալաստը նրան գսպել է արդեն.
Ուրախ են մարդիկ ու գոհ են նրանք,
Որ հուր տանջանքից ծնվեց հաղթանակ.
Գետնի տակ ձուլված գործը կենդանի
Իր դիրքին է առել հողի կաղապար,
Գործը մարմնացել... Կեցցե՛ գաղափար...

## X

Այդպես շարժվելու նրանք միշտ սովոր,
Այդպես անհանգիստ եռուն ամեն օր
Գալիս են անվերջ։

Հազարը մեկին պես, մեկը՝ հազարին—
Մի ալիքից ետ՝ բյուրավոր ալիք,
Զուլվում է ես-ը հզոր մենի-ի մեջ
Եվ մեռած կյանքի հուզում փոթորիկ.
Նրանք գալիս են մի-մի առավոտ—
Խավար մտքերը հառագայթելու,
Նրանք պայքարում շարքաշ մարդկության
Հանդիսատ բերելու.
Նրանք տանջվում են ո՛չ ինձ, քեզ, մյուսիդ
Զորրորդի համար.
Նրանք մեռնում են ինձ, քեզ, երրորդի—
Շատերի համար.
Եվ հսկայական մի ցավով տարված՝
Զգում են առաջ, անցնում խումբերից,
Եվ սիրտն է բնդում այդ միությունից:
Տե՛ս այդ նրանք են, ուր ամեն մեկը
Մի քար է քաշում մրջյունի նման
Ապագա շենքի կռելու հիմքը,
Եվ երբ տեսնում է պատերը ելան,
Ելան, բարձրացան և գործն էլ կենդան՝
Ոգևորվում է առյուծի նման:
Գնա՛նք գործարան,
Դեպի կարիքի, քաղց ու տանջանքի
Այն եռուն թուրան.
Այնտեղ կտեսնես զրկանքի որդուն,
Ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում.
Այնտեղ կարող ես հասկանալ մարդուն,
Լվանալ վերքեր արտից արյունով,
Հրեշտակային այդ բարի դեմքով,
Քնքուշ, երբագործ կանացի հոգով
Այնտեղ կարող ես ցավեր ամոքել
Եվ վհատյալին սիրտը բորբոքել,
Որ լքման ժամին
Վշտին դիմանալ նա կարողանա,
Մինչ մի լավ օրի նա կմոռանա...
Մոռացիր նրան, ա՛յ իմ սիրելի,

Տանջվի՛ր նույն ցավով.
Նա՛, ով շա՛տ տանջվում՝
Ամեննից լա՛վ է կյանքը հասկանում...

## XI

Եկել եմ կանգնել Թաղման անտառի
Մի լայն բացատում, կանչում եմ նրան.
—Ո՞ւր ես, սիրելիս, ո՞ւր, իմ նաղելիս,
Գնա՛նք գործարան...
Բայց նա չի լսում... ա՛խ, նա չի գալիս...
Շուրջս մայրիներ, դալար ու ճկուն,
Շուրջս կաղնիներ, ջահել ու տոկուն,
Այստեղ անտառի համեստ ծաղիկներ՝
Մեխակը կարմիր բույրով դիմացկուն,
Համեմիկը նազան, պայծառ ու ժպտուն՝
Իրենց անտառի երգերն են երգում—
Մեզ իրենց կանչում...
Նորից ձայն տալիս, նորից եմ կանչում...
—Նաղելիս, ո՞ւր ես,
Չէ՞ որ սիրեցի, փայփայելի քեզ,
Ինչպես արևը, որ կյանք է շնչում
Դալկացած ծաղկին,
Ինչպես գարնան ցող, որ ծիլ է տալիս
Նրա արմատին։
Ու նա չի՛ լսում, ու նա չի՛ գալիս,
Նրան ա՛յլ ցնորք, ա՛յլ կյանք է քարշում.
Գուցե և կյանքը—լի հաճույքներով,
Գուցե և կյանքը—մանր հոգսերով...
Ու գնում է նա հափրած իր բույրից
Բախտ երազելու իր մեկ ջերմոցում.
Ու գնում է նա... ո՛վ գիտե, գուցե,
Ինքն էլ այսօրից,
Որպես թույլ ծաղիկ առանց նեցուկի,
Առանց խնամքի,
Պիտի չորանա, պիտի թառամի,
Մանր, առօրյա մի պատահարից...

## XII

Ասել էր մեկը հույն փիլոսոփներից,
Որ լուսնյակի տակ
Ամեն ինչ շարժվում, փոխվում է նորից—
Եվ այսպես անվերջ...
Ա՛խ, ես մեռցի դարձյալ մեն-մենակ
Իմ տավիղի մեջ։
Որպես մի ցնորք, դուրն և պատրանք,
Նա եկավ, անցավ.
Շոյեց, փայփայեց, ընդրկեց հոգիս,
Նորից չքացավ։
Նա եկավ, անցավ աստղի նման,
Որպես հուզող ակնի,
Ու թողնց սրտիս յավտա պատմության
Մի տխրալի էջ.
Ե՛վ ես զգացի, որ նա ինձ համար
Մոռնի, բայց օտար՝ և՛ կար, և՛ չկար։
Ես տեսա նրան իմ երազանքում,
Ես տեսա նրան կիներ-բարձունքում,
Լուսնյակի պես երևալ հանած
Ամպերի ծոցից,
Անհասկանալի, երազ աչերով,
Դյութական ժպիտ շուրթին փայլելիս—
Ինձ վե՛ր կանչելիս։
Ա՛խ, ես հասկացա, որ իմ նազելիս
Կավի չէ՛ր սոված,
Նրան հանդիսատ էր միայն հարկավոր,
Գուրն և վաղանց մի կյանք բախտավոր...
Եվ կին այդպե՛ս
Ինչո՞ւ իմ հոգին կրակվեց այսպես...
Ա՛խ, այդ չիմանալ որպես մի կատակ,
Թյուրիմացություն չէ՛ր սա մի պատարկ.
—Սրտի դա՛ռնները էր, որոց պես հալող,
Այրող, սոչորող,
Բայց էլի ծարավ սրտս անզանից—
Անհուշտ երանից.

Սրտի զգացմունքն էր արյունը վառող,
Ուր երկու համառ, անհանգիստ ուժեր
Զգում են իրար,
Բայց ծածուկ տանջվում մեկ-մեկու համար-
Գուցե և հոգու, մտքի խմաստի
Ներշնչումն էր այս,
Որը ապրում է մարտիկ պոետի
Թռիչքում անհաս.
Եվ նոր հասկացա, որ ես այրվել եմ
Լոկ իմ կրակից,
Որը մի անգամ մարդու մեջ վառվում,
Մարում է նորից.
Որ նա մի անօթ, ուրկից ծծել եմ
Հեղուկ կենսատուր,
Նա մի բնություն, որից ապրվել էր
Հոգիս խանդավառ...

# 1911

## ԿԱՐՄԻՐ ԱԼԻՔՆԵՐ

(2-րդ ցիկլ «Նոր Առավոտ»-ի)

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

#### I

*Օ՛, Ստե՛լլա, ես քեզ այնպե՛ս սիրեցի—*
*Դու չհասկացար իմ հոգին-պոետ.*
*Կյանքիս նեղ ճամփին քեզ որոնեցի—*
*Դու չեկար ինձ հետ*
*Դու չեկար ինձ հետ, և մի լար քաշած*
*Սրտիս թևերից, չքացար անհետ...*
*Ես էլ գնացի իմ սիրած ճամփով—*
*Ուրիշ հար չկար.*
*Ես էլ գնացի ու ճամփիս տեսա*
*Մի լավ աղջիկ.*
*Մի լավ աղջիկ ես հանդիպեցի—*
*Գործ ու Գաղափար—*
*Եվ մենք սրտերին իրար սիրեցինք*
*Որպես քույր եղբայր*

#### II

*O*, Stella bella!...
*Ճիշտ է, քեզ նման գողտրիկ չէ, սիրուն*
*Իմ կուլտը սիրած,*
*Չէ՛ նա երկնային, ոչ ձայնը անուշ՝*
*Լարից ոտրած...*

Այո՛, նա չունի քնել պես երազող
Աչեր հմայուն,
Ոչ էլ կանացի հմայքը թաքնված
Դեմքի գծերում,
Բայց շքեղ է նա, առողջ ու փարթամ,
Որպես կենսատու բարեմաշունչ գարուն.
Շուռով բառամող նա չէ՛ քնքուշ վարդ,
Այլ կարմիր մեխակ դիմացկուն, հպարտ.
Նա իր էությամբ՝ անդուլ աշխատանք,
Նա իմ հույզերով՝ փոթորիկ և կյա՛նք։

## III

Դու ինձ ասացիր.—«Գեղեցի՞կ եմ ես,
Տե՛ս իմ աչերը—արևից էլ վառ,
Տե՛ս իմ ժպիտը—լույսից էլ պայծառ,
Քո սիրող ոգուն համայր կրների
Եվ գրավչությամբ սիրտդ կդների,
Իմ մի հաշտ խոսքից քնել բախտ կծագի,
Եվ քո ծարավը ինձանով հագի...»
Եվ կրկնեցիր. ա՛ռ,
Գեղեցիկ չի՞մ ես...
—Ո՛չ, գեղեցիկը խեղան է վիս.
Նետվել փոթորկած ծով ամբոխի մեջ,
Ինքս էլ մի ալիք նրա հետ ձուլվել,
Եվ կռվե՛լ, կռվե՛լ, անհանգի՛ստ, անվե՛րջ,
Ի՞նչ կա գեղեցիկ սրանից ավե՛լ...
Դու ինձ ասացիր.
—Մի՛ թաղիր ջահել հասակդ հառն,
Փոթորիկների ալիքների մեջ,
Քո երազածը դեռ շա՛տ է հեռուն,
Եվ սիրե՛նք, սիրե՛նք իրարու անվերջ...
Ես՝ երազների չքնաղ երգհոն—
Սիրտ մի ասուված,
Դու՝ մի ջինջ լարված, որ ձայն ես հանում
Սրտիցս այրված...
Թո՛ղ քո կռիվը, պայքարն ու վտանգ,
Ե՛կ ինձ հետ գնանք...

Ե՛կ ինձ հետ դնանք—կյանքը վերջ ունի,
Չնամացնենք նրան մեր համբույրներով,
Արբեցնենք օդը ծաղկանոց բույրերով.
Իմ սիրո համփան վոտանդներ չունի...
— Նե՛ղ է, գոշնիկ,
Մխակոդմանի
Քո սիրո համփան —
Կանապխական,
Եվ արդեն հերքված՝
Քո սիրո առաված...

## IV

Հիշում եմ, մի օր—մայիսյան գիշեր—
Դու ինձ մոտեցար.—Արի, երանենք
Մենք այն սարն ի վեր
Ու գիմավորենք
Վեհ արշալույսին նոր առավոտյան։
Ու մենք սարն երանք...
Քաղաքը հսկա անծայրը ապրածված
Երիտասիս առաջ՝
Բյուր հրապներին փռել էր մի ցանց.
Հազա՞ր աչքերի, հազա՞ր առաղների
Քաղաքը փոխված
Թաղիում էր հեռվից...
Եվ առվոտական քո մեկեմ շոյանքով,
Կիսամար ձայնիդ անուշ շշուկով
Ասացիր դու ինձ.
—Այս քաղաքը մեծ քեզ նե՞ղ է թվում,
Որ տարվում ես այլ հորիզոններով,
Այս հեռ ու փարթամ հմայքը կրծքիս
Քեզ չի՞ հրապնում,
Որ բորբոքվում ես այլ երազներով...
Եվ մեկեմ, աննկատ, մագիսի նման,
Հոգուտող կրքով ինձ քեզ քաշեցիր,
Եվ ես զգացի մարող շարժերիդ
Հուրը հպանցիկ...

Ու նորից դողդոջ, մեղմ ու նվաղկոտ
Կիսաբաց շուրթով դու շշնջացիր.
—Տե՛ս... ա՛յս է ահա եղեմը կյանքի...
Ես սթափվեցի.
Ա՛յ դու խորամանկ—վերջը էլի կին—
Որոգայթներով,
Ինչո՞ւ կամեցար ինձ նորից դյուրել
Քո հմայքներով.
Ինչո՞ւ բերիր ինձ գաղտին այս լուռան,
Ա՛յ դու մեղկ գերի սիրո անձնական,
Քոնը՝ այսօրը, իմը՝ ապագան...
Նվ մենք երկուսով իջանք այն սարից
Տխուր այս անգամ,
Նվ անջատվեցինք՝ խայթված իրարից՝
Ընդմիշտ հավիտյան։

## V

Օ՛, Սոնա՛լա, Սոնա՛լա, դու ինձ հետ չեկար.
Քանզի ինչվան վիշտը քեզ օտար,
Չե՛ս զգացել ցավն ինձ նմաննների,
Որ իմ հազիվ կոչին քո հոգին ձեն տար...
Չեկար վշտածին, քաղցածին դնալ,
Քանզի քո կյանքում դու չե՛ս էլ քաղցել,
Սիրո արբունքի փոթորկուտ կրքին
Տարուկ ես եղել, որպես տուկ մի կին...
Չեկա՛ր... դնացիր քո համփոյլ մոլար...
Ե՛ս էլ դիմեցի իմ սիրած համփոյին—
Ուրիշ հար չկար,
Ե՛ս էլ գնացի ու համփոյս տեսա
Մի լավ աղջկա,
Մի լավ աղջկա ես հանդիպեցի—
Անունը Սառա. և մենք ինչ առած,
Թև-թևի տված,
Որպես նոր զարնան երկու ծիծառներ,
Սլացա՛նք առաջ...

## VI

Առա՛ջ և առա՛ջ...
Մտանք բյուրավոր մթին նկուղներ,
Գետնատիպ հյուղեր,
Գերծարաններին մրով շաղախված
Սև կացարաններ...
Սարսափի՛ տներ... Տնե՛ր են միթե
Տեսածները մեր,
Թե՞ մեղուների նեղլիկ բջիջներ...
Մի տեղ ուժասպառ բոկոտն մանուկներ,
Քաղցից դալկահար,
Խուլ անկյուններում կծկվել են սոված—
Անհայր, առանց մայր,—
Կարծես անտոգոր փոթորկից հետո
Կարկտից ջարդված, իրար փաթաթված
Ծառերի ոստեր...
Մի այլ տեղ հիվանդ նորածին մի կին
Կիսամութի մեջ երեխան գրկած՝
Իր այս մանուկի շուրթին է անգիտել
Սառնըթ ցամքած...
Ապա ծերերի դալուկ սավերներ—
Ողորմ ու եղեռն,
Կարծես կայծակի հարվածից խանձված,
Չորացած կոճղեր.
Մնողներն են այն սև բանվոր մարդկանց,
Որոնք անընդհատ հայց պիտի քամեն
Քարից, մեռադից,
Որ այս ծերերին փրկեն սովամահ
Լինելու վախից...

## VII

Խաղաղ վերջալույս...
Արևը արդեն հոգին է տալիս,
Եվ ինչ խոսք ունի, ինչ չավ ասելիք՝
Երկնակամարին է նա պահ տալիս...

Ի՞նչ զմայլ գույներ, երբին ու զեղուն,
Երկինքն է երգում հույզով դողդողուն...
Ու այս վեհ ժամին շշակը ճչաց.
—Ապա՛ ևք, ասաց.
Եվ մեռնող օրի կամարների տակ
Լռեց աշխատանք։
Այն հուր ու պայքար, շռինդ ու շառաչ,
Որ փոթորկում էր մի վայրկյան առաջ՝
Դադարեց հանկարծ,
Ահա և նրանք—հաղթարվեստ շունչ—
Սուվերների պես մռայլ ու հոգնած,
Կարծես երկնքում ամպերը երկնած՝
Քայլում են լուռ-մունջ.
Քայլում են լուռ-մունջ և շուռպում տուն
Շարքերով անվերջ։
Կա՛ մի խորհրդատու, չքնաղ վեհություն
Այս լուսյան մեջ,
Անբարբառ մի ճիշ, որ կայծակից էլ
Ուժեղ է շանթում...
Սև հոսանքի մեջ գունատ ու մաշված
Ահա մի այլ շարք աշխատող կանանց։
Արագ քայլերից ճոճվում են նրանց
Սնունդից զրկված կրծքերը ցամքած։
Ու անանում ևնք մենք՝ ես ու իմ Սառան,
Այս մարդկանց շարան
Եվ փոթորկում է հուրը մեր կրծքում—
Կուվի համակում...
—Գալի՛ս ևնք ահա, շարքա՛շ ընկերներ,
Ու ձեզ հետ մենք էլ ամեն մի դեպքում,
Թե՛ դժոխքի մեջ, թե՛ ծովի խորքում։

## VIII

Հազարների մեջ իր հյուղի շեմքով
Մոնում է ահա վաստակավորը,
Քաղցից նվաղած ընտանիքի հայր
Սարդիս բանվորը.

Նայում ենք նրան—նա ու իմ Սառան—
Արյուն է կապում դույդիս աչքերին.
Դեռ երևի ջահել, այսօր կորացած՝
Կապխտային այս չարքաշն ու գերին
Մոնում է մառայլ, փոշու մեջ կորած,
Կարծես դժոխքում հալածանք կրած...
Քրտինքը շորցած յուղոտ մազերին,
Մերկ բազուկները—
Մինչ արմունկները—
Կապույտ մի ցանց են հյուսել այս գարնի
Ջլուտ բազուկին:
Ու տևանում ենք մենք ինչպես մարդ ու կին
Հացի են նառել կողք-կողքի, դույդով—
Կարծես բախառավոր,
Ընթրում են շտապ մեծ ախորժակով:
Է՛հ, գոհ են նրանք—երկուսն էլ բանվոր—
Գոնե մինչ վաղը չեն զգալու քաղց.
Հետո՞... դե՛հ, գիտենք նրանց նիստ ու կաց...
— Էլի նույն ջուրը և նույն ջրաղաց...

## IX

Եվ Սարգիսը մեր, շուրթերով դողդոջ,
Անկողնում պառկած,
Գաղտում է բանվոր իր ընկեր կնոջ
Մի տխուր արկած.
Ասում է՝ «Սի՛րուն, այսօր էն քանդված,
Բարրադ ու բրիշակ մեր գործարանում
Մի աղետ պայթեց,
Փոթորիկ հայթեց...
Մեր ընկերը այն—Թալիշցի Մուրին,
Որ ամուսնացավ՝ անցած գարունքին՝
Այսօր վախճանվեց...
Կես միլիոնանոց նավթ-ավազանի
Վերին գոտին էր բոլանդից հանում
Եվ մնալ հետ շտապ մեխերը գամում.
Հանկարծ, լսում ենք, ներս ոտքն ասկ

Փայտե հենակը երերաց, ճռռաց,
Եվ ծանր գոտին, որը կախվել էր,
Մուբլի կրծքին շոքից, հրոհրաց...
Ու՜հ, անիծյալ այն կառավարիչը,
Նա՛ էր մեղավոր։
—Շտապով կապը վերջին կապիչը,
Հոխորտում էր նա,
Պայմանի օրը լրացավ այսօր,
Կա՛ տուգանքի հարց,
Ով շուտ ավարտի, պիտի առանց
Վարձից ավել վարձ...

* * *

Եվ հազար մուրճեր հազար բողոքով
Աղմկում էին,
Եաշում ու ինդում որոտից ահեղ,
Կայծակից ուժեղ.
Եվ հազար բոցեր մղձկին ջանքով
Փոթորկում էին,
Շուրջը տարածում շանթերի տարափ—
Կայծերի հեղեղ։
Մուբին էլ իրա լարել էր շտապ
Ուժերը վերջին...
(Դե՜հ, գիտես էլի՜... նոր ամուսնացած
Ջահել ամուսի՜ն...)
Եվ մինչ նա ծռվեց, որ մեխը շինած
Գամի մյուս կողմից... գոռացին հանկարծ
Որոտի նման հենակները այն—
Հին ու խարխլած...
Եվ մեր խեղճ Մուբին հանգած էր արդեն»...
Ասաց ու հոգոց հանելով սրտեն,
Սարդիսը հուզված մյուս կողին ընկավ։
— Հետո՜... իսկ հետո՜...
Գոչեց Սիրունը անհանգիստ շեշտով...
—Տարանք մենք նրան մոտ հիվանդանոց...

—«Ուշ է...»—ասացին...Եվ մարդը մնաալ...
Մնաա՜լ, էն էլ ո՜նց...
Երկաթին էր ցցվել նրա գանգի մեջ,
Ջահել-ջիվանի կյանքին տվել վերջ...
—Ա՜խ, ա՜խ, Սարգիս ջան, դուցե մի օր էլ
Մեր շնչով մանի այդպես մի մեռել...
Սև է օրը մեր...
—Ինչո՞ւ սև, Մի՛քուն, ապրի քո ջանը,
Մահն ամեն տեղ է, դուրսը, ինչ տանը.
Մեր ընկերները այսօր վշտացին,
Որ Մուքելի պես ընկեր կորուցին.
Ա՜խ, նա մի ծաղիկ բողբոջ-հույսերի,
Անթաժան ընկեր մեր լավ հույզերի...
Ասաց Սարգիսը, և երկու ընկեր—
Իրար հանկարծ աղամարդ ու կին—
Ծանր վշտի տակ հնշված, քուն եկան,
Որ վաղը ծեգին
Ամենքը դիմեն իրանց գործարան.
Չէ՞ որ ապրում է և գնա չէ մեռած
Այն հոգսը դաժան—ամենօրյա քաղց...
—Ու էլ էն ջուրը, է՛լ էն չրաղաց...

## X

—Այն ի՞նչ բողոք է բռնկվել այնտեղ
Գործարաններում,
Արդյոք անտառում սոված գայլերի
Ոհմա՞կն է ոռնում,
Թե՞ փոթորիկ է, ծովի ջրերի
Հետ է պայքարում,
Գուցե ծննդի ցավերից բռնված
Մի մա՞յր է մեռնում,
Երկունքի ժամին ողբաձայն կանչում.
«Օգնե՛ք»—բառաչում.
Այն ի՞նչ է այնտեղ գործարաններում...
—Հրդե՞հ է, հրդե՞հ—կարմիր փոթորիկ—
Սուլիչներն են այն

Բացել են ողբի, հավաքի շիվան,
Որ ոտքի հանեն,
Օգնությյան տանեն
Գործարաններին մյուս բանվորներին։
Հրահրհ է ծագել մեծ ձուլարանում—
Թուջի խրանում—
Ու այս անգամ էլ մութ երևույթին,
Զուլման բռնեին...
Ձեի ծանրացը հալոցքի գալին
Չհանդուրժելով՝
Հրաբուխի նման հնդուկ է ժայթքել
Եվ ալ չնռուելը վերը ցասկևով,
Ողջը փոթորկել...
—Մեծ ալիքներ, բոցերի կռիվ
Եվ հարձակումներ բյուր հաղարավոր
Նավթերի քրքիջ, տարերքի վրեժ—
Չար ու աննգավոր...
Այրվում է օդը... հալվում է, լափվում
Բոցի շանթերից...
Ցնցվել են մարդիկ, ոռնում են մարդիկ
Այս պատահարից...
Բիրևրն են թռչում լարված աչքերի
Կարմրած կոպերից,
Խռնվել են մարդիկ, կռվում են մարդիկ
Ցատկան այս ժամին,
Ոչ տերն է ճանաչ, ո՛չ էլ ընկամին։
Երկնակամարը կապել է հաճանչ
Բոցի շանթերից հաղար լեզվանի...
Ահա և կմախքը մեծ գործարանի
Ջարդված թևերով մութի մեջ ցցված՝
—Տարերքի հարվա՜ծ...
Բայց ո՞ւր են նրանք, կռվողներն այն
Ալ փոթորկի դեմ, է՞լ չեն երևում,
Խեղդվե՞լ են արդյոք ծխերի ծովում,
Թե՞ դեռ պայքարում հնոց ալավի,
Որ չըավերվի տունը աղայի։



387—3

Չէ՞ որ իրանք էլ էքսը մերկ, սոված
Փողոց կնետվեն, և ո՞վ կտա դործ,
Փոքրիկներին ո՞վ կրերի սև հաց...
— Էլի նո՛ւյն ջուրը և նո՛ւյն ջրաղաց...

## XI

Այսպես է լինում դործարաններում,
Ա՛յ ցավի ,ախպեր,
Կյանքը հեշտությամբ մեզ չի տալիս հաց.
Թե տալիս է մեկ՝ հազար է խլում
Տվածի դիմաց...
Սուլիչներն էլ մեր սրտերն են քերում...
Ա՛խ, դուք տեսե՞լ եք ածխահանքերում
Սև-սև բեկորներ տձև դանդվածի—
Այրված ու կծկված, որ դուրս են բերում
Հրդեհից հետո բովերի անցքից
Ու շարք-շարք դարսում սև դագաղներում,
Ա՛խ, դուք տեսե՞լ եք ածխահանքերում...
Այդպես էին, հա՛, այն ընկերները,
Որոնք հալվեցին այն մթին օրը
Ջհոուկ հեղուկի դողդոջ հալոցքից։
Կանցնի ժամանակ, արդյունարերը
Կատանա դինը կրած վնասքից,
Բայց ջանի՜ տե՛րը... բայց ջանի տե՛րը...
Մասնաժողովը կգա, կը քննի
Եվ հիմունքները այս մեծ աղետի
Անշուշտ կդտնի.
Գուցե և ցավոտ հանդի այն հարցին,
Թե ինչպե՞ս անի,
Որ չը կրկնվեն աղետներն այս—
Ադայի համար անվերջ պատուհաս...
Կխորհի, կերթա ցավը չրուժած...
— Դարձյալ նույն ջուրը, և նույն ջրաղաց...

Ես ձեզ երգեցի բանվորի օրը—
Նրա արևոտ հաց ...
Ես ձեզ երգեցի իմ մերկ եղբորը—
Նրա նիստ ու կաց.
Խաղաղ է, անշար նա իր հարկի տակ,
Առօրյա կյանքի լուին դադաղում
Իր վիշտն է թաղում,
Ինչպես մի լալկան կաթիկաթող առու,
Որը կես ճամփին կորած, մոլորված
Ցամքում է հողում։
Բայց դուք տեսե՞լ եք, տեսե՞լ եք նրան
Ջայրույթի ժամին,
Երբ մռնչում է վանդակը փշրած
Առյուծի նման...
—Թող լայի այն ժամ նրա թշնամին...
Կայծակաբեր է նա, որին թե զարկես՝
Կայծեր կը ցայտեն կրակ աչքերից.
Նա երկնած սև ամպ, որը թե հուզես՝
Կայծակ կվիժի ցասկոտ ոռնգներից...
Նյութի սարսուռը, որքան էլ զրկված
Առօրյա կյանքի լի բարիքներից,
Այնքան նա հարուստ նուռն տենչերով,
Մարտումների արյան վազքերով,
Որքան լռակյաց քաղցի օրերում՝
Այնքան անողոք շանթ ու փոթորկի
Երկնած ցավերում...
—Եվ Ի՛ղ այս անգամ բանի մոլեգնած
Բանվորի ջուրը և իր ջրաղաց...

## I

### ՓՈՔՈՐԻԿԻ ԵՐԴԸ

*Մտա՛ այտանդ փոքրուկիկու ձեր աբրանքը,*
*Վրդովելու ձեր անդորրը խաղաղ կյանքին,*
*Մտա՛ այտանդ սասանելու փուռ հիմքերը*
*Նախնյաց ու գարշ ձեր հին շենքի.*
*Դե՛հ, վե՛ր կացեք, ով քնած է մեռածի պես,*
*Ով չէ՛ ուզում, որ կուլ գնա այս հոսանքին,*
*Հե՛յ, վե՛ր կացեք, ով ուժ ու բախտ ունի ինձ պես.*
*Ով չէ ուզում կյանքը զոհել մեծ փորձանքին...*
*Լսո՞ւմ եք դուք, ահա այնտանդ որոտն է հասս*
*Իր սուր նիզը երկրի կրծքին մխում բախտով,*
*Ցասումով լի երկնած ոդու վրեժն է այս—*
*Երկնած ցասով ու սարսափով:*
*Դե՛հ, վե՛ր կացեք, ով քնած է մեռածի պես,*
*Ով չէ՛ ուզում, որ կուլ գնա այս հոսանքին.*
*Հե՛յ, վե՛ր կացեք, ով ուժ ու բախտ ունի ինձ պես*
*Նվ ծով-կարոտ՝ այցի գալու ձեզ Աշխարքին»...*

## II

*Ահա այս երգով մտավ մեծ այդին*
*Մռանը գարբին,*
*Ուր ջահել մի խումբ հավաքում ուներ*
*Ձերնկվա ժամին.*
*Ժողովվել էին հետս մի այգում,*
*Թև ինչպես անեն,*
*Գործատներին գրած պահանջը*
*Համերաշխ տանեն...*
*Ու այտանդ է նա—Մռանը գարբին,*
*Երգը շրթունքին,*
*Քանդի, ուր ժողով՝ այնտանդ է նա միշտ—*
*Ամենքի հոգին:*
*Այտանդ են, ահա, Բադրանն ու Մխիան,*

Մելիքն ու Կորան, չորս հին ընկերներ—
Կյանքի քարքարոտ ուղիներն անցած
Ջորս ժիր անիվներ։
Այստեղ են նա՛և Նուշիկն ու Նինան,
Սաթոն ու Վերան,
Որոնք շա՛տ վտանգ, շա՛տ ցավ ու տանջանք
Քաջությամբ տարան։
Ու այստեղ է նա— Մոսևը դարբին,
Երգը շրթունքին.
Այստեղ է նա միշտ, բանվորի նա խրճ—
Ամենքի հոգին։

## III

Դեռ չեմ մոռացել նրան, իմ ընկեր,
Նա մի լեռ-հասակ,
Որի շանթահար, վայրագ աչքերից
Կրակն էր ցայտում,
Ջահել ու առույգ մկանուներից
Արյուն կաթկթում։
Նեղ օրերի զոհ, դյուղի բիրտ զավակ,
Կարիքը նրան
Քշել էր, բերել հեռու մի քաղաք—
Դևպի գործարան.
Կյանքի այն քուրան, ուր հոգին ու գրկանք—
Երկու ընկերներ—
Սնվում են մի տեղ և առնում հասակ՝
Որպես մի մորից ծնվուծ զավակներ։
Եկել էր քաղաք
Զուլվելու ժիսր այն հոսանքի մեջ,
Ուր կյանքն է կռիվ, կռիվը անվերջ...
Շատ ուշ և ապա դյուղի այս տղան
Փորձվել էր, դարձել կերտուած մի տիտան։
Քուրան իր կրակով,
Մուրճը կուռ գարկով
Մենեցին նրան խիզախ մի ոգի
Եվ պատրաստեցին գիտակից կյանքի։

Ես տեսա նրան սալի մոտ կանգնած՝
Կռանը ձեռքին,
Դեմքը առնական ու հաստնացած
Եվ խորհրդավոր գծերը դեմքի
Իմաստ ստացած...
Եվ հիացմունքից թնդաց իմ հոգին.
Սա այն զրկանքի որդի՞ն էր միթե—
Նկած կարիքից,
Որի շանթահար, վայրագ աչքերից
Կրակն էր ցայտում,
Որի ամրակուռ հաստ բազուկներից
Արյուն կաթկաթում...
Մուրճը իր ջանքով,
Սալն իր բողոքով
Կռեցին նրան կայծակի մի կամք,
Որոտող ոգի,
Եվ դարձավ ինքը դարբինն իր կյանքի։
Դեռ չեմ մոռացել այն կամքը կայծակ,
Նռանդը հզոր,
Դեռ չեմ մոռացել ես այն հերոսին
Խոսքը գործի տակ,
Գործը կռվի մեջ՝ և մինչև այսօր...

## IV

Ա՛յ իմ ջինջ աղբյուր ոգևորության—
Երկունքի զավակ,
Ես քո զրկանքը ամբողջ ծանրությամբ
Մեջքիս չե՛մ կրել,
Բայց զգացել եմ նրա վհուկյուն,
Նրա խորության
Եվ պատկառանքով սիրել ու գգվել
Նրան իմ երգում.
Ու թեև քեզ պես ես էլ եմ այրվել
Խոկման կրակով,
Ես էլ եմ ապրել զոռող տանջանքով,

Բայց դեռ փրկության զոհի սեղանին
Մեծ զոհ չեմ տվել...
Ների՛ր ինձ, եղբայր, քո ցավի երգչին,
Մեծահոգաբար։
Ի՞նչ է իմ տված... կաթիլ ցող միայն
Ամպերից իջած,
Որից հազիվ թե սփոփում զգար
Հոգին ծարաված...
Կամ ի՞նչ մի թեթև վերքը, կամ սպին,
Որը առնում ես մաքառման ժամին.
Վե՞րք եմ ասում ես,
Որը սրի պես
Ցնցեր ու շանթեր վհատած սրտեր.
Վե՞րք եմ ասում ես,
Որը զարդարեր ճակատ ու երես
Եվ ես կուզեի մոտալուտ կյանքի
Զոհի սեղանին այրվեր իմ հոգին,
Որից և՛ սնունդ,
Ե՛վ հասակ առներ մի նորեկ սերունդ։
Այսպես է կյանքը...
Մինչև հատիկը հողում չի մեռնում՝
Մենակը հազարի պտուղ չի բերում...

## V

Տափարակ դաշտում մայրաքաղաքի
Ուր հորիզոնն է մեջքիցը կքվել—
Երկիրը դրկել՝
Ընկած էր այգին։
Կանաչի միջից գարնան ծաղիկներ,
Որ գեղեցիկ են մայիս օրերին՝
Ողջունում էին կարծես հյուրերին։
Մի տեղ ալ-պուտեր մեղմ օրորվելով
Թևեն գնիյուռից,
Ալ դրոշի պես ծածանվում էին
Կանաչ խոտերից.
Այլ տեղ մեխակի կարմիր թերթիկներ

Ժպտում են նազով սև-բանվորներին,
Կարծես թե հևոյից պարպելով թևեր
Ողջագուրանքով ասելիս լինեն.
— Ձեր ծաղիկն ենք մենք, ուրիշ ոչ որի...
Եվ ընկերները մոտ քան հոգի—
Սև բլուզներով
Լայնեզր գլխարկներ քաշած աչքերին՝
Կանաչ այգու մեջ շաղով ու ցողով
Լուռ ապառում են մյուս ընկերներին՝
Գան, բացեն ժողով։
Ահա՛ մի ծերուկ, առողջ, այնպարզ,
Կողին թինկ ուված՝
Խորհում է անթարթ, խորհում անթառամած...
Մյուսը մի չահել՝ ամրողջ խրանով
Մալ խառնի ձգված՝
Ծառերի միջից ամպերն է պնդում...
Երրորդը ատր-ատր խոսում, համոզում
Իր ընկերներին, թե ի՛նչպես աննեն՝
Գործատերերին երևոին գարկած
Պահանջը ասննեն։
Խոսում են, վիճում, հուզվում փրփրած,
Մինչ կոշիկները փոշիում կորած
Հայտնվում են ահա Ասատն ու Մարոն
Լյոլյան ու Փառոն...

## VI

— Ահա և նրանք, ընկերներ,— խոսաց
Մոսևոր Հանկարծ.
Հայտնում եմ մեր այս ժողովը բացված՝
Դրե՛ք օրակարգ...
— Այսօր լինելով ժողովն արտակարգ,
Մեկայն բանբերի մասին կխոսանք,
Մենք մատալ Մխեան
Փոթորկի նման.
Ու չսպասելով ուրիշին ինչ կասի—
Տեղից վեր թռավ՝
— Ընկերնե՛ր, ասավ,

«Հյուրուհա» կոչված գործարանի տերն
Այնքա՜ն հղփացավ,
Այնքա՜ն լրբացավ,
Որ բանվորներին արդար պահանջին
Երեկ նա հայտնեց խիստ ու շեշտակի,
Թե՝ «գործարանը կամ պիտի փակեմ,
Կամ բանվորներիդ կեսը արձակեմ...
Իսկ ինչ ամենքդ կուզեք աշխատել՝
Օրավարձերդ պիտի կրճատել...».
Ասե՛ք, ընկերնե՛ր,
Այս ծաղրը լսիրշ ի՞նչ անուն ունի:
Իր գավակներին Մխրոնը ընկեր,
Կամ Նեստորը ծեր
Սովից ո՞ւր տանեն:
Եթե մեր արդար, համեստ պահանջից
Մերոնք նահանջեն,
Բաս, սովն է եկել
Մեր վերին չորքե...
Ով խոսել ունի՝ թող հիմի խոսի,
Նա իմս ասի...
—Ընկերնե՛ր, ղեկավար ձայնը Սառայի,
Թարմացնող, հնչուն զանգակի նման.
Մենք, ընտրյալներս, այսօր դիմեցինք
«Կռանը» գործարան.
Մեր պահանջները մերժեց Բերգ ագան.
Այն էլ ծաղրելով. ասում է՝ «մի՞թե
Տղամարդ չկար՝ կին ուղարկեցիք...»:
Մենք չորս պատվիրակ չորս գործարանի
Հայտնում ենք կամքը մեր ընկերներին—
Գործադո՞ւլ լինի...
—Գործադո՞ւլ լինի, կորչե՜ն ճնշողներ,
Բոլոր հարեւաններ:
Հուզվեցին հանկարծ փոթորկի նման
Ալեկոծ ձայներ:
— Գործադուլը պիտ ընդհանուր լինի,
Ռումբի պես պայթեց ձայնը Մոսեի.

Թող զգան նրանք, ին ի՛նչ ասել է
Զրկվել այսօրից
Հավերժականներից։
—Այդ քիչ է նրանց, պռատց Արշիլը
Մեծամասնական.
Մա՛հ լինի նրան, ով առաջինը
Փակի գործարան,
Ով մեզ այնտեղից,
Մեր օթևանից
Նետում է փողոց.
Իբր չկա գործ...
Մեզ մահ ուզողին—մահը պատասխան,
Թող իմ բաժինը լինի կախաղան—
Պիտ մնանի ապրան...
—Սխալ է, ընկե՛ր, զանգակի նման
Ղողանջից նորից կանացի մի ձայն։—
Նայեմ՝ խոսողն է գարձյալ իմ Սառան.
— Անհատի մահով չարիքը երբեք
Չի՛ անհետանա,
Մենք կռիվ ունենք դասակարգի դեմ...
Ես միանում եմ Մոսես ընկերին՝
Կոչ անել բոլոր գործարաններին,
Հայտնել գործադուլ.
Թող զգան ապագը, ին ի՛նչ ասել է
Զրկվել այսօրից
Հավերժականներից։

## VII

Եվ հրդեհի պես օդում մոլեգնած
Բողոքի ճիչեր պայթեցին հանկարծ.
— Գործադո՛ւլ լինի, թողե՛ք աշխատանք.
Հազար կոկորդից մի ձայնի նման
Պոռացին հուզված։
Եվ մի վայրկյանում, ուր հազար ձեռքեր
Ալիքի նման վեհորկում էին,
Ուր հազար մուրճեր ու մեքենաներ

Աղյուծի նման հոնդում էին,
Կանդ առան հանկարծ։
«Աշխատանք» կոչված մեծ գործարանի
Սուլիչը խրոխտ, ազդանշանող
Քաղաքածայրի գործարաններին
Գոռում է բանիող։
Այն ո՞վ է ոռնում և այնքան ողորմ,
Ի՞նչ է պատահել, այն ո՞ւմ են թաղում,
Ո՞ւմ տունը քանդում, ո՞ւմ տունը շինում,
Ո՞վ է ո՛ւմ շանթել...
— Այն գործարանի երակն է պայթել,
Ժամացույցի պես լարված ու սարքին,
Կյանքը փոթորկող առժամ կանգ առել
Ու տեղի տվել մի այլ փոթորկի։
Մեխանիզմներն էլ դորշ ծխի միջից
Առաջվա նման հրաբուխ չեն ժայթքում,
Ինդանոթի պես ցցված երախից
Էլ հուր չի՛ պայթում։
Եվ փոկերը խենթ, սառած, շվարուն,
Փայտե ձողերի փաթվել են վզով,
Թուլացել են մեզի ու էլ չեն պարում,
Էլ չեն մրրկում առաջվա հույզով.
Ողջը լռել է, ողջը համրացել.
Նման քաղաքին առասպելական,
Ասես քարացել
Ահեղ նզովքից մարդարեական...

## VIII

Եվ Մարսելյողը որսի նման
Ինդաց օդի մեջ,
Եվ օդը երգից, երաժշտության
Ալիքների տակ,
Եվ ամեն մեկիս աչքերը վառված—
Կարմիր արևփակ—
Քայլում ենք առաջ...

Եվ ուր որ գնում՝ մեր ստիպն տակ
Մլում է կանաչ...
Եվ դրոշները ձեռքիս պարզած—
Կարմիր փոթորիկ—
Հրդեհի նման ծփում են հուզված
Ալիք առ ալիք.
Հոգին ձգտում է դնալ վայրեր ազատ,
Դնալ հաղթանակ,
Եվ թվում այնպես, թե ողջ բնությունն՝
Աղրնտակ, գետակ,
Զայնակցում են մեզ մարտական հիմնի
Ալիքների տակ։
Մեր շուրջը ահեղ, երգերի հեղեղ...
Ոչ հետս այնտեղ
Օձը թաքնված գրասենյակում,
Լսելով թափը նվաճող երգի՝
Սոսկում է, ճնշվում, կծկվում, դալարվում,
Բայց ուշքի գալով, շտապում դնալի
Ասիկանատուն...
Օ՛, այս ննդ իժից երբնք չեն վախնալ
Անվնհներ Միխան, Մելիքն ու Կոլան—
Որդիքն վաճառի—
Ուղղում են ամբոխն նոնք լեռան
Ազատ միտինգի.
Ու այստեղ է նա՝ Մոսկոք դարբինն—
Երգը շրթունքին։
Այստեղ է նա միշտ, բանվորի նա խնդճ—
Ամենքի հոգին։

## IX

Հետս Մախաիլ լեռան նոնտեմ—
Քաոսն ձախ թևում—
Ծով դլուխներն ծփում է ալիք—
Կարմիր փոթորիկ.
Ալ դրոշների թավիշն է ճոճում,
Այն ո՞ւմ հետ վիճում,

Մինչ այս ու այն տեղ սրտերն են վառվել.
Թնդում են ճառեր...
Ահա բեմ ելած Մոսեսը դարբին—
Ամենքի հոգին,
Որտեղ ձայնով ինդում է, խոսում
Փրփուր շրթունքին.
Եվ ուժեղ ձեռքի թափառ մի շարժում՝
Առաջ է քաշում
Իր կողքին կանգնած Սարգիս բանվորին,
Ցույնում ամենքին.
—Ընկերնե՛ր նայե՛ք, ահա սա մարդը,
Որ երեկ առտչ
Առույգ էր, ջահել,
Այսօր կբվել է, մեջքից ծալվել ողջ
Ու դարձել ահել.
Ահա, ընկերնե՛ր, ովքը գործատեր
Այն շար մարդուկի,
Որ ամեն մեկիս կուզի ենթարկել
Սրա վիճակին:
Իմն ուզում եք, որ այս դրության
Այսօրից տանք վե՞րջ...
Ու դեռ խոսքն ինչ՝
Ցնցվեց գետինը խումբ կոպակների
Սրարշավ դոփից,
Կարծես երկինքը փլվեց գլխի վեր
Նրանց արշավից:
Փոշու մեջ կորած ձիանելը խեղճ,
Կայծող պայտերով,
Մի ակնթարթում նետվեցին միտինգ
Ճոճվող սրերով...
Ու հետևանքը՝ մահ ու կատորած...
Մարդահատակն կանաչ ճմլած...
Բայց ո՞ւր է Մոսես. մի՞թե նա մնաց
Իր ընկերներով.
Ո՞ւր անվախ Միխան, Ջաբարն ու Բադդանը
Իրանց երդնուվ:
— Ձերբակալվեցին այդ օրը նրանք
Եվ խուզարկվեցին.

Ու հետևա՞նքը... Ա՜խ, հետևանք...
Բանտ ու շղթաներ... Սիբի՛ր, աքսորանք։

## X

Անցան շաբաթներ և կռվին համառ
Տեղի ավելին, իրար միջնային
Երկու ուժ համառ։
Չկար Մոսևը, Մելիքն ու Կորան,
Միևան ղեկավար.
Բանտումն են նույնպես Տատյանան, Վերան
Եվ վիրավորված Սառան ու Դորան։
Մնջ ընկան վախկոտ ծերուկ բանվորներ,
Բանթողը պայքից,
Շարժումի ելավ նորից գործարան...
Էլի բուրժուան, բուրժուան «հաղթեց»։
Գորշ ծխի միջից, գոլ շոգու միջից
Այն ո՞վ է սուլում ծոր խողովակի
Խեղդող ոլորտից.
Սուլիչն է սուլում ու սխուր երգում
Վիրավոր սրտից.
—«Վե՛ր կաց, արթնացի՛ր, բանվոր ժողովուրդ,
Գնա՛ գործարան,
Քե՛ղ է սպասում քո հարուստ աղան...
Մեջքիդ հյութերը, մկանուներիդ,
Քե՛ղ չեն պատկանում, գնա՛ գործարան,
Քե՛ղ է սպասում քո հարուստ աղան...
Վարձդ օրական մի մանեթ միայն,
Գնա՛ գործարան,
Քեղ է սպասում քո հարուստ աղան...
Սուլիչն է սուլում...
Վե՛ր կաց, արթնացի՛ր, բանվոր ժողովուրդ...
Նրն չդնաս հիմա գործարան,
Սովից կմեռնենք ես՛ դո՛ւ, ես՛ աղան...»

* * *

Նախանձում ենք ձեզ ողջ և անվնաս
Մնացածներս—
Խորտակված նավի այս բեկորներս...
Մեր լավ ընկերներ,
Առյուծ-անցյալի ոգեշունչ լարեր,
Հեռացաք մեզնից
Եվ ամայություն տիրեց մեր հոգուն,
Նայում ենք մեր շուրջ և ինչ ենք տեսնում
Այս մեղկ օրերին...
Անտարբեր ու գաղջ դեմքեր անճանաչ՝
Թե՛ աշխատելիս, թե՛ մութ պիշերին
Մենք ձե՛զ ենք հիշում, ա՛յ լավ ընկերներ,
Ու քաշում հառաչ...
Ա՛խ, երանի թե ասվերներդ ձեր
Այս դատարկության լքման օրերին
Մի վայրկյան նորից երևան գային,
Անգույն այս կյանքին փոքրոգիների
Մի խմաստ տային։
Ինչպես արևի ճառագայթները,
Որ շողշողում են գույներով հազար,
Այնպես էլ անմահ ձեր հաղթ գործերը
Շողում են ահա հուշերով պայծառ
Ու ջերմացնում մեզ։
Արևի՛ որդիք, նախանձո՞ւմ ենք ձեզ...
Նախանձում ենք ձեզ— ազատյալներիդ
Եվ մութ բանտերում տառապյալներիդ,
Որ թեև այնտեղ անվերջ կտանջվիք՝
Գոնե հավատով ընկերներ ունիք՝
Զգուող ու թոշող դեպի կյանքը վեր.
Մինչ մենք... մենք, ազատ մնացածներս,
Խեղդվում ենք ճնշող այս մթնոլորտի
Թույն մղձավանջում
Ու... նախանձում ձեզ...

Բացել է դուռը բանտապետը շար
Եւ նրան է հրում բանտարկվածներին.
Նրա ժանտ դեմքն ամախոշկոր
Նման են հունի չհլուա եւ ծառին.
Հրում է մեկ-մեկ մռայլը բանտ
Եւ ետքից զարկում դուռը երկաթի:
Բանտի խորքերում սխուր պնդում են
Եղիանները հին,
Ծոլ լռության մեջ լսում է ահա
Մի նոր տխրադին.
Մի նոր տխրադին, որ ամենքի էլ
Հուզում է հոգին.
«Վերջալույս է. մառայլ, անշող,
Բանտի խորքում խուլ շշուկ.
Ո՞րտեղից էր— սիրտը մաշող
Եղիանների լռից աղաչ
Եվ հեծեծանք տխուր մի նոր,
Պայմից ճնշված մի ծիծաղ.
Օ՜, ան՛ա կացնի, չխանգարենք
Ճիշը հոգու այն խեղճի:
Ա՜խ, հենց հիմա շղթան կրած
Մտածում է խորտակել,
Օրերն անցած, կրոնքը շորթած
Մի նոր կյանքով նորոգել:
Վերջալույս է. մառայլ, անշող,
Բանտի խորքում խուլ շշուկ,
Որտեղի՞ց էր— սիրտը մաշող
Եղիանների լռից աղաչ...»:
Նրում էր այսպես Մուսեր հոգնած,
Ինքն էլ հուզվում.
Օրվա վշտերից շղթեր լարված
Հանգիստ են ուզում.
Ամպն ո՞վ է այն, որ բանտի խցում
Իր շղթաների հետ է պատում...
— Զարթիր, ընկեր... դեռ, լսիր նրան,
Թե ի՛նչ է ասում.

«Ամբողջ իմ կյանքում հնչ դու, իմ շղթա,
Տանջվել եմ միայն... մտածում էի
Ամուսնանալ, բայց... ահա քեզ գտա,
Այժմ մարդիկ ինձ քեզ հետ կապեցին,
Եվ պահակեցին.
Դիշերները ողջ քեզ հետ եմ միայն
Ես սիրախոսում,
Քեզ կանչում. արի, պահակնե՛ր միասին,
Անդին ամուսին.
Ես կը ծածկեմ քեզ փափուկ վերմակով,
Որ դու չմրսես,
Կը փայփայեմ, որ ինձ հավատարիմ
Մշտապես լինես.
Չէի՞ հանաշում քեզ, ա՛յ իմ շղթա,
Դու ինձ ո՞նց գտար,
Մի ասա՛, ասա՛, էդ ո՞նց իմացար,
Որ Ջաքարն եմ ես.
Էդ ո՞նց իմացար, որ քեզ կյանք տվող
Ջաքարն եմ դարբին,
Ահա թե ինչո՛ւ, ընկեր իմ անգին,
Դու ինձ փաթաթվել, ուրիս ես փարվել...
Ահա թե ինչու այդպես անբաժան—
Դու սիրում ես ինձ խանդաղատագին։
Օ՛, իմ սիրելի,
Գիտեմ, քչերն են պատվիդ արժանի,
Գիտեմ, որ դու ինձ չես դավաճանի,
Դե՛, սխուր ժամին
Այնպե՛ս դու երգիր, որ քունս տանի»...
Ասաց ու զարկեց իր շղթաների
Սրտի թելերին.
Եվ օղակները, որ ամեն մեկը
Տարբեր ու տարբեր հնչյուն ունեին,
Հնչեցին մի երգ,
Երաժշտային մի անուշ համերգ...
Քնեց Ջաքարը,
Ընկել էր կրծքից վշտերի քարը։



387—4

Էտապն է գնում անապատներում...
Անհայտ ճամփերով— հեռո՜ւ ուղիներ...

* * *

«Գնա՛ք բարով ու գա՛ք բարով,
Մեր ընկերներ,
Ազատ խոսքի— մեծ հասանքի
Մուննաթիկներ։
Գնա՛ք բարով ու գա՛ք բարով,
Մեր ընկերներ,
Որ ուղ դրիք փուշի աշխարհ՝
Ու ձեր ուղի փուշիներից
վարդեր ծլան մարդոց համար...»։
Այսպես երգեցինք ողջ և անվնաս
Մնացածներս,
Խորտակված նավի մեղկ բնակիներս։
Ու շատ չի անցավ, առացանք նամակ
Ընկեր Առուչից
Մենք՝ ճնշվածներս...
Խոսքն էր արիուն, հույսի արշալույս
Նվ նոանդ շնչող.
Հյուսիսափայլի ճաճանչների լույս,
Որ մեռած կյանքին նոր կյանք է շնչում։
Մեղ թվաց այնպես, թե կանաչել է
Սիբիրն ամբողջ,
Հողը պճնվել ու բնությունոտովել
Իր լեռներով ողջ.
Մեղ այնպես թվաց, որ մեծ Սիբիրի
Գետերը անծայր
Հալչող ձյուններից հեղել են դարձել,
Լեռներով անոնք։
Ու եկան նրանք՝ ընկերները մեր—
Ոնց երկնած ամպեր.
Ու որոտ ճայինց կրծքերը նրանց—
Ահեղ փոթորիկ...
— Հեղափոխության հուժկու ծովերի
Կարմիր էր ալիք...։

# 1916—1917

## ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

### I

Մտել եմ ահա մի նորեկ աշխարհ—
Մտել մի աքանչ հեքիաթի դռնով.
Այստեղ ամեն ինչ նո՛ր է ինձ համար—
Նոր ու կատարյալ իր վեհությունով.
Արևը այստեղ փայլում է թեև
Առաջվա շուքով,
Ամպերը գոհար ժպտում, ծիծաղում
Գեղ ու համայքով.
Մեր կովող գետերն փոթորկող, ահեղ,
Մեր անտառները թավամարս, շքեղ,
Թեև խոսում են առաջվան հանգով՝
Բայց կյանքն է ուրիշ, մարդիկը մի այլ
Ու էլ վաղեմի չեն նման իրար.
Մի հեքիաթ է այս, տևախլ աննման,
Ուր հազար-հազար
Տասնյակ հարկանի տներ ու շենքեր
Նայում են իրար ախտանի նման.
Այստեղ ամեն տուն և ամեն մի շենք
Մի-մի քաղաք է, մեծ ու փառաշուն,
Ամեն մի փողոց՝ ծով համատարած,
Ամեն տանիքի արևը բազմած...
Հրե՜ն քաղաքի հեռածայրերում
Շարելշար, հպարտ, դեղնցիկ, սիրուն
Գործարաններն են վեհապանծ իշխում,
Վերամբարձ գլխով աշտարակներից
Լույսեր են բաշխում.

Հրե՜ն մաքրաշեն ջրերի հույզեր,
Կանաչ պուրակներ և ծաղկանոցներ,
Ամեն մի շենքի և գործարանի
Փարթամքն են կազմում.
Եվ մարդիկ այստեղ ամենքն են բանվոր
Եվ աշխատավոր,
Ուր չկան այլևս ոչ միլիոնատեր
Եվ ոչ չքավոր,
Այստեղ ամենքն էլ ընկեր-բախտավոր,
Իրար հավասար
Եվ մեկը՝ հազար։

## II

Մի հեքիաթ է այս, մի նորեկ աշխարհ...
Եվ ես աչքերիս կուզեմ հավատալ.
Մի՞թե երեկվա գառնուկն և գայլ,
Առյուծ և այծյամ վերացան իսպառ.
Այս ի՜նչպես, ի՜նչպես...
Այս ի՜նչ փոթորիկ, մրրիկ հեռատես,
Երկրաշարժ ահեղ,
Անողոք հեղեղ
Քանդեց, ավերեց կարդերն անցյալի
Եվ հավասարեց հողի ու ջրի.
Այս ի՜նչ հզոր ձեռք փլեց, խորտակեց
Շահագործության հիմնաքարերն այն,
Որ այսքա՜ն տարի,
Որ այսքա՜ն տարի
Ճնշել էր մարդուն քրտինք-արյունի.
Ադամ գայլերը ո՜ւր են, ո՜ւր, այսպես,
Այս ի՜նչպես, ի՜նչպես...
Զարթին այնքան եռուն, խտացած
Եվ արմատացած,
Հավիտենական դարերով բարդված
Նախանձը մարդկանց,
Ուր մարդը մարդու համար գայլ մնայի՞ն
Մի՞թե վերջ առան,
Մի՞թե վերջ առան...

Տիրակալության, ընչասիրության
Այն քաղցը ագահ,
Որ մարդոց արյան հաճույքն է միայն,
Ի՞նչպես վերացան,
Ի՞նչպես վերացան...
Թե՞ երկրագունդը մեր այնքան փխրուն
Մի նորնկ սիրուն,
Ազնիվ մետաղից, հոյակապ քարից
Քանդակվեց նորից.
Թե՞ այն բյուրավոր արհավիրքներից—
Համաշխարհային պատերազմներից,
Որից լեռնացավ հրդեհի մոխիր,
Որից ցնցվեցին երկինքն ու երկիր,
Պայթից ու ժայթքից մի վրեժ արդար
Ի հատուցումն գործերի վատթար,
Այս ի՞նչպես, ի՞նչպես,
Ի՞նչ հրաշք է վես...

## III

Ես ես կանգնել եմ այս նոր աշխարհի—
Հրաշքի առաջ,
Ու չեմ զարմանում, որ այն լեռները
Ջուլլ-ոսկիների
Կեղեքվածներիս արյան է հառաչ.
Ոսկիները այն,
Որ ծառայում են այժմ արձաններին
Պատվանդան միայն,
Որոնք ձգված են լայն փողոցներում
Կարգով շարեշար,
Նորնկ սերնդին հին-հին գործերը
Պատմելու համար.
Ու չեմ զարմանում, որ այսօրը մեր
Մոտիկ անցյալի մի բնկեր է միայն,
Ուր կան նոր կռիվ, նոր նվաճումներ,
Կյանքը հաստնելու կատարելության.
Կյանքը այն դժվար, որ միշտ է պայքար
Նոր մարդու համար.

Մարդու, որ կռվող հասվածն է միայն
Տարերք-բնության,
Ուր ուղեղը մեր աճուն, հարաճուն
Պիտ արագությամբ դործի, կայծակի
Նվ տա նոր ձևեր, նոր իմաստ կյանքին.
Գործի, առնչվի գերմարդկային
Խանդավառությամբ,
Նվ ինչ էլ ունի, շնորհք ու եռանդ,
Հանճար ու տաղանդ,
Զոհի հաղթանքին առնչվագործության։
Օ՜, դու, հաղթանակ մարդկային ջանքի,
Լարված ջղանքի,
Օ՜ դու, հաղթանակ վնհ աշխատանքի
Նվ ուժեղ կամքի,
Հաղթանա՜կ ազնիվ. անհա՜շտ, անհանգիստ,
Շարժուն հար բնդ միշտ,
Քո հետևանքը ա՛յս պիտի լիներ,
Ա՛յս պիտի լիներ օրըդ այսօրվան,
Ա՛յս է կյանքը մեր.
Մինչև ցորենը հողում չի մեռնում,
Մևկը հազարի պտուղ չի բերում.
Մինչ որ մարդկային հերոսը ցեղի
Կռվում չի ընկնում՝
Հավասարության և եղբայրության
Չի հարթվում ուղին։

## IV

Նվ ես հեքիաթի շեմքին խոնարհած՝
Հիանում եմ լոկ այս նոր աշխարհով.
Մի աշխարհ չքնաղ, որ այիք առած՝
Թռում է, շարժվում, որպես նոսն ծով.
— Է՛յ հազա՜ր, հազա՜ր ալսոսոտրիչներ,
Որ այդպես արագ թռչում եք, սլանում,
Ո՞ւմ եք պատկանում.
— Հանրապետությա՜ն...
Է՛յ, հազա՜ր, հազա՜ր լուսյակ էլեկտրյան,

Որ պիշևրնևրը արև ևք վառում,
Ո՞ւմ ևք պատկանում.
— Հավասարությո՞ւն...
— Եվ դուք, աշխարհի գեղեցկուհիներ,
Հաղի մևքենաներ ու գործարաններ,
Որ քար ու հողից բարիք ևք ծնում,
Ո՞ւմ ևք պատկանում.
— Բանվոր մարդկությո՞ւն...
— Դուք, նավևր, երևր, երկաթուղիներ,
Հանքևր ու ցանքևր ապատ աշխարհում,
Ո՞ւմ ևք պատկանում.
— Հանո՞ւր մարդկությո՞ւն...
Համալսարաններ, աստղակայաններ,
Որ այս հեքիաթի պարծանքն ևք կազմում,
Ո՞ւմ ևք պատկանում.
— Մևկին, ամևնքին իրար հավասար—
Ուր հազարն է մևկ և մևկը՝ հազար։

## V

Տեսե՞լ ևք արդյոք վաղ արշալույսին
Նորածին կանաչ—ցողը երևսին,
Կամ ծով-լիևրում լուսաշող ամպևր
Անբիծ, անաղարտ, ինչպես կարապևներ
Կանաչների մեջ և վարդևրի մեջ
Ես տեսա այտոնդ մի ավան սիրուն,
Քաղաքից հեռու շարևշար անվևրջ
Միահարկ տևներ—շուրջը ողջ գարուն
Տևները այտոնդ բյուրևղից են ողջ,
Հույլևրի հեղեղ, արևն ընտանի.
Այտոնդ ծլում է մի սերունդ առողջ
Գևղ մանուկևներին.
Ինչպե՞ս միաձև ու պարզ են հագնված
Այս գավակները նորևկ աշխարհի,
Եվ ինչպե՞ս սիրով և ինչպե՞ս ապատ.
Աղջիկ ու տղա իրար հարապատ,
Կարծես ամևնքը մի մորից ծնված,
Մի օր մևծացած ու մի տևղ սնված,

Խաղում են կայտառ, ծլվլում սրտանց,
Նախանձ, չարություն օտար է նրանց.
Երգում են, որպես դարնան թռչուններ,
Ոչ ոք նրանցից հոգս ու ցավ չունի...
Սակայն ինչո՞ւ այս դեղ ծաղկանոցում—
Բնության ծոցում
Տեղ-տեղ փթթել են ծաղիկ հասակներ—
Պատանիների,
Ծաղիկ հասակներ, ինչպես պսակներ,
Որ շուք են տալիս դաշտերի միջին
Թավիշ կանաչին.
Ովքե՞ր են սորա, ինչո՞ւ են այստեղ,
Այս մանկանց միջին
— Նորեկ աշխարհի օդակներն են այն—
Համերաշխության,
Որ ամեն անգամ իրենց հմտությամբ
Օդնեն, աջակցեն դեռևս անփորձ
Այս մանուկներին,
Օգնեն, աջակցեն և ուսուցանեն
Մեկը ամենքին.
Որ այս հասակից մատաղ սրտի մեջ
Հավասարության և եղբայրության
Զարգանա ոգին։

## VI

Ահա և նրանք՝ գործարաններըը
Նոր սերունդների,
Ահա և նրանք՝ ատելծողներըը
Այս նոր աշխարհի,
Հոյակապ, սիրուն, ողջը ապակյա—
Լույսերի աղբյուր,
Հատակը հղկուն, հարթ ճննապակյա,
Օդը համատփյուռ.
Մտել եմ նրա կամարն դռնով—
Նման տաճարի,
Այստեղ է ծնվել, այստեղ սովոռում
Ոգին հանճարի...

Ահա և նրանք՝ ճախարակները
Ջուգահեռ շարքով,
Որպես տիտաններ՝ մարմար հիմքերին
Բազմել են կարգով,
Գործում են թափով, մրրկում արագ,
Տենդային հևքով
Եվ լանջերդ շոյում միանվագ
Հաղթական երգով։
Այստեղ չէ՛ լսվում առաջվա նման
Շռինդ ու շառաչ,
Ողջը խոնարհվել, ողջը զսպվել է
Հանճարի առաջ.
Եվ մարդու համար մեքենան անսաս
Մի զսպված գազան,
Որ ինչ ուղղություն և ինչ ընթացք տաս՝
Կըլսի անձայն։
Օ՛, գիտակցություն,
Որ խենթ մեքենան էլ մինչև անգամ
Դարձել է խոհուն ընկերը մարդկանց...
— Ներդաշնակությո՛ւն,
Որ աշխատանքի ժամերին անգամ
Լարված ջղերին հանգիստ է շնչում։
— Ջորս ժամ աշխատո՛նք.
Ուր մարդն է խոյում հաղթանքից հաղթանք։
— Համասարությո՛ւն,
Որ այս համերաշխ աշխատանքներից
Օգտվում է համայն հասարակություն,
Ապրում իրենի, ընկերի համար—
Իրար հավասար,
Ուր հազարն է մեկ և մեկը՝ հազար։

## VII

Բարդ մեքենայի խոնարհ սպասում
Բանվորն է կանգնել,
Եվ հում նյութերից թելեր է հյուսում—
Ջյունների լեռներ.
Մի րոպե, վայրկյան, մի արագ պտույտ
Եվ հյուսերը այն

Ա՛յլ մեքենայի տեսնում ես կույտ-կույտ
Ոսկերը ելան։
Ճարպիկ մեքենան բերանն է առնում
Թելերի խուրձեր,
Ծամում, կլանում և կրծքից հանում
Պատրաստի գործեր,
Նրա հարևան մեքենայի ճաղն
Վրա է հասնում,
Եվ քույա-քույա գործվածքը շարմաղ
Մալում ու գալաում.
Մալում, փաթաթում բամբակի հակեր
Պողպատ մատներով
Եվ շտապ հասցնում այլ բաժանմունքներ
Վագոնետներով...
Այսաեղ է ահա, որ կյանք է առել
Մի ուրիշ աշխարհք,
Գործում են հազար ժիր մեքենաներ—
Մեղուների շարք.
Եվ ամեն մեկը ճերմակներնի
Մի մասն է ձևում,
Կարում ու հարթում խնկացի, գլաաա
Ու՝ գործը պատրաստ։
Եվ աշխատանքը, որ բեռ էր առաջ,
Չրկանք ու տանջանք՝
Այժմ դարձել է նոր մարդու համար
Հոգու զվարճանք.
Մարդ ու մեքենա սիրով համերաշխ
Գործում են ուրախ,
Կռում ու կոփում նոր սերունդների
Ապագան չքնաղ...
Եվ այս ամենը դարձյալ իրենի—
Ընկերի համար—
Իրար հավատար,
Ուր հազարն է մեկ և մեկը՝ հազար։

## VIII

Ողջո՜ւյն ձեզ, ողջո՜ւյն, նորնիկ աշխարհի
Ապառ գավակներ,
Որ դարե՜ր, դարե՜ր ձեր մեծ հայրերի
Հարստահ ջանքեր
Այսօր պսակվեց վանեմ գործերի
Վեհ հաղթանակով,
Եվ այժմ պիտեք անցյալը հիշել
Անուշ պարծանքով։
Ողջո՜ւյն ձեզ, ողջո՜ւյն, երջանիկ գարի
Անխոնջ գավակներ,
Որ հաղթ ու անպարտ այս մեծ օրերի
Տերերն եք դարձել։
Իմ վառ խոհերին մարմնացում տվող,
Հերոսնե՛ր կարող,
Ձեզ հազար ողջույն, որ կյանքին մեր այս
Շնչեցիք իմաստ,
Եվ մարդն այսօր ազատ ու տիրող
Չէ՛ նախկին գոռոզ։
Ու ձե՛զ էլ ողջույն, կարմիր օրերի
Հրդեհի կայծեր,
Որ ձեր մեծ համրի խուվերը այրած
Եվ ընդմիշտ անդարձ՝
Մի վեհ, փառավոր ուղի եք անցել։

## IX

Հրե՜ն գալիս են կարմիր ջահերը՝
Նորնիկ աշխարհի,
Հրեն գալիս են պայծառ առտվերը
Որոնումներին.
Երկու անհեղ էլ մոել են այստեղ—
Տունը պիտույքան,
Որոշել բախտը ընթացիկ օրի
Հանրապետության։
Ա՛հ, այն դեմքերը աղնիվ ու խոհուն,
Զգոն և ուշիմ,

Ով այնքա՜ն քարի և այնքա՜ն բարի,
Ամեն մի կնճիռ և ամեն խորշում
Նրանց վիհ դեմքի պատմություն ունի.
Ու քա՜նի-քա՜նի կրել են տանջանք
Այս դեմքերը կիրթ,
Մինչ որ առել են կատարելության
Դրոշմ ու կնիք,
Որքա՜ն մաքառել ու տառապել են
Սրանց մեծ նախնիք,
Մինչ մեզ հողել են այսպիսի դեմքեր
Վիհ ու գեղեցիկ։
Ահա ամբիոն ելավ մի գիտուն,
Լրջմիտ ու խոհուն,
Առանց կրքերի և հուզումների,
Պարզ ու հյութալի, համառոտ ու լի
Իր դյուտի մասին հայտնեց ամենքին,
Ով իր հանճարեղ զորությամբ խելքի
Դահլիճը բերեց խոր համոզմունքի։
Ով ես զարմացա, որ մարդն այսօրվա
Երջանիկ ու լից,
Գո՛հ չէ այս օրից.
Որոնում է նա նո՛ր հորիզոններ
Նորից ու նորից...

## X

Գարուն է անուշ... Թարմ կանաչների
Մավալ ու ծփանք...
Այս կանաչներում ինչ որ թովչանքի
Կա դյութող հմայք,
Այս ճոխ դաշտերում հակա համերգի
Մի ջերմ փայփայանք...
Արևը այսօր ուրախությունից
Մաղերն է փռել,
Արևը հզոր իր բարձր գահից
Ալ դրոշ վառել.
Ա՜հ, այն դրոշը, որտեղ այնքա՜ն մոտ
Ով այնքա՜ն ճանաչ,

Ուզում ես թռչես ու գրկես նրա
Ամեն մի հաճանչ,
Եվ մարդն այսօրվա, որ է արարիչ
Հավատարության,
Եվ մարդը հանճար—որ է և տիպար
Վեհ գեղեցկության՝
Զուլվել է այսօր անուշ երգասան
Այս բնության հետ
Եվ դարձել նրա ներդաշնակության
Երգիչն ու պոետ։
Առողջ, հաղթանդամ և՛ ուժեղ, և՛ թարմ,
Երգ ու նվագով, պատկ ու ծաղկով
Եկել է մարդը երկաթե զույգով
Հովիտը Մարքսյան,
Տիեզերքի հետ տոնելու օրը
Մեկի մայիսյան։
Հրե՛ն շարքերը—նոր կյանքի նշան—
Ժիր մանուկների,
Որքա՛ն են նման ալիքածածան
Կանաչ հասկերի.
Ձայնով մանկական, անուշ զրնգան,
Երգում են նրանք օրհներգը կյանքի
Եվ աշխատանքի։
Հրե՛ն բանակը անխռով ու հաշտ
Ուսանողների,
Ալ գլխարկներով—ծաղիկների դաշտ—
Կարմիր պուտերի.
Եկել են նրանք հիմնը երգելու
Կյանքի մեծ երգչին
Եվ խոնարհվելու արձանի առաջ
Մեծն ուսուցչի։

## XI

Տարին մի անգամ, տարին մի անգամ
Գալիս են ահա այս հազարները
Տարին մի անգամ,
Եվ հաղթ արձանի շուրջը բոլորած,
Ջերմ ոգևորված՝

Երգում են հիմնը Հավասարության
Եվ Եղբայրության։
Երգում է մարդը, երգում բնությունն,
Ե՛վ ծառ, և՛ ծաղիկ,
Աղբերակ, գետակ, քլքլան վտակ
Ալիք առ ալիք.
Երգում են այնպես, խրոխտ և ուժգին,
Խանդավառաբար,
Կարծես մի հսկա համաշխարհային անուշ քնարից
Լինին ծորալիս այս շեշտերը հաղթ—
Ի մի բերանից։
Եվ ես, որ արդեն մի զավակն էի
Այս Նոր-Աշխարհի,
Եվ ես, որ երգող մի նուրբ լարն էի
Այս մե՛ծ քնարի՝
Չգիտեմ ինչու այնպես լացեցի
Անուշ հուզմունքից
Ու չամաչեցի, ու չամաչեցի
Ես իմ արցունքից։
Հավասարության և երջանկության
Տոնն են առնում այս հաղարներըը
Տարին մի անգամ,
Եվ հիանում ես,
Որ մեկը այստեղ սիրում է մյուսին
Հազարն նման։
Օ՛, որքա՛ն սիրուն ու սիրելի ես
Սերունդ աննման...
Գալիս են նրանք մի մարդու նման
Տարին մի անգամ,
Մեծ մարդու առաջ վկայելու այն
Ավանդ ու պատգամ,
Թե կյանքն ունի իմաստ և հմայք
Լոկ այն ժամանակ,
Երբ եսը կապրի ամենի համար—
Իրար հավասար,
Ուր հազարն է մեկ և մեկը՝ հազար։

Ահա ի կյանքը այն կարոտալից,
Որ թվում էր ինձ հետու մի երազ.
Նա, որ ևթևրի անհյուս թևևրից
Իր ձևռքն էր մեկնում և մնում անհաս՝
— Իրականությո՜ւն, իրականությո՜ւն...
Սիրել եմ կյանքը ես առաջներում,
Նրա մրրկող թափը երկրային,
Սիրել եմ նրա ուղին դժվարին
Ու երգել անվերջ իմ հին երգերում։
Սիրում եմ ահա կյանքը այսօրվա
Իրա հաղթանքով, իրա պարծանքով,
Հավերժը նրա, խինդը առօրյա,
Սիրում եմ նրա վեհ գեղեցկություն,
Նրա դրոշը կարմիր, փողփողուն,
Որ բերեց այսօր մեզ արդարություն,
Հավասարություն և եղբայրություն։
Սիրո՜ւմ եմ կյանքը, սիրո՜ւմ եմ այնպես,
Ինչպես նորահարսն իր փեսացուին,
Ինչպես ծաղիկը արևի շողին,
Ինչպես անձրևը երաշտած հողին.
Սիրո՜ւմ եմ... և, ա՜խ, մեռնել չեմ ուզում.
Չէ՞ որ նա, կյանքը, մի անուշ հուզում,
Դեռ այնքա՜ն կոխել, փոթորիկ ունի...
Բայց ինչ մեռնեմ էլ, է՜հ, այդ ի՞նչ վնաս,
Չէ՞ որ ես ևս մի հյուսն, երազ,
Այս նոր աշխարհին իմ լուման տվի,
Եղբոր համար, ընկերիս համար
Իրար հավասար—
Ուր հաղարն է մեկ և մեկը՝ հազար։

# 1920

## ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Պատանեկ կյանքիս պոեմը)

Ղորխամազովենց հարուստ այգին
Մարդահասակ փշե ցանցով—
Կանաչ յաղութ... ու նրան գին
Դեռ չէր գտել ո՛չ մի անցորդ։

Քաղաքից դուրս, տափարակում
Նա ձգվել էր ծովի նման,
Փարթամութեամբ ողջ քաղաքում
Չկար այգի նրա նման։

Վաթսուն խյավանդ ուներ նա մի,
Նման մի-մի անծայր գորգի,
Ջրով էին պտուղ գալի—
Էնքան մեծ էր էն մե՛ծ այգին։

Մալիկների Գյուլիստան էր
Ղորխամազովենց հնգիաթ-այգին,
Թե մանեիր՝ խելք կը տաներ
Բաղի բույրը, վարդն ու դյորգին։

Այգու միջին շքեղ մի տուն—
Մի դղյակ կար քարե շինքով.
Ու ապրում էր այն դղյակում
Ղորխամազովն իր ընտանիքով։

Դաղստանի՛ էր նա գավակ—
Ալեքսան-բեկ Ղորխամազովը,

Այլ և երբեմն մեծ ավազակ...
(Է՛, բոզ լալկվի էդ ասողը)։

Ասում էին՝ փախցրել էր
Մի ջահել կույս ու պարծրել կին՝,
Այնուհետև հանդիստ առել
Ու վերջ տվել ասպանդակին։

Գյուրջի աղջիկ էր տիկինը,
Մի դեղեցիկ թաստակրավի.
Ո՞վ է եղել էն մի կինը,
Որ նրա պես սիրտ գրավի։

Երգում էր նա իրենց բազի
Բլբուլներից է՛լ վատ կրքով,
Ո՞վ է եղել, որ չդողի
Իր լսողին նա իր երգով։

Ուներ դատերք դեռահասակ—
Ջորս ծաղիկներ, դյոզալ, սիրուն.
Ամեն մեկը՝ գալար պատկ,
Ամեն մեկը՝ դյուբող գարուն։

Եթևրայեն դուխ նման
Ասես մի-մի մարկիզուհի.
Էն ո՞ր ասպե՛տն էր յա՛ման
Նրանց համար կյանք չդնի...

Գարուն, ամառ, աշուն, ձմեռ
Երդն անպակաս էն դղյակում,
Իշխանազուն բարձր հյուրեր,
Վառքերի շարք՝ տան մղաքում։

Է՛լ պաշտոնիք, գուբերնատոր,
Է՛լ գեներալ ու չինովնիկ,
Է՛լ պրիստավ ու գատավոր,
Է՛լ չինովնիկ ու սլեշչի—



387—5

Ղորխմազովննց ընտանիքին
Ոնց հարազատ մի-մի անդամ,
Գալիս էին քեմփ ու երգի,
Երբ ախրանին ամեն անգամ։

* * *

Ես մի աղքատ մարդու տղա՝
Երգում էի բլբուլի պես,
Ու լսել էր հարուստ աղան
Իմ երգերը վատ ու պես-պես։

Բնաւալ մի օր նա իր այգին,
Որ ես երգեմ իր հյուրերին,
Ու վառվեց իմ ջահել հոգին,
Երբ տեսա այն սիրուհիներին։

Ու զըլեցի ձայնս վառված
Բլբուլների էն պայքարին,
Մինչ ողջ այգին հիացը գառած՝
Ականջում էր իմ երգերին։

Երգում էի ես միասին
Շրջապատված գյոզալնեռով,
— Դու մի բլբուլ ես, ինձ ասին,
Սրանք վարդեր շուրջ գույներով։

Երգում էի ես իմ հյուսած
Նրանց բաղի գովքն ու փառքը,
Ժեռ քարերի տակից բուսած
Էս աշխարհի խնդն ու շառքը...

Հանկարծ տեսա մի զույգ կաճիկ
Փորր աղջկա զույգ աչքերին.
Սիրահարվել էր նա արդեն
Ու պին պրել իմ երգերին։

Ինչ էր պատկառ այն գեղ-կույսին,
Որ արտասվեց իմ վատ երգից.

Խոցոտվել էր, դու մի՛ ասի,
Նրա սիրտը նետից վնրջից։

Այնուհետև մենք շատ հաճախ
Կնատեինք կանաչ խոտին,
Համր ու անխոս և միայն՝ «ա՛խ»...
Եվ միայն չուռ՝ ողբ-ողին։

Դալար, ճկուն, ծիլ-վաղներից
Կհյուսեինք երկու ալսակ,
Հետու դիտող շատ աչքերից
Կամենք ջահել երկու հասակ...

* * *

Ու մի օր էլ այդի եկա
Քանդ տարիս լրիվ շատած,
Ասի՝ կուզեմ ձեր աղջկան—
Մենք վաղուց ենք սիրահարված։

Միծաղեցին ու ասացին.
— «Դու մի տռված, աղբատ տղա,
Ո՞նց սիրտ առար էդպես հարցին,
Դու՝ մի կիմիմ, մենք՝ մի ազա...»։

«Մեր էս բաղի ամեն մի ծառ
Քեզնից շա՛տ է դեռ աշխատում,
Առաջ գնա հացի տո՛ր դառ՝
Հե՛տո միայն անցիր մեր տուն...»։

Ջահել էի, չգիտեի
Անհաշտ լինել երկու դասի.
Դե՛, նրանք մեծ բեգեր էին,
Մենք՝ օղլուշաղ խեղճ Մինասի...

Ու սիրածիս տարան տվին
Հարստացած մի բժշկի.
Ես չեմ հիշում, թե իր օրին
Նա մի լավ օր տեսներ թոկի՛։

Տխուր էր միշտ, թախիծ դեմքին,
Ինչպես սիրող որբևայրի.
Երևում էր խոցը վերքի
Շա՜տ էր խորունկ... սիրտը կայրի...

* * *

Անիծեցի ես այդ օրից
Ղորխամազովննց տունն ու այգին.
Ասի, ընկնեք դուք իմ օրին,
Որ սև արիր օրըս մանկինս։

Այժըմ էլ էն այգին չկա,
Տեղը ցանում են թամբաքու.
Ընտանիքը ցրիվ եկած,
Ո՛րը՝ Թիֆլիս, ո՛րը՝ Բաքու։

Դադարդյուն են ընկել նոքա
Հոկտեմբերյան քշող զամշից.
Ղորխամազովննք դն Բող սպան
Ու տրլինգ տան ավել դոմշից։

* * *

Ամեն անգամ, երբ տեսնում եմ
Նրան անցնելիս մեր փողոցով՝
Սև մաղերը ձյունով ծածկված,
Դեմքը տխո՜ւր, տխուր մի ծո՜վ...

Իրար նայում ենք աչքի տակով,
Կարծես խոսում անցյալի հետ.
Ջահելի պես կարմրատակում—
Նա՝ սիրազուրկ... ես՝ մի պոետ...

Հնքիաթ խո չէ իմ պատմությունն,
Այլ մի տխուր իրողություն.
Անցո՛րդ, եթե մտնես Գյանջա,
Կտեսնես իմ անիծած տունն։

Ո՛չ տան հիմքն է էլ երևում,
Ո՛չ էլ բարձր ցանկը փշի.
Մի ծուռ ծառ է մնն երերում—
Այն էլ վկան՝ իմ ծուխ-հուշի...

# 1 9 2 2

## ԵՐԳԸ ՔԱՌԱԹԵՎ

(Առձակ պոեմ)

### I

*Հիսուն տարի է անցել այն օրից — ուղիղ չի կես դար — երբ ես ձի մանուկ յոթը տարեկան՝ ինձ պես տասնամյոր մանուկների հետ, առաջնորդությամբ վարժուհիների, խումբ-խմբի նորից — կոռնկների շարք — ձգտում էինք մենք քաղաքից էլ դուրս դեպի Զոլագի պաշտերն այն լույս, լի ու բացօթյա և խաչատրյան գառնուկների պես թավիշ խոտերը ծաղիկների հետ խնամքով զրկած՝ կարմիր պատիկվա ազատ օդի մեջ և՛ երգում էինք, և՛ ղնգում էինք։*

*Հիսուն ձի՛գ տարի — ուղիղ չի կես դար արանից առաջ վարժուհիները շա՛տ լավ գիտեին, թե որքան կրթիչ և օգտակար է մեզ՝ մանուկներիս երկտեղ խմբով ընդարձակ դաշտը տանել Հարյուրով, երգել ու խաչատել ազատ օդի մեջ ազատ բնության, ուր պիտի կուռվեր մեր միակցության սպառազ շղթան։*

*Ես՝ գառնուկի պես ճերմակ մի մանուկ, ինքնահաճ կամքով, այլև բնությամբ անհաշտին մեկը, երգեցիկ խմբի հարյուրների մեջ միշտ ջանում էի մի բանով զատվել ու գերազանցել իմ ընկերներին. այդպես էր արդեն մանուկ բնությունը իմ՝ ըմբոստ ու մրցող։*

*Ու գլուխ էի արծաթի հնչյունով ձայնս մանկականս, օ ք տ ա վ ա բարձր[2], բոլոր մյուս երգող մանուկ ձայներից, որոնց զարմանքը, որոնց նախանձը շարժում ծիծաղով ու ղնգում նորից։*

*— Հա՛... դուք ծիծաղում, ծաղրո՞ւմ եք երգս, նախանձում ուժեղ ձայնիս էջերի՞ն... ու ես հերոսանում, խոովում եմ ինքս ինձ, ես մնում խմբից, տասը անում մոտիկ բլրակի նորին, իրը ջուր խմել ուզում առվակից, ու արծաթի-հնչուն ձայնով մանկականս ավելի վառված երգում եմ մենակ երգն իմ սիրած՝ «Ազատան աստվածո»։*

*Տեսնում եմ ինչպես խումբը կանգ առավ վարժուհու ձեռքի մի*

մեզի շարժումով, ինչպես վարժուհին ողջ ականջ դառավ և ուշքը լարեց դեպ բլրակի ձոր[3], ուր ես թաքնված քլքլան առվի քով, ինքս էլ մի աղբյուր, քլքլում էի, ու երգում էի, դգում, թե ինչպես իմ ընկերներն այն հարյուրյակի հիացքից ապշած ես-ես են նայում, դրնգան ձայնիս ալիքներն օդում փնտրում, որոնում... ու մեկ էլ տեսա բարի վարժուհին տխնում եմ ինչպես ինձ իր գիրկն առած, փոքրիկիս գրկած, ինչպես գառնուկի՝ և՛ համբուրում է, և՛ ջերմ գուրգուրում, խռովկանիս հետ խոսում, բլբլբլում. և այդպես գրկած՝ ես գառնում կրկին նրանց խառնում ինձ— այն հարյուրյակին— ինչպես հովիվը փախած գառնուկին:

## II

Հնքիաթային էր պարզ մանկությունն իմ և արկածալից պատանեկությունս... Պարտիզում՝ այգում, դուրը, գպրոցում երգով եմ ապրել, երգով էլ անվել: Գարնան սիրենի բարմ պտուկները բացվելու ժամին հոգիս երգել է նրանց ճիճերի առաջին շնչի հետ, թավիշ խոտերի, ջրջրուկների կանաչը շոյել իմ երգը մանուկ, նրանց առաջին ժպիտի ժամին:

Պզտոր ու վազուկ գարնան ջրերի ու առուների հետ երգով է մրցել, ձուլվել իմ ձայնը պատանեկական. և կույսի կուրծքը բողբոջի նման, կոկոնի նման, երբ դուրս է ցցվել կարմիր թավիշյա հագուստի տակից[4] առաջին անգամ ե՛ս եմ ողջունել այդ խնդի պայքարը իմ բարմ ու ջահել պայծառ երգերով:

Երգվում եմ ես ձեզ, մատաղ ընկերներ, մատաղ[5] հասակի հարսներ ու կույսեր, մատաղ կրծքերից շատ հառաչանքներ[6] են ականջիս հասել, երանի ասվել իմ անուշ ձայնին, իմ հնչուն երգին զգացմունքով լի, բուռմունքներով լի շա՜տ էլ ախտասել, որ անհամաչելի վայրենի եմ մի... է՜հ, թարմ ծաղիկին, բուրող ու սիրուն, էն[7] ո՞վ չի սիրի...

Կամ ջահել սիրտը անբիծ, անաղարտ սիրելու կարող, սիրուց հոացող, անզուսպ խլրտող, խենթ ու անարատ, արյունը ջահել չէ՞ որոնում է իրեն էլ ընկեր. փրփրող արյուն, նոր ու անապակ, կարմիր գինու պես էն[7] ո՞վ չի սիրի...

Ան՜ուշ, ջահել ձայն թավիշ քնարի, ջերմությամբ լեցուն, զգացմունքների բույրերից թևված, հարկավ, կսիրե՞ն...

Եվ ես չիմացա, ո՛վ որքան սիրեց, ո՛վ որքան կարմրեց գաղտուկ սիրանքից, ո՛վ քանի գիշեր անքուն անցրեց[8] ու մնաց տանջ-

ված սիրտ կրակից... Ես միայն երգիչ և երգիչ էի... դեռ հոգով մանուկ և անմատչելի ջահել, վայրենի:

Ջոլագի կանաչ դաշտերը ծաղկոտ և այգիների զառ ու վարդերը, մեր Մանաս դայու փայտե ջաղացի սրընթաց ջուրը, Թուխչի գետերը և աղբյուրները լիացան արդեն մանուկ, զրնգան երգող Թոչնակի անհոգ երգերից: Վարդերի նման շուտ շառագունող, կրակ բռնկող կույսի այտերը շա՞տ կարմրեցին այրող ու վառող[9] պատանյակ ձայնից. է՜հ... սեր էր էլի՜... ջահել պատանու, ջահել աղջկա. երգս էլ մի նետ, տվեց ու անցավ, մատաղ սրտերին մի խոց ավելցավ. ջահել արյունը վերք շա՞տ է սիրում, վերք շա՞տ է առնում, խոցեր սառանում— շուտ էլ մոռանում...

## III

Անցավ մանկություն, պատանեկություն՝ հասավ իմ օրը խոր պիտակցության, հզոր, առնական. խլրտաց իմ մեջ վառ մանկությունից խորացած ոգին, պատանեկությունից զուլած իմ արյուն. և երգս նորից, նորից սարսածվեց... Այս անգամ ո՛չ թե հողին ու ջրին, դաշտին, աղբյուրին ես նվիրեցի, ո՛չ էլ գարնան հետ իմասա սաստյած, արյունը եռող ու սեր որոնող վարդաբույր կույսին, այլ կյանքի առաջ խնճույքներից զուրկ չարքաշ բանվորին— կյանքի պինվորին:

Տեսնում էի ես սիրելուց ես զուրկ և արևից զուրկ, ամբողջ օրերով ծուխ ու մրի մեջ, կեղտում շաղախված՝ ժամանակ չունի արևին նայի, բնությամբ հրճվի, ժամանակ չունի կնոջը նայի, զավակին զրկի, սիրի, փայփայի... այլ ամբողջ օրը մռայլ շենքերի, գործարանների կամարների տակ՝ թուջի, երկաթի, համառ պողպատի հետ է նա կռվում, որ հաց վաստակի և ընտանիքը սովից ազատի...

Բիրտ գործատերը այդպես է ուզել. բանվորը պիտի ողջ օրը բանի, որ «դատարկ բանում» նա չդրտղվի. բանվորը պիտի կիսամշաց մնա[10], որ նրա միտքը այլ հաճույքներից[11] զերծ, ազատ մնա. նույնիսկ բնության գեղովը հրճվել կարող է միայն իր կինը շուայլ, աղջիկը շվայտ...[12] ու մեկ էլ ինքը ու իր բթամիտ ազան աստահակ. իսկ բանվորը... ո՛չ. «սուրբ անատունին» ո՞վ տվեց այդքան դդայու շնորհք...

Հա՜, ես զգացի անարդարությունը մարդկանց օրենքի և այն պժգալի նրանց կարգերի կազմը ծանալի... Տարերքի հույզը, բնությունը հազի, մարդկային ձայնը, արյունը ջահել[13] հույզեր են ծնում անհատի հոգում...

Իմ մեջ ի մի՛ ձուլվեց անցյալի բոլոր ուժը խտացած, ձիրքը հրաշունչ և հրաբուխի պես ժայթքեց իմ հոգու լավան բորբոքող[14], խոսքը կործանող, երգը խիստ, դաժան—շանթ ու հուր ցանող...

Հարվածեց նա հենց առաջին անգամ հզոր իր շանթով պորտաբույծների գոռ պալատներին, և հրդհրդալով տապալվեցին այն քարի պալատները, ուր բույն էր դրել սարդի ոհմակը բյուր ոստայններով:

Ջարկեց նա ոսկուց ձուլված գահերին և խորտակվեցին բազ ու պատկներ, բազ ու բազուհին. ու մարդեց հունը երգիս հոսանքի և այդ[15] հոսանքում լայն ու ավերիչ դյորեց, ստրակ հասակը ծովի օդը վարակող տիղմը փոսերի ու ճահիճներին:

Ու հասավ նրան երգս հաղթական— այն մեծ չարքաշին[16], որի անունն էր «պրաստ արբազան»...

Ու հասավ երգս նրա ականջին...

Օ՜, նա Պառնասի Պեգասն է դարձել և մինչ այսօր էլ նրա թռիչքին ոչ ոք չի՛ հասել...

## IV

Հիսուն չի տարի... ուղիղ կես դար է այն օրից անցել...

Այժմ բևե ծեր ու արծաթ բևերն են ժպտում բունիներս, խոշոմած ճակտիս փոքրաքոն դարձել՝ բայց է՛լի, է՛լի դեռ ոդով ջահել նա ձեր խոհերի, փոքորիկների երգիչն եմ կրկին[17], այսօր ալևոր, իսկ վաղը դարձյալ ձեզ հետ բևավոր:

Ճիշտ է, իմ բախտը առաջվա նման էլ չէ պորտավոր, բևևրիս զարկը— մկանունքների— այն ջահել օրի վեհ արծիվների թռիչքը չունի, ոչ էլ իմ երգը հրձանուանների, հարձակվող զորքի ոգևորման ոգին. որպես հոխորտող, շաչող ջրվեժի, ջահել անառակի ճկուն, դիմացկուն խոյացող ոգի:

Բայց է՛լի, է՛լի... տերևթափի ծառի ճղևերը ամուր, ոստերը ճկուն[18] հիշեցնում են ինձ փառքը վաղեմի:

Բայց է՛լի, է՛լի հաստատուն, հզոր, կայուն լինելու նա մի երգ ունի, զառամած բևով, բևև չկապինդ, զոռացած ճղևով, բևև հյու-

*Քալի՝*[19] *ծերացած կաղնին փոքրիկներին ու հնեղներին ասելիք ունի։*

*Նորից դիմանում բուք ու բորանին և դիմավորում կրծքով երկաթի խոլ տարերքներին, և այդ տարերքի, քառսի կռվում իր երիզը փոթռված փոքրիկի դիմաց*[20] *նա նորից լարում։*

*Իմ մանուկ ընկեր— ապագա անրունդ— ջահել պատանյակ, և դո՛ւ, իմ ընկեր, իմ եղբայր բանվոր, որ ողջ լի կենդ դար կյանքդ լի երդով քեզ եմ նվիրել՝ կռվով, հավատով անկրուն ու քաջ՝ անվհատ քայլով դո՛ւ էլ խոյացիր երթովդ առաջ։*

*Մերուկ հասակի երգս էլ ընդունիր որպես մի անունդ ճկուն ասանիդ, որպես մի օրհնանք ջահել արևիդ, ուր նա անարգել պիտի ճնծանա, աճի, զարգանա ու փարթամանա փոքրիկդ կյանքի ահնդ մրրկին, այս կռվի բնմում ինձ պես դիմանա, հաղթանակների բռվում*[21] *ամրանա...*

## ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀՈՍԵՑԻՆ

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

*Իմ երգի համար, իմ շարքի համար*
*Ես ձե՛ղ եմ ընտրում, կարմի՛ր հազարներ,*
*Ձե՛ղ, որ մանկությունից կրակով անմար*
*Մուրճերիդ զարկը արտիս եք զարնել...*
*Եվ խարտոցը ձեր հղկել, ողորկել*
*Ժանգը ուղեղիս ապրանմատի,*
*Ծովերի խորքը քշել, ուղարկել*
*Նավակն հոգիս կրծոտ ու մոլի.*
*Ես ձեր փոթորկում շինված կրակով*
*Ջոկել եմ, բովել մարքերս նոսն,*
*Ապրել, տառապել մարդկանց տանջանքով,*
*Սահմանափակից հանուշել հեռուն։*
*Իմ երգի համար և շարքի համար*
*Ես ք՛ղ եմ ընտրել, կարմիր աշխատանք,*
*Քեզ, որ կարմրագնաս, դեմքով արևոտ*
*Հզացումներին հյուսել ես լեհհանք,*
*Եվ նորնիկ կյանքի— ապագա մարդուն—*
*Ստեղծագործի թողել օրինակ։*
*Ա՛խ, քեզ երբեմն ես շենքերի տակ*
*Կարմիր զավակդ է ընկել նահատակ.*
*Թեև շատերը հերոսի նման*
*Ընկան ու մեռան նրանց հիմքի տակ.*
*Բայց և շատերը նյութ այս տիտան*
*Պայքարումից ես— նոր աշխարհ դուն...*
*Դուք՝ արևներդ մեր նորածնդի,*

Դուք՝ հեղինակ իմ խանդավառ երգի,
Իմ երգի համար, իմ շենքի համար
Ձեր եմ պարտական գրչովս խոնարհ։

## I

Երբ ես աշք բացի առաջին անգամ,
Երբ ես զգացի, որ միտքս է աճում,
Ինչպես կոկոն վարդ, որ չէ իմացվում—
Ինչպես է բացվում,
Երբ շուրջս տեսա ես լաց ու կական,
Որ գետ էր կազմել ողբից հայկական՝
Ես էլ ծուլվեցի այդ հոսանքի մեջ.
Տարվեցի նրա թախիծով անվերջ.
Բայց և շուտ լռեց թախիծը լացի,
Նվ ես ասացի.
Այս երկրում ապրող մենք ճնշվածներս—
Հարյուր ազգերից, հարյուր հյուսքերից
Ընչո՞վ ենք ազատ և ինչո՞վ ենք պերճ
Զրկանք, հալածանք կրող մյուսներից.
Սովկասարնակ զատ հասումածներս
Ինչո՞վ բախտավոր ուրս հղրայրներից.
Չէ՞ ամենուրեք ցարերն են տիրում,
Ցարերը խոսում գնդակ-մարակով.
Չէ՞ որ ամեն տեղ մեզ նմաններըը
Այրվում են մի տեղ նման կրակով,
Ուր ցարն ու սուլթանն իրենց գոռ թագով
Ժողովուրդների բերանն են փակում.
Գործարանատեր, ասոխան, տերտեր
Աշխատավորի արյունը չկում...
Եվ ես հասկացա, հասկացա խնդուն,
Որ կա այստեղ մի անարդարություն,
Կա՛ այստեղ մի մեծ ծանր խաչափայտ—
Շատերին անհայտ,
Որի տակ հեծում, տնքում է համայն
Չարքաշ մարդկությունս։

## II

Եվ ես ձուլվեցի այն հոսանքի մեջ—
Նրա անունը՝ սեւ բանվորություն...
Մենք շա՜տ ենք իրար «ջան ախպեր» ասել
Ու խանդավառվել մի խոհով վսեմ,
Մի ցավով տարվել. բախտավորություն
Մեր կյանքում սակայն երբեք չենք տեսել.
Սեր բնակիները մեջք-մեջքի տված,
Կարիքն է եղել ու մեկ էլ շոր հաց.
Գործարաններն կամարներն տակ
Մենք շա՜տ ենք տանջվել, բայց նեցուկը մեր
Մեկ հույսն է եղել— մեկ էլ աշխատանք.
Երբ մեր մուրճի տակ երկաթն էր տափկում՝
Մենք պիտենք որ՝ այդ մեր տերերի
Համառ ու դաժան սրտերն են փափկում.
Երբ կռանի տակ շիկնած պողպատից
Կայծեր են ցայտում՝
Մենք պիտենք որ՝ այդ մեր սրտերի
Ագահ աչքերի արցունքն է կաթում.
Իսկ երբ թասի-անիվն իր խենթ պտույտով
Ողջ գործարանն էր հուզում, մրրկում՝
Մենք լավ պիտենք— այդ մեր սրտերի
Երակն է զարկում.
Հույզերով վառված, հույսերով լարված,
Մենք լավ պիտենք, որ պիտի իջնի
Տիրոջ պլխին մի ծանր հարված.
Դաժան ցարերի, պիշատիշների
Հավիտենական անիծքով այրված,
Նրանց դադարի կափարիչների
Մեխերն սրտին մեր ձեռքով դամված...

## III

Եվ խոսեց լեզուն սրտի օրերի—
Հեղափոխական մարդարեների.
Եվ դրոհ տվեց կարմիր փոթորիկ,
Այդ հաղթ ե՛րթն էր ըմբոստ շարքերի

Այնտեղ Փետրվարն՝ նոր գարնան շեմքին
Իր նետն էր ցցել.
Եվ կրակ շնչով, որոտի շանթով
Երկիրը ցնցել.
Ինչպես անդրանիկ անձրևը աշնան
Մարում է տապը հողի կարոտած,
Գարնան գեներն հևքը խլրտած
Զարկում-փշրում է ձմեռվա շղթան՝
Այնպես էլ որոտն փետրվար-մարտյան
Դարձավ շեմորը Հեղափոխության.
Սակայն մենք նրան Կովկասում ավեր
Ռաղիոյով ասացանք,
Ա՛յն, որ Հյուսիսից մեզ ավին նվեր՝
Մի ցավ էր, տանջանք...
Առանց քրտինքի ո՞վ է հնձել ցանք,
Խաղաղ, անկռիվ, առանց երկունքի
Այն ո՞վ ծնունդը տեսել մանուկի...
Օ՛, դրա՛խտ Կովկաս, համայո՛ւն Թիֆլիս,
Գլված ու սիրված բոլոր ցեղերից,
Դու, պե՛ղ վրաստան, նամո՛ւս Հայաստան
Եվ աշխատավոր բարև Ադրբեջան—
Հեռու տեղերից՝
Հիշո՞ւմ եք որքան արյուն ու տանջանք
Ձեզ թողին բաժին Մուսավաթ, Դաշնակ,
Թուրքը հայու դեմ, հայը վրացու,—
— Ուր վրնջում էր կիրքը դրացու...

## IV

Փետրվար-մարտյան ալիքների չուն
Նստադարձ գարնով գրոհ ավեցին—
Ոտքի հանեցին
Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխություն.
Աշխարհն իր ծնած անդրանիկ օրից
Չէ՛ր տեսած այդպես մի գեղեցկություն.
Արևը իրա լույս տալու օրից
Չէ՛ր տված ամպին այդպես հուր-համբույր
Օվկիանն ալևոր իր ողջ տարիքում

Չէր սպրած այդքան հուզումնալի կյանք.
Երկինքըն այնպես որոտ չէր լսած,
Կայծակըն այնպես կարկուտ չէր տեսած.—
Մայրաքաղաքի պինդոր թե բանվոր,
Որպես առյուծներ նետից վիրավոր,
Քաղաքածայրի արվարձաններից,
Գործարաններն մրոտ թաղերից,
Վազում են առաջ խենթ ալիքներով,
Խորտակում շաչով կներսնակիններն
Պալատները դու...
Հազիվ կրոնշատպի լանվոր, նավաստին
Շատ գոհեր տվին,
Որ կոմունայի պատվանդանը խոր
Հիմնավորեին,
Որ միանգամից արբեն-տանեին
Հատակը ծովի
Փտած ու նեխված դիակները գաղջ
Բուրժուաների...
Հե՛յ, այն ծով-արյան ալիքները խոլ
Լայնացան, անցան իրենց ափունքից,
Թառն Վոլկայան լեռանց բարձունքից
Ուժով անասան,
Ու... մեզ էլ հասան...

V

Որոտումների հեղեղն է խառնում
Օդերի միջով.
Այն ո՞ւմ արյունն է խոխոջով հառում,
Այն ո՞վ է կռվում կրակոտ շնչով,
Ո՞վ զարնվում, ո՞ւմ հետ...
Կարմիր Ռուսիայի զավակներն են այն,
Կռվում են այնտեղ հեծեծանքի հետ...
Նրանք բոլորն էլ չահել, պատանյակ,
Անվնհեր գնդով, լրջմիտ ու խոհուն,
Նրանք ամե՛նքն էլ արեւի զավակ—
Վհո՛ գիտակցության լույսը աչքերում,
Ունին կատարել մի վսեմ, սիրուն
Պատմական կոչում։

Մի նոր առավոտ, առավոտի պես,
Եվ թարմ օդի պես,
Երևան նկան կարմիրներըն այն
Ժպիտով մանկան.
Այն առավոտուն նման
Թաղաղված էին դեմքերը նրանց
Զգված ու լարված.
Հե՛յ, աղյուծների կորյուններն էին
Կռվից նոր եկած:
Ու մտան նրանք Բիֆլիսը սիրուն,
Բիֆլիսը ծերուկ և մշտաջահել,
Ու ասին նրանք. ահա ձեզ վայել
Այս սիրուն քաղաք, համեցե՛ք, առե՛ք
Ու կառավարե՛ք.
Ձեզ ենք հանձնում մենք սրա բարձունքներն—
Մեր արյամբ ծծված,
Սրա վեհ լեռներ, թավուտ անտառներ,
Արնախառն քրտնով մեր արբագործված...

* * *

Առավոտ պես և թարմ օդի պես,
Արևի նման երևացիր դու,
Դու, խորհուրդներիդ մեծ իշխանություն—
Բանվոր-գյուղացու.
Թարմ ու նորություն շնչից քո հոդից,
Քո շունչ ու ցողից—
Մի նոր երկրագունդ իր օրենքներով,
Մի նոր ժողովուրդ իր նոր երգերով.
Այս օրը արդեն երեկվա չէ օր,
Մենք գնաս բարով վաղուց ենք ասել
Երեկվա օրին,
Երեկվա օրից այսօրին հասել...
Առավոտ պես և թարմ օդի պես,
Արևի նման երևացիր դու,
Դու, խորհուրդներիդ մեծ իշխանություն—
Բանվոր-գյուղացու:

## VI

Եվ առաջ անցան առնդծողները,
Որ բանտերի մեջ էին մնծացել.
Ահա և նրանք— նոր աստվածները—
Քանի՞ փշածածկ ուղի են անցել...
Կռվկատի շքեղ վայրերին փոքրիամ
Նրանք այժմ տեր և միայն այսքան՝
Մեր չար ընչամոլին նահանջի ժամին,
Որ հեղեղի պես սրրել էր անցել
Ու ողջ երկիրը առատ, բարդավաճ
Ալան-ծալանի մոխիր էր դարձել՝
Աստվածները այդ արդար ցասումի
Եվ խոցվել էին, և՛ խիստ բարկացել.
Հազար-հազարով ծառս ու ծառս նրան
Աստվածներն այն,
Եվ խոսեց փլած, ավեր մեքենան,
Եվ բնհեղ հագավ երկիրը խոպան.
Հազար-հազարով իրարու անցան
Աստվածներն այն,
Որը ադոցը, որը բահ ու թին,
Որը խարտոցը, մուրճ-մանգաղ ձեռքին,
Ավեր վայրերին շինեցին ոգին
Շինարարության.
Ջրերին՝ ուղի, կյանք ու շունչ՝ հողին,
Խոսեց ու ճչաց ձայնը մետաղի,
Եվ գյուղը խավար ակը հույսերի—
Սրտիցը հանեց հառնող լույսերի.
Մառախուղի պես ցրվեց հոգս ու ցավ,
Կյանքը կարկամած նոր երգիչ գտավ...

## VII

Եվ շարժվեց թափը վերաշինության—
Ստեղծագործության.
Ես տեսա ինչպես տխուրը հագիած
Կռվի հակառակ,

Աչքերում հուրը խանդավառության
Նոր կյանքն է կերտում։
Ինչպես Ֆիդիաս, որ բրիչ ձեռքին,
Շնչով հանճարի
Ներշնչում էր կյանք, իմաստ ու ոգի
Անշունչ մարմարին՝
Այնպես էլ մարդը նոր աստված գործած—
Նորնկ աշխարհի—
Հոգի էր շնչում հիվանդ ու մեռած
Մեքենաներին։
Տեսա, թե ինչպես մուրճը որոտուն
Նա իր ձեռքն առած՝
Ժանգոտ ու փտած բոլտերն է հատում
Թարախակալած,
Մխիթը հանում շոգեվագերի
Վիրավոր կրծքից,
Կարծես կռվի մեջ գնդակներ առած
Հերոսի վերքից։
Օ՜, տեսա հիվանդ, հաշմանդամ գործած
Շոգեկաթսաներ,
Որոնց աչքերից արցունքն էր կաթում—
Նավթե ակոսներ,
Որոնք անհամբեր սպասում էին
Վիրաբույժների
Անդամահատող հատու դանակի
Փրկող գործերին։
Ապա թե ինչպես հսկաները այն,
Վերքերից բուժված,
Ռելսերի-գծով զվարթ սուլոցով
Սուրում են առաջ,
Սուրում են ուրախ, հեգնում թշնամուն
Թափ ու շառաչով
Ու ծաղրում իրենց ավերիչներին
Խնդումի շաչով։
Ես տեսա նրան— իմ հերոս եղբոր—
Փլատակ հանքում,
Ջրախեղդ եղած մութ երակների
Ջուրն է թիակում,



387—6

Որ կյանքը նորից ածխահանքերում
Իր շնչով ապրի
Եվ վաղուց մարած ծխնելույզների
Բոցերը վառի.
Թևեր էր առել նոանդը մարդու,
Նման դիմադրու—
Պետաս էր դառել հուրը աչքերում
Ճառճանչով ցայտուն.
Չէ՞ որ մարդածին աստվածներն են այն
Աշխարհիս համարյն,
Որոնք նոր ուղի, նոր կյանք են կերտում
Մարդկության համար.
Ու երկաթուղին նոր կյանք առացավ—
Երգիչ էր ծանոթ, երգից ու անցավ...

## VIII

Երկինքն այս տարի մի աքանչելի
Պարտիզպան դարձավ.
Ամեն մի շարաթ նա իր ցնցուղից
Անձրև էր մաղում,
Մարգարիտներով դաշտերը ցողում։
Բանչարն այս տարի դերասանածային
Հոգի էր առել
Ու իր նոանդի ջահերը վառել.
Նա դաշտ էր հանել բահեր ու դեբան,
Հողն էր փորփրում ուժերով ահռան.
Վեր էր մագլցել արծիվի նման
Սեգ լեռան կողեր,
Ոչ մի կաոր հող չէր ուզում անգամ
Անմշակ թողնել.
Կաուրին անգամ նա սերմ էր ցանել
Ու միասը բնել
Անցած սով տարվա օրերը անել։
Մայր ու երեխա, հարս ու պառավ կին
Հոգի են շնչում հողի երակին,
Հողագործների ջանքերով պինված,

Կասես թշնամուն նրանք դեմ եկած,
Կռիվ են մղում,
Կուրծքը լեռների, դաշտ ու ձորերի
Ակոսում, ճղում,
Քարի բերանից, օձի երախից
Հողաճումբ խլում.
Մարդը մի հանճար—քարից էլ հյութ է
Նա նյութել ուզում
Եվ առատության դրոշը հյուսում.
Չէ՞ որ մեծ սովը էն անցած տարին
Հարվածեց նրա տուն ու ամբարին,
Մալին ու կալին.
Սովի սարսափը նա չի մոռացել,
Տարիքը նրան աստված է դարձրել։

* * *

...Հասկերի մի ծով...
Հեզ ու գոհունակ ծանրացած բերքի
Դեղին ալիքով.
Այս ալիքներում դեղին, ոսկեհուռ,
Նույթ, հեզահամբույր կա՛ մի վեհություն.
Այս ծով դեղնագույն արտերում հասուն
Իր ալիք-բաշով հունձքն է խոսում
Ու ծավալ-ծածան ոլորում իր չուն.
Առատությունն է, առողջ հարսի պես
Իրեն է կանչում.
Եվ հաղթ գյուղացին արտի մեջ կանգնած
Որպես նոր աստված,
Կարմիր արևից այտերը այրված,
Գոհ է, երջանիկ,
Չէ՞ որ այս ամենը նրա համար է,
Որ նվեր բերի իր մեծ դավակին—
Կարմիր Բանակին։

Վարագից դյուղից քաղաք են եկել
Սերգոն ու Մուքել
Ու Սոլնարկոմի վզին պինդ չոքել.
— Տվե՛ք մեզ էլեկտրալույսի մեքենան,
Մենք է՛լ ենք ուզում ապրել ձեզ նման,
Մենք է՛լ ուզում ենք լույս տալ մեր դյուղին,
Մեր դոմին, հյուղին...
Գոմշի սալլերով, ոնց ավար առած,
Հասել են տեղը Սերգոն ու Մուքել
Հաղթանակ տարած.
Մոտորի համար հիմքեր են փորում,
Լուսավորության հուրը աչքերում.
Մեղուների պես աշխույժ ու տենդոտ,
Մրջյունների պես եռանդով փութկոտ,
Եկել են գործի ասպվածներըն այն.
Որը կիր ու քար, որը մի գերան
Օձապտույտ խուլ արահետներով,
Անթափանցելի լեռանց լանջերով,
Վարար գետերով
Էլեկտր-կայանի նյութերն են կրում,
Հիմքի քարերը նրգելով շարում:
Եվ Բշլաո գյուղում, ուր առաջներում
Մթին խավարի ժխորն էր հռում՝
Այսօր ցերեկվա արևի նման
Էլեկտրաշարժի ճաճանչն է խոսում.
Ուր դինամոյի արագ պտույտից
Մագնիսի կոկոն ծայրկունքն են կայծում,
Ուրախ, կարկաչուն
Ծափահարությամբ՝ նոր աստվածներին—
Ալն խոհուն, զնդուն ատելծողներին—
Կեցցեներ գոչում:
Ալն գյուղի ձիթի հրապներն անուժ,
Որ մի ժամանակ թախծում էին լուռ,
Այսօր փոխվել են ջահի շիթերով
Եվ կայ ու կանաչ, անուռա ու խրճիթ

Ողողվել գոհար լույսի հույլերով։
Խավարը երեկ—
Դարձել է ցերեկ...
Հե՛յ, ճակատներին աստվածների այն
Լույսեր են իջել մովսիսականի.
Բացվել է գյուղի աչքը մտքերի,
Հոգին էլ քնար՝ ազատ երգերի.
Հասկացել է գյուղն լույսի զորությունն.
Կեցցե՛ն խորհուրդներն, իր իշխանությունն...

## X

Ամայի գաշտում, տարածության մեջ
Փշերի մի խիտ անտառ է բուսել,
Գնդջուկը տխուր խորհում է խնդճ-խնդճ,
Որ չունի նա հող—հողն ակոսել...
Հետու ներքևում հրեն Արագվան
Մոնչում է գոռ առյուծի նման,
Իսկ ինքը չունի մի առվակի ջուր,
Որ գոնե այդին ազատ գաշտի
Ակրող երաշտից.
Ու գալարվում է մրրկի նման,
Ուզում է անել նա արմատահան
Անտառը փշի.
Ու որոշում է՝ շարաթօրյակով
Փշի անտառը հիմքից արմատել
Ու ջրանցքներով այն շրջապատել...
Հոպան գաշտի մեջ ամբոխն է խռնվել
Երկու սեռից էլ, հազարից ավել...
Դիմել են արձա փոթորկի նման
Վայրի հարձակման.
Ու աստվածները ոգևորության
Հուրը աչքերում՝
Փշյա զորքի գեմ կռիվ են մղում...
Երեկո է... էլ չկա փուշ ու թուփ,
Գաշտը հայելի՝ ծով է ալեծուփ...
Կանգնել եմ ափին մեծ կանաչների
Միրուն պատրաստ.

Ջրերն են վազում խաղաղ հոսանքով,
Նորածին դաշտը առատ ոռոգում,
Ջրերն են վազում, որ հողն այսուհետ
Ապրի իր կյանքով։
Եվ փառք է տալիս աստվածն աստծուն—
Նմանը նմանին,
Որ գյուղը ավեր եղեմ է դարձել
Մի հեքիաթային.
Եվ փառք է տալիս աստվածն աստծուն—
Նմանը նմանին,
Որ հուր-հառնդով արհավիրքներին
Դարձրել է հլու։
Օ՜, գեղեցիկ է ու գեղեցիկ է
Բնությունը մեր,
Եվ մարդը նրա աստվածը անմեռ.
Մի մեծ ընդհանուր արհեստանոց է
Տիեզերքը մեր,
Եվ մարդը նրա հարաշարժ բևեռ.
Տարերքն իր ուժով հողի, ջրի տակ
Այսօրից հետո մարդուն հպատակ.
Եվ թող ինչ մահվան դատապարտված է
Մոռիկ օրերում՝
Այսօր մոխրանա համաշխարհային
Կրեմատորիաներում։
Եվ թող փա՜ռք լինի, փա՜ռք լինի մարդուն,
Որ հասկացել է կոլեկտիվների
Կերտող զորություն.
Եվ թող այսօրից կեցցե՛ն խորհուրդներն,
Իր իշխանություն,
Ուր կյանքն է պոռում՝
«Հաղթա՜նք, հաղթությո՛ւն»...

## ՎԵՐՋԱԲԱՆ

Եվ խորհուրդներում բազմել են արդ
Երեկվա Սաքոն, Իվանն ու Թիդոն.
Հողաճումբի պես կոշտացած ձեռքեր,
Ակոսված դեմքեր,

Խոհուն ճակատով գետին են զարկել
Երևելա իրենց բռնակալներին,
Իրենք նմանվել մեծ աստվածներին
Գործում է նառնդը մոտորի նման—
Արյուն բորբոքում
Ու կյանքը կերտում կարող վրձինով
Հանճարեղ ոգու
Ճոճում են նրանք ու բարգավաճում
Կաղնիների պես և զարկ տալիս նոր
Կյանքի կատուցմանու
Աստվածներն են այն,
Որոնք ծնվեցին բանվորի արյան
Հյութերից պոկված.
Նրանց մարքին, նրանց վատ ոգու
Հույզերից երկնած։
Օ՜, գիտեմ, գիտեմ, հեռու չեն օրեր,
Մե՛ծ աստվածներ,
Երբ ալ աստղերի վրայով ճամփա,
Ուղիներ բացած՝
Կատաք հրաման մեր երկրագնդին
Ա՛յլ կերպ պտույտ գալ,
Երբ մեծ արևից ջերմություն քամած՝
Նոր հրաշքների կրանաք աշխարհ,
Նոր աշխարհների նոր սերունդներին
Լույս տալու համար...
Տիտան կռվից ետ նրանք հաղթեցին,
Արդելք ու խավար, երաշտ ու ծարավ
Ի չիք գարձուցին։
—Աստվածներն էին,
Այդպե՛ս կամեցան,
Այդպե՛ս խոսեցան...

# 1 9 2 4

## ԲԱՅԼՇԵՎԻԿ Է ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

Եկե՛լ եմ...
Եկե՛լ եմ, որ մի շնչում երգեմ երդ այն պիլ-հնչուն,
Որ ձուլեցին պռնանների յոթհարյուր յոթ օրվա միջում։

Եկե՛լ եմ, որ ողջունեմ այն վայրերին քո սիրասուն,
Ուր դարերով երբեմն միայն ծղրիդներն էին խոսում...
Եկե՛լ եմ...
Եկե՛լ եմ համբույր տալու այն երաշտած կաշա հողերիդ,
Որոնց միջից առասորեն կաթ ու մեղր է ազատ հոսում։

Դո՛ւ, Շիր-Կանալ, որ հազարանց քրտինքների միջից բուր,
Նրանց քրտինք գետնի շինած դարձար խորհուրդն աշխատաքի,
Դո՛ւ, որ հազար հազարների քունդների երգը լսած՝
Առասուբյան հիմնը շուրթիդ հիմք ես դնում մի նոր կյանքի՝
Մեծ ողջույնի և հրճվանքի երգն եմ բերում քո դաշտերին
Եվ հիացմունք բոլոր ազգի, բոլոր երկրի պռնանների։

## I

Բայլևիկ է Շիր-Կանալը — մի աժդահա հնքիաթային,
Շուրթը նրա ջուր է խմում պաղ ակունքից Արփաչայի,
Գլուխը հազի թաղել է խոր կանաչադույն, զուլալ գետուն
Պոչը հետու Կապսի ծոցում, ալիքներ է հետուն նետում։

Մե՛ծ ու մե՛ծ է Շիր-Կանալը, կամարաձև, գնդեցկաթով.
Փաթաթվել է, ո՞նց է գրկել Շիրահարթը երկու թևով.

Մի խանդավառ կարոտ ունի, Էն ծարավը սիրած յարի,
Որ կարծես Ին սեր ու խանդի կարոտել է հազար տարի։

Հուշերը ունի սրտի խորքում խորհրդավոր իր հոգնանքով,
Ողջ իրանքը դողումների մեջ—ապրումների մի կրքոտ ծով.
Ով ամենքին իր նրբի մեջ ում տեսնում է ու ճանաչում՝
Խոխոջումով, լռում ես մեկ ավետում է՝ ողջո՛ւյն, ողջո՛ւյն...

## II

Բայլըևիկ է Շեր-Կանալը... այն վայրերը լերկ ու բորբոդ,
Որոնք իրենց ծնված օրից այրի էին—մերկ-անապատ՝
Այսօրից ես հագնելու են սիրակարոտ հարսերի պես
Ջուդ-զարդարված խաս ու կանաչ Բաիլիշ-մնաոքա, զան ու զարմար։

Մի հմայող ալարտումով, արծաթափայլ գրավչությամբ
Հիմա հետո՛ւ հետևելն են ձգվել ցանցերն Շեր-Կանալի.
Այնպես գրկել, այնպես ծծում հողի շուրթը ապահովությամբ,
Որ կասես Ին հողն է ընդում պինդ համբույրից սիրահարի։

Ո՛չ մի թիզ հող, ո՛չ մի ավան և ո՛չ մի գյուղ խոշկանգ դաշտից
Չգում ես, որ չի ոռոգվելու այսուհետև բարի ներաշխից։

Բայլըևիկ է Շեր-Կանալը, հոգսը քաշող ամեն մարդի,
Մենահոգի, ներողամիտ՝ բարեկամի ու ամարդի։

## III

Բայլըևիկ է Շեր-Կանալը... Դարու գավակ այս հերոսին,
Մեր այս դարու հարատևատին ով չի՛ տեսել՝ ի՛նչ գա տեսնի.
Միլիոնավոր պայթյուններին, հարձակումի ականներով,
Արփաչայի ժեռ ափերին գրոհ ավող ուռաներով,
Դիրքերից-դիրք, նվաճումներ, մի քոնելը գոդող մյուսին,
Աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին.—
Ուր ձեռք մեկնես՝ այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ ինդ կանաչի,

Ուր երևաս, ուր էլ հասնես՝ մի նոր սերունդ այնտեղ աճի.
Ով ծարավ է՝ թո՛ղ հագենա, ով յարամազ՝ թո՛ղ կշտանա...
Այսպես է մեր Շիր-Կանայը, մի դյումբեցի օղո՛ւլ է նա
Ե՛վ դարդիման, և՛ արտաբուխ, և՛ լայնաշուրթ, և՛ հյուրասեր—
Քեմիը տեղը, երգը բերնին, խոսքը շուրթին, լիառատ սեր։

## IV

Բայլևիկ է Շիր-Կանայը... և դյուղերը գիրկն առած՝
Ցանցել է իր արյունատար երակներով համատարած.
Մեկը պիտի հազարների մասին հոգա—մի ղեկավար—
Հազարները խանդով վառված պիտի հոգան մեկի համար...
Հրեն կապար սարին կանգնած հովվականչի ձե՛ն է տալիս,
Թե՝ հե՛յ, լսե՛ք, հրես ջրիս ձե՛նն է գալիս, ձե՛ղ է գալիս...
Կանգ է առել Պոլիգոնը և սիրահար կույսի նման
Քրջջում է ու սպասում, որ դան գրկեն, սիրեն իրան.
Անհամբեր է Օրթաքլիսան, բարախում է սիրտը նրա,
Ցնծությունից շունչը պահած քիչ է մնում ճչա, պոռա.
Երազում է Թուխաուլման, աչքով անում Ղոնախտանին,
Հասկանում է Հաջի-Նազար ու կանչ անում հարևաններին։

---

Այսպես մեկը ձենում մյուսին, ավետում է հնոու տեղից—
Դյուզաբյանդը՝ Քամխանակին, Թամիզլաղը՝ Իլխիաբին.
Այսպես մեկը ահա մյուսին ավետում է երկու վերատից,
Թե գալիս է Շիր-Կանայը՝ բայլևիկը Հայաստանին։

## V

Ուրիշ փահմ ու սամթ էլ ունի մեր բայլևիկ Շիր-Կանայը.
Նա Շիր-դաշտի մեջքը գրկած կապտի մոտից, ինչպես նայը,
Ջրընկեցով նորից պիտի թաղվի ծոցը Արփաչայի,
Որ պայքարի միջից խլի ուժը հիդրոֆիկացիայի։

Երգիչներից ո՞ր մեծն էր այն, որ երգել է ուժի մասին,
Շիր-Կանայը փրփուր խառով շիր-առյուծ է, բաշը՝ լուսին.
Լույս թևերի փաղաքշանքով պիտի ցանցի ողջ դյուղերին,

Նվ պինամոն կայծակ-փնջով այրի նիրհը մութ հյուղերի.
Պիտի տեսանեն, որ լուսաշող ասեղները էլեկտրոնի
Միտք է ցնցում, դյուրին ասում, որ աննկիր ինքն էլ ունի.
Շիր-Կանայը շիրի նման հոնդացող մի պատանի—
Ալիքները փրփուր խաղով լույս ապագան Հայաստանի։

## VI

Մեր բայլշևիկ Շիր-Կանայը ուրիշ փահմ ու սամթ էլ ունի.
Ջիավորի սանձը ձեռքին հսկա ուժով էլեկտրոնի
Պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու ֆաբրիկներ,
Ջրաղացներ, ադոցարան, ալևկոծի հող ու ցանքեր։

Այն երկիրը, որ գարերով քարացել էր ու ցամաքել՝
Այսօրից նա պիտի երգի աշխատանքի հզոր երգեր։
Շա՜տ է լացել համբ լացով Շիրակըն իր գարդի մասին,
Իսկ այսօրից նա լի թոթով թող ամենից բարձր խոսի։

Շա՜տ է տանջվել ու տոկացել անհարազատ մարդոց ձեռքին,
Իսկ այսօրից թող նվաճի ու տիրանա իր նոր կյանքին։
Ու կտանջվեր նա էլ նորից, թե չծնվեր հաղթ պատանին,
Թե չհաներ Շիր-Կանայը—բայլշևիկը Հայաստանի։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Մատաղ լինեմ ես այն օրին, մատաղ լինեմ ես այն ժամին,
Երբ ինձ նորից կվիճակվի այցի գալու Շիր-Կանային.
Տեսա նրա երկունքը ես, պեղումները տարի առաջ,
Այժմ նրա բաղ ու բաղչեն, արտն ու հանդը, ծառ ու կանաչ։
Վիլլաների թավուտ անտառ, ծառուղիներ-ծաղկանոցներ,
Որոնց բույրից կըզդա նորից ջահելության իմ հոգին ծեր.
Նվ պիշերը հազարաշյա տարածելով լույսի փշեր՝
Ինձ կթևեա հետու տեղից մի աստղազարդ հեքիաթ պիշեր.
Նվ կը տեսնեն ֆաբրիկների գուդրակները ուրախ կանչով,
Ողջունելով գյուղ ու քաղաք ալ բոցերի հուր ճաճանչով։
Բայլշևիկ է Շիր-Կանայը՝ մեծ զավակը Հայաստանի,
Նրա որդին ջահը ձեռքին լույսի աղբյուր մի տիտանի։

# 1 9 2 5

էլեկտրիֆիկացիա + խորհրդային իշխանություն = կոմունիզմ:

Լենին

## ՎՈԼԽՈՎՍՏՐՈՅ

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

Դու հզայար ու ծնվելիքիդ մորմոքի այն օրերում,
Երբ Իլյիչի հայրենիքին էր երկունքի մեջ գալարվում,
Երբ սով ու ոխի, սառնամանիք մահասարսուռ ձևերով
Սպրում էին երկրիդ վրա, հողդ ծածկում դիակով:
Դու ծնվելիքիդ պատերազմի սարսափների ժխորում,
Երբ հարավը վայրագների մահաթույն էր քեզ խորհում,
Երբ ծարավը մարդ-գորիլաս ցամաքների, ծովի տեր՝
Օդակնքով պաշարումի ծառանում էր քեզ խեղդել:
Դու ծնվելիքիդ խլրտումի, տագնապների այն ժամին,
Երբ Մոսկովին դավ էր նյութում անգամ ներքին թշնամին,
Երբ մարտի կուշ կայծակնեցինք հարվածաց դեմ անողոք,
Երբ Վոլխովն իսկ խռովարկու ժայթքեց մի օր իր բողոք: *
Ու ծնվելիքիդ առողջ զավակ, նման հրաշք-մանուկի,
Հազիվ կարմիր առյուս շապիկ—նախասիրար Գալիքի.
Ու աճելիքիդ պարիկ հասակ—փոթձանքների բովերում՝
Հոչակիգ մե՞ծ, աշխարհ ու մի՞ն, ցամաքներում, ծովերում...

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

#### I

Վոլխովստրոյին այցի նկատ մի մութ ձմեռ իրիկուն,
Երբ մանուկ իր բարեբարեներում նոր էր մտել անուշ քուն.
Փակ կոպերն իր հազարաչյա անհուն էր լույն գետին՝
Գոհարափայլ ու ոսկեհուռ աստղն պատկ ճակատին:

* 1922 թվի գարնան, Վոլխովը աննախընթաց հեղեղվեց ու մեծ ավերածներ պատճառեց Վոլխովստրոյի սկզբնական աշխատանքներին:

Ջրյանասրահներ բոլոր չերկրների. մեծագին

Առաջին երգը ի Քաղաքիս Հայաստան ազատասուր
Ժողովրդուհիդ պատանեցյալին
ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ ՝ին

10/XII 24.

# ԲԱՅԼՇԵՎԻԿԸ
# ՇԻՐ-ԿԱՆԱՉԸ

ԹԻՓԼԻՍ——————1925

«Բայլշևիկ է Շիր-կանաչը» պոեմի 1925 թ. հրատարակության՝
Ա. Ֆ. Մյասնիկյանին նվիրված օրինակի անվանաթերթը։

Հետու եմ դեռ... բայց գնացքում կաթնակուսի երթ ու պար.
Աստղացանցը իմ գնացքին բացել է լայն ճանապարհ.
Ու քայլում են կրակները, պտրտվում են այսն առ այսն՝
Գետը սառած, ինքս դառած ջրի կաթիլ մի հոսուն:
Կրակները ձայնում են ինձ կարմիր լեզվով հազարանց,
Հննց իմանաս ինձ կանչում են՝ որ այցելեմ ես նրանց.
Ժպիտ տվի ու ժպիտով տվին նրանք ինձ ողջույն.
Բարևի էր այդ պատասխան պոետ-արտիս դողդոջուն:
Ու մոռացա լույսերին այն դյուքնական իմ օդակից,
Ետր լիաթոք մի աղաղակ պոռթկաց կրծքիս վանդակից.
Ուրախացան, երբ ինձ տեսան, որ Կովկասից եմ եկած՝
Ճանաչեցին, որ օտար չեմ—հարազատ եմ ես իրանց...

## II

Գետը մի ձոր լայնաբերան—մեջք է տվել սիսեռնի,
Միապաղաղ լեռների պես պատեր շարել բետոնի.
Անտառներ են շարժվել տեղից ու ճախրում են օդի մեջ՝
Հաղարացանց վերելքների լարիրինթոս մի անվերջ:
Երիտասարդ անտառների թարմ, հյութալի փայտերից
Օդն է արբել խնկաբույրով, օդը հափրել բուրալից.
Ու վերամբարձ շենքերըն այն կամարահուպ դռներով՝
Մեկի մեջքին, մյուսի ուսին բեռներ բարձել լեռներով:
Երկաթները միլիոնավոր կեռ ձողերով ջլապինդ
Մաղլցել են, իրար ձուլել ցեմենտ, ավազ, գրանիտ.
Բետոններ են ծնվել այսոհ խորունկ գետի հատակից՝
Եկել, թափվել գետի երախ ու հրճվում են խոյանքից:
Ջապված գետը երկու թևով ջրամբարի սեղմած ծով,
Սառցապատը նրան խեղդել վիթխարի կուռ պանդվածով.
Վոլխով գետը իր հատակով մեջքից քաղա՞ք է ծնել՝
Բետոններին, ամբարտակի, վիադուկի հսկաներ...

## III

Կիկլոպներ է ծնել գետը, շնաշխարհիկ մի նոր ցեղ,
Որ հրաշքի կոթող շարել, խիզախում են ամեն տեղ.
Վոլխով գետը կիկլոպներ է աննել բեղուն իր գրկում,
Որոնք բռվիվել ու կռիվներ կռիվների խարույկում:

Կիկլոպները լեռներ քերել—գետի ափից քարափներ,
Քարափներ են նորից ծնել, կերտել գետի դույզ ափեր։
Ի՞նչ է լյառը... տարերքների հավաքածու անգիտակ,
Որ քմայքով կուտակվել է օդակններով շար ի շարք.
Ամեն մեկը կիկլոպներից այստեղ պիշեր ու ցերեկ
Հազար տոննաժ նոանդ վատնած՝ ստեղծել է մի նոր շենք։
Տղամարդ ես, արի՛ վոլխով, փոխի նրա հունը խոր,
Այնպիսի՛ տուր նրան ուղի—նավը երթա ճամփով նոր.
Տղամարդ ես, արի՛ այստեղ, գապիր ամենը այս գետի,
Հնազանդիր նրան այնպես—գլուխ տա քեզ միևչ գետին։
Ու կերտել են կիկլոպները հրաշքների այս հանդես,
Որ ասում են այցելուին՝ հենց ինչ տեսար՝ ե՛ս եմ, ե՛ս...

## IV

Վոլխովստրոյը—խորհուրդների իշխանության հոյակապ,
Որ կապել է, իրար գոդել վոլխով գետի երկու ափ.
Նստել է նա գետի մեջքին — ոսկի շենքի պալատում,
Ինչպես արև ճաճանչավոր լույսերի ամենն իր ձեռքում։
Ջեռք է առել ութսուն հազար ձիու ուժի կիլովատ—
Ռադիոներով կայծակնաթիռ ատո՛ղ է նետում Լենինգրադ։
Տոկերը խենթ պիտի շարժեն գործարաններ, թրամներ
Ու փոթորկեն առատության եղջյուրների հիմնարկներ։
Նավթ, քարածուխ էլ չե՞ն տեսնի ծխանները քաղաքի,
Ջուրը հիմա հնոմակ ոսկի՝ տեղն է խլել ամենքի։
Եվ այս ամեն, այս ամենը լուսե ցանցով պատկված,
Արվարձաններ, դյուղ ու քաղաք լույսերի մեջ կրակված.
Վոլխովստրոյը—խորհրդային իշխանության հոյակապ,
Որ ձուլել է քաղաքների ու դյուղերի երկու ափ.
Տուրբիններդ նրա արև ուժ օդակի բնտոնած՝
Հաղթանակի նոդ շուրթերին—նվաճումներ կատարած։

## ՆԵԽՐՈՐԴ ՄԱՍ

## I

Անտառները, որ ցանցահյուս ճախրում էին երկրում,
Անհետացել, վերացել են, այլևս չեն երևում.
Նրանց տեղը այժմ եկել, խոյանում են նոր շենքեր,

Որոնք նատած գետի ափին տարածել են խոր հիմքեր։
Փա՜ռ ջրերի համերգներն են այստեղ ինդում ամեն օր,
Սառ ջրերի ալիքներն են հուզվում խինդով բախտավոր.
Ու կանգնել է Հրաշակերտի հաղթ կայանը գետափին,
Ուր ջրերը արշավում են ու չափ տալիս, ծափ-ծափին.
Եկել դիզվել են ջրերը տուրբինների մոտ, հուզվել,
Փրփրել են և ուզում են ամբողջ ծովով նետս խուժել.
Ջրի վազքից պտտվում են տուրբիններըս—սրևներ,
Գուլյանների ահեղ թափից տանում տակի բարևներ։
Բարևները մի վայրկյանում հանձնվում են մեծ կայան,
Լենինգրադի մեծ կայանով՝ գործարանից-գործարան.
Ուրախությամբ, ավետումի կանչերըն են նվագում,
Մկանքի պես ձգված լարեր դաշտերն անցնում համերգով։

## II

Հիդրոշները գեղեցկաշեն մի քնարի է նման,
Եթե մատով նրան զարնես՝ երգեհոնի կտա ձայն.
Կնվագի սիրտը նրա այնքա՞ն սիրուն և անո՜ւշ,
Որ այդ երգից ոգևորված զավոդները կառնեն ուժ։
Լենինգրադը այնքան տանջված երկունքների հույզերից՝
Նրա խինդը տևանել այժմ, օ՜, ես ինչպե՜ս կուզեի.
Ջապված ջուրը հորձանքներով ու գրոհով կատաղի,
Երբ խլրտում, խոյանում է գետ տուրբիններ մնատպի,
Նրա ամեն մի կաթիլում ո՜ւժն եմ զգում բանվորի,
Որը կարծես գուշակում է մոտենալը նոր օրի։
Ջուրըս իր խենթ ոլորաններում, շարաճճի խաղերում
Կատակել է ոսկի-լույսեր տուրբինների ճաղերում.
—«Վոլխովստրոյն եմ մեծ Հյուսիսի—լույսի, շարժման ես հմայք,
Տագնապների ու ցասման մեջ այսօր տարած հաղթանակ...»։
Ջուրը խոսում, գրնդում է, կարծես երգում սիմֆոնի՝
—«Ես ինչ լինի՛, լինի—ինչպես կուզի կամքը Լենինի...»։

## III

Քանի՜-քանի՜ վոլխովստրոյներ կառուցելու ունենք գործ,
Սա առաջին քարը միայն կիկլոպների ջահել փորձ,

Վոլխովստրոյը դեռ շատ ցանցեր, նման ոսկի քամոթի,
Պիտի կապի ամբողջ մեջքով մեր Միության C. P.-ի.
Այնժամ կիջնեն ու կփայլեն արևները բյուրավոր
Մեր մռայլած հողու վրա, որ ծոշնել էր գարնով։
Ի՞նչ էր երեկ...— ամենօրյա աքսոր ու բանտ, բռնություն,
Մեր բազմատանջ արտի վրա իջած մի մութ գառնություն...
Այսօրը մեր՝ շնաշխարհիկ, մի դյութական նոր աշխարհ,
Այսօրը մեր՝ երջանկության նոր արշալույս մեզ համար.
Դու չի՞ս նայում առելությամբ ու զզվանքով երեկին,
Երբ այսօրը արդեն եկել, շոթել է քո տան շեմքին.
Վոլխովստրոյը մի հիմնաքար Մեծ Գայլերի շենքերից—
Վոլխովստրոյը կարմիր դրոշ, որ պարզեցինք այս օրից։
Վոլխովստրոյը հիմքը գարկից այն հիասքանչ բարիքի,
Որի անունն է կոմունիզմ—խորհուրդը մեր գալիքի։

## IV

Վոլխովստրոյը դեկրետ դրեց, որ ամենքը իմանան՝
Թե այսօրից բանվորը ծով իրա երկրին տիրանա.
Վոլխովստրոյը միլիոններին ձեռքով կետուած մի տիտան՝
Չի՛ պատկանում առաջվա պես մի Նոբելի, մի ցեցի,
Ո՛չ էլ միայն Ռուսաստանի բանվորության, գյուղացու,
Այլ մեր ամբողջ C. C. P.-ի խորհրդային Միության։
Վոլխովստրոյը մի հսկա սիրտ, ունկնդիր իր բարեխման,
Արյունատար ծնկներովն իր եռանդ մղող գործարան։
Ո՛վ էլ լինի, ինչ գա այստեղ, կանանչի նա մի արձան—
Վոլխով գետի ժեռ ափերի գրանիտից է կերտած՝
Մի բանվոր է նա վիթխարի պատվանդանին իր կոթնած՝
Աչքը հառած հեռուներին համաստարած Միության։
Ձեռքը հզոր մեկնել է նա մյուս արձանին պողպատի—
Դեպի Լենին — որ կանգնած է է՛ն մյուս ափին մեծ գետի.
Ու կարծես թե ասում է նա՝—«Եվ ծով լինի՛, ծով լինի՛—
Ինչ որ ասաց, ինչ պատվիրեց, ինչ ավանդեց մեզ Լենին...»

Չկա Լևոնին... (Վոլխովստրոյը մի մարմնացում Լևոնինի),
Որ պատմիրենց Վոլխովստրոյը շինել ի՛նչ էլ որ լինի...
Չկա Լևոնին. սակայն... սակայն... կան Լևոնինի գավակներ,
Որ շարունակ մարմնացնում են նրա թողած պատգամներ։
Հրեն Սառ՛յին... պողպատա ձեռքով երկրի ղեկը ձեռքն առած՝
Վեկավարում, վարում է մեր կարմիր նավը դեպ առաջ.
Աշակերտը մեծ ուսուցչի արժանավոր է գավակ—
Արթուն պահակ մեր Միության՝ հակող ամեն ժամանակ։
Մեր երկիրը նեպից հետո տարեցտարի՝ մի տարում
Մեծ Գալիքի համար ուժեր ու նյութեր է մթերում...
Դե՛, վոլխովստրոյ, դրժի՛ անցիր լույս-թևերով քո պողպատ,
Թո՛ղ ուռճանան քո նոանդից քաղաքներ ու գյուղեր շատ։
Վերանա թող սովը չքի, մեքենայի ու հացի—
Մեզ պաշարող երկիրներին այդ լինի մի աքացի.
Ամեն հաղթ քո անիվի մի-մի գավոդ ղեկավար—
Ապագայի ուղին ցուցնող ոգջ մարդկության դու համար...

## ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՊՈԵՄ

(Ֆրագմենտներ)

### ՆԱԽԵՐԳԱՆԸ

—Ասա՛, պապիկ, խոսքդ հալոցք.
Այն ո՞ւմ համար և այն ինչո՞ւ
Կառուցեցին Պետրոպավլովսկ.

—Նրա համար, ա՛յ իմ մանչուկ,
Որ հալածեն ու կաշկանդեն
Մեր ազատ միտք, մեր հառաչ խոսք։

—Ապա պապիկ, ինչո՞ւ համար
Կառուցեցին այն պայտաձև
Ձմեռային պալատը սև.

—Նրա համար, ա՛յ իմ սիրուն,
Որ բանվորին պայտեն, լծեն,
Եվ գյուղացու ծծեն արյուն։

—Պապի՛կ, պապիկ, ասա ինչո՞ւ
Կուտակել են երկինք հանել
Խաչիկի տաճարը չեռ.

—Նրա համար, խելոք մանչուկ,
Որ մոլորեն ու գլորեն
Ժողովրդի հանճարն անմեռ։

Այս շենքերը քանի՞ տարի
Եղել են տասկ հինարաններ
Բիրտ ու դաժան դահիճների.

Այս որջերը քանի՜ տարի
Նղել են լոկ նշանաբան
Բռնության ու ոճիրների.

Մեկը քանտի, մյուսը անարդ
Կախաղանի, իսկ երրորդը՝
Մութ կրոն ու կաշկանդանքի.

Մեկը՝ ժանդարմ, մյուսը՝ ցարի,
Իսկ երրորդը՝ ալան-թալան
Հալալ, աղնիվ աշխատանքի։

* * *

Բայց տեսնո՞ւմ ես դու Նևայի
Լայն ափերի ազատատենչ
Գործարաններն ծխերի մեջ.

Դու տեսնո՞ւմ ես հորիզոնում
Ո՜նց են վառվել, ո՜նց խլրտում,
Դոմնների հուրը անշեջ.

Կամ տեսնո՞ւմ ես Պուտիլովյան
Հաղարավոր պահակների
Հաղթ դիրքերը շարքով անվերջ.

Նրանք էին, միրուն զավակ,
Որ հենց իրենց ծխաններից
Երկար ու ձիգ թնդանոթով,

Մի օր ցասման հուր ժայթքին
Հաչյուռակ այն հորիզոնին—
Վախի բներն ահ ամոթով։

Նրանք էին, որ ձուլեցին
Կատակ-կատակ ռումբ ու գնդակ,
Յրին նրանց հրանյութով։

* * *

Հոկտեմբերին կարմիր, ալվան,
Էն որ շուրջդ կարմիր, բոսոր,
Էն որ բաղն բարն են քաղում,
Մենք էլ, որդի, ահա այսօր
Հաղթանակի, մեր զարթոնքի
Բարն ենք քաղում մեր նոր բաղում.
Դե՛, լսիր, թե ինչ կպատմեմ
Ես քո կայտառ, ես քո պոչծառ
Պիոներյան մատաղ օրին.
Դե՛, լսի՛ր, թե մենք ի՛նչ պատիժ
Այդ չկերին ամենք մի օր
Կարմիր, ալվան Հոկտեմբերին։

Այսպես ահա ծերուկ պոետ
Ու հրաժեշն պիոները
Խոսում էին իրարու հետ.
Մեկը կրծքին քնար արծաթ—
Արծաթի մատով,
Մյուսը՝ կարմիր կապած փողպատ
Ալ առյուսով։

# Ի Մ Ա Կ Ի

(Առաջին ֆրագմենտ)

Մարմարաշեն կուռ պատերով ու աշտեներով հոյակեր
Կանգնել է նա — դուռ Բաակին — ժանտ պահակը կրոնի.
Ամեն աչուկը նրա տիտան—պրանտած մի կոմոդ,
Ամեն հակատ մետաղաձույլ հորիզոններ են դյուցազ:

Թև բարձրանաս նրա տանիք ու դմբեթը վերամբարձ՝
Կհասկանաս, թե քանիսի՜ նյութել է նա մահ ու լաց.
Ու կտեսնաս ողջ էությամբ, ու կժայթքի սիրտդ թուլն,
Թև իմանաս հիմնարկումի նրա եղեռն պատմություն:

Ասում են թե տեղը նրա հազար դարուց էլ առաջ
Մանծաղուտի, ճահիճների եղել է վայր մի անանց.
Ու Պյատրը ցար, խենթ ու խելառ, իր քմայքով ահարկու
Կամեցել է այստեղ դառնալ մեծ տաճարին հիմնարկու:

Անծայր երկրի ողջ ծայրերին ավել է խթան հրամանն,
Որ աշխատող ձեռք ուղարկի ամեն մի գյուղ ու ավան.
Ու թափվել են այստեղ հորդաբ, հիմք են փորում, հողը թաց,
Բայց ճահիճը թաց է ու թաց, երախը՝ լիճ, աչքը՝ ջուր:

—Որ այդպես է, թող դերանը աչքդ հանի, անզգամ,
Ասում է ցար Պյոտրը հանդես ու կատաղում այս անգամ.
Գերաններին անտառներ է սրի քաշում անխնա,
Բերում մխում հունը նրա, որ ճահիճը չորանա:

Բայց ճահիճը թաց է ու թաց, երախը լիճ մնծացած՝
Ջուրը նկել ու խեղդել է տրանքներն նրա լաց.

—Ութն, ճահիճ, քեզ դեռ քիչ են դերաններն անուսուի,
Թող որկորդ հիմա փակվեն ոսկորները մարդկային...
Ու մարդիկ են նորից փուում մինչև կոկորդ ջրի մեջ,
Ու այստեղ էլ շիրիմ գտնում հազարներով ջրահեղձ։

Ու գոցվում է աչքը ադամ ու ճահիճն է ցամաքել,
Չէ՞ որ այնքան դիակներ է նա կլանել ու հագել։

Օ՜, Իսակի, հիմքդ անուսուկ ու անհատուկ երախով
Ամբացել է բանվոր մարդկանց արյան թանձր շաղախով.
Այժմ ձայնը նրանց արյան, որպես նշան բողոքի,
Արձագանքով անդրեվկրյան կաստանի քո հոգին։

Դրա համար դու օրեցօր իջնում ես խոր դեպի ցած*,
Երբ լսում ես անեծք ու լաց հազարների մահացած.
Դրա համար ես ասում եմ, պիտ խորտակվիս դու անհետ,
Քեզ չի օգնի ոչ մի Պյոտր... ու կրոնն էլ նրա հետ...

---

* Իսակի տաճարի հիմքը կառուցված լինելով ճահիճների վրա, շնորհիվ նրանց հակայական ծանրության օրեցօր իջնում է ցած։

## ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՍԿ

(երկրորդ ֆրագմենտ)

Որպես մի բիծ սև անցյալի—ոճիրների կառափնատուն
Պաղ ջրերում լայն նևայի դարանել է ոմը սրտում.
Ո՞վ է տվել նրան այնքան վրիժառու դաժանի դեմք,
Ո՞ր սատրապը, այն ո՞ր արքան... էլի Պյոտրը կատաղի դև։

Ու կանգնել է դահիճի պես Բաստիոնը բանտարկումի,
Ճակատին էլ ցցել մի սուր—նշանաբան գլխատումի.
Կարծես լարված ձիդ աղեղից վեր խոյացող հսկա մի նետ,
Որ թռչում է դեպի երկինք ու ամպերում կորչում անհետ։

Ու հսկում է ժանդարմի պես աչքը հառած էն մյուս ափին,
Ուր Պալատն է ձմեռային—ցարերի որջն այն սարսափի.
Վա՛յ թե ազատ միտքը ճախրող խռովարկու ոգիների
Մութ արևին ժանդ ցարերի մի աղետ կամ փորձանք բերի։

Պետրոպավլովսկ, դու նման ես հսկա զանգի մութ գիշերին՝
Քո փոս ընկած խռոչներով, քո արնակալ հուր աչքերով.
Ամեն խուցդ քարի դագաղ, կամարահուս մի դամբարան,
Ամեն այտնդ ժանդարմների ու ցարերի լոկ հենարան։

Այստեղ, քարե քո վանդակում կարոտ լույսի, ազատության,
Թառամեցին ծաղկահասակ Ջերնիշևսկին և Նալբանդյան.
Ու քանիսը խիլագարված մռնչացին առյուծի պես,
Թույն ըմպեցին ու կախվեցին... ու մարվեցին ճրագի պես։

Եվ իզուր չէր, որ Ավրորան հենց առաջին ազատ օրին
Պատերիդ տակ ճայթեց ռումբեր ու ոչնչեց Հոկտեմբերին։

Պետրոպավլովսկ,

Այդ խառացած մեր վրեժն էր ընդդեմ քո բյուր սխրանքի,
Այդ կուտակված մեր ցասումի մահապուժը դահիճներին։

## ՉՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏ

(Ժոարդ ֆրազիենտ)

Չմեռային դու դուռ պալատ, որ ձգվել ես այդպես հպարտ,
Որ պիշատիչ բազեի պես ինձերդ գորշ փոել ապատ՝
Քո փառքը չէ, որ պիտ երգեմ, ոչ էլ շուքդ ես գովերգեմ,
Այլ անցածդ ճանապարհը ահա պիտի նշավակեմ։
Անփառունակ, դառդ պալատ,
Քո ծոցում էլ ինչն են շնչել քանի՜ դավեր, քանի՜ ոճիր,
Մինչ որ վերջին շունչը փչեր Նիկոլայը՝ տխմար վերջին.
Օ՛, և քանի՜ կատիճների հանել ես դու մահամիտ,
Քանի՜ լուսե մարթ ջահեր հանգել են քո լուկ մի շնչից։
Նրանք, որոնք պատվով ատրել գրոշը մեծ պապափարի,
Նրանք, որոնք գահեր շարել ապատության ճանապարհին։
Ե՛վ Ռըլևև, և՛ Կախովսկի, և՛ Մուրավյով-Ապոստոլն այն,
Որոնք ընկան փոած ինկից հրապարակում լայն Սենատի,
Երբ Նիկոլայ առաջինը դարանակալ վագրի նման
Գատերից ատակ ճանշալով դողը բռնած ոտքով հրաման,
— Դեկտեմբերյան ցնդվածներին ի՛ կախաղան տանել գատի...
Ոճիրն չէր քո առաջին, Ռոմանովների դու գորշ պալատ,
Բայց սա գարձավ փառքը վերջին քո տների նախկին անպարտ.
Երբ հիմքից ատակ արյունաների ատիրն անգամ գրանիտե
Մուրավյովի հետ միասին Հառաչեցին ու ատացին՝
«Դժբա՜խտ երկիր, խնդճ Ռուսի՜ա, ուր կախնեն իսկ կարգին
չգիտեն...»

Վերջին նախճիր ու ոճիրդդ ոճիրների մեջ յուրավոր
Այդ հինգ թիվն էր, գաժան պալատ, հունվար ինը — աստկումի օր.
Երբ Նիկոլայ արյունարբուն երևեցավ պատշգամբիդ
Ու արնաշունտ մի գիծ ծոցից — վերջին գիծը անցած ճամփիդ.

Երբ Պուտիլով հացի համար ուրի եկավ... իսկ ցարն անգութ
Ձորենի տեղ «ըմբոստներին» արճիճների մաղեց կարկուտ...
Բայց և այդ նույն պատշգամբին մաղթանքներով ճամփեց ռազմի
Բոլոր նրանց, որոնք եկան էն ևս տարին պատերազմի։
Ոճիրների դու որջ պալատ, մի տեղ գնդակ, մյուս տեղ օրհնանք.
Սրտումդ ահ ու ծոցիդ մահ... հիշատակիդ արդահատա՜նք։

* * *

Փոխարինում է երկաթ մետաղին,
Այն մյուսն, ահա, ոսկու հանքերի մեքենա է նոր՝
Հնարած վարպետ եգորի ձեռքով։

---

Փոխարկվելից վերջերները պինվոր եղանք մենք այն օրից,
երբ ավարտած պատերազմը՝ մենք բանկինք նոր Հանապարհ,
երբ մեզանից ամեն մեկը գործով հանճար, ճարտարապետ և
շինարար։
Ոնց որ մի ծանր երկրաշարժից փլվեր տուն, գառնար ավեր,
Ոնց որ մի ծանր երկրաշարժից ոչնչով լիլ-ցնծեր նմանվեր,
Ու լսեիր ուժերդ ազգ—նորից շինել տուն ու ապրիլ՝
Միակ բույնդ պատսպարան ու հավանին միակ կյանքիդ։
Այդպես էլ մենք պինվոր եղանք փոխարկվելից վերջերները.
Ու շունչ առան, կյանք ու հասակ գալյարները մեր երեխի։
Կիսակործան գործարանի մեքենաները վերք ու ժանգոտ՝
Մենք սրբեցինք ու հղկեցինք, փայլ տվինք մեր եղունգներով։
Թուջ և... ի երկաթներից մենք տաշեցինք նոր գործիքներ,
Ու դարերը բանի ձգինք— ու բարախնց մեր արտ հետ։
Ուրախությամբ էր բարախում ոչխ մեր արտ լի մշուշով.

Որ մեզ ասեց, թե համերաշխ ու միացած համառ ուժով՝
Բանվոր մարդու կամքը պիտի մեռնելներին նոր կյանք շնչել...
Նա մեզ ասաց, ու դժգոհեցինք ահա հանճարեն Բոլշևիզմի,
Որ իր առաջ արդեյք չդիտեր։
Սա իսկական բոլշևիկն է՝ ծնված միայն նրա համար,
Որ իր անդուլ կյանքում երբեք մուրճ ու բրիչ չդնի վար...

---

Հիմա մեր զավոդն այն չէ, ինչ որ կար
Բուրժուաների, ցարի օրերում.
Գործարանը հին զնդան էր ու բանտ,
Դամբարան էր սոսկ,
Ու մարդն էլ այնտեղ՝
Որպես մի մեռելը...
Հիմա մեր զավոդն կերտում է անդուլ
Մեր նորն այսօրվա,
Ու մեր ապագան։
Եվ աշխատանքն էլ այնտեղ մի հաճույք,
Միտքը պարուրող մի սքանչ զվարթ
Եվ սիրտն էլ այնտեղ բարախող ուժեղ։
Հիմա մենք ունենք հին վագրանի տեղ
Դումեն վառաններ, մարտենի փեչեր.
Ու նոր վագրաններ՝ մեհյան ամեհի,
Որոնց արգանդում եռվում են առատ,
Հանդում կատաղի
Հազար ու հազար միլիոն տոննաներով
Հում-հում նյութերը հանքամետաղի։
Հնումից որ նայես— նա մերթ փայլում է,
Մերթ փայլատակում
Ու հանդչում մերթ էլ,
Բոց ալիքները շաշ ու շառաչի,
Խինդ ու հռինդի, ծխի, ժխորի
Երկինք են ելնում ու թռչում, կարծես
Հետու կայծակից վայրկյող մի ծով
Երկնակամարում՝
Թե ցերեկ օրին, թե դիշերներին...
Ոռվերն են եռում մարտենների մեջ
Ջնռան երկաթի.

Այդ նրանք են, որ մեռածների
Մրրիկ են ժայթքում իրենց պորտերից։
Բուրդերի նման դոմեն փնչերը՝
Անմար, մշտավառ,
Իրենց կրծքերով շնչում են, փնչում,
Տնքում, մռնչում,
Խորդում ու ճչում...
Օ՛, ծանր է նրանց երկունքն արդանդի,
Այս մեծ երկունքը պիտի որ ծնի
Մի սխրանքի գործ,
Պիտ որ արտադրի չհնաչափ գործեր՝
Գործարանային մեքենաների
Երկաթ, պողպատ։
Այս մեծ արկղը, որ մխլոն փիթով
Տեղս է կչանում, ածուխ, անտրացիտ
Ու խակուն և լի մի ակնթարթում
Մարսում իր շիկնած հրն արդանդում,
Այս մեծ հնոցից ջրվեժի նման
Հեղուկն է ժայթքում,
Երբ նրա կուրծքը խոցում ես տեղով—
Ցայտում է կաս-ալ արյունը կարմիր
Գաղջ հոտ ծխելով,
Մի ճիչ հանելով...
Դողդողում, որպես զայրացած առյուծ,
Որ մռնչում է կատաղած ժամին,
Երբ նրան մի խոց, վերք են պատճառել...
Ու հանդատացած բացվող, երախի
Վերջին թույլ ճիչից, ցավոտ ու խռպոտ
Կոկորդը նրա ջրվեժի նման
Թափվում է մատաղ, զանգվածը հրե՝
Կատակազավ արնոտուկն, ալիքածածան։
Ծանրաշարժ հրե ջևռուկ ալիքով
Եվ խռովարկու հնդափոխական
Ջուղունքն է սա, խլրտող ու խնդի,
Որի աչքերից կայծակի նման
Առոգներ են թռչում, հրե կայլակներ,
Կայծեր փայլփլուն հրթիռի լույսով
Ու գետն նման թափվում կոկորդը



387—11

Ամպամների մեջ կոփված ձևերի՝
Շարք-շարք մարդերի, ածուխների պես,
Մեծ, երկար ու կարճ շրջանակների,
Սալոնների մեջ չուգունն է սառչում,
Մարմաջում, լռում,
Ու ջանից հանում տանջանաց ախը,
Հառաչանքը իր։
Օդում սիրում է ծծումբի հոտը,
Ժխորը ծխատ,
Մետաղի, մարդկանց խրոխտումների,
Հլրտումների ու քրտինքների
Բույրը միացած.
Եվ ահա, ահա գործը կննդանի,
Գործը մեծացած,
Իրը մարմնացած...
Ու այս ամենը դոմնն փեչների՝
Վառարանների քավարանում մեծ...
Հապա մարտնի թանչերն ահռելի՝
Հրի, բոցերի այս աշխա՜րհը խեղճ,
Որոնք չուգունն, կամ հուժ երկաթի
Կտորվածքներից
Պողպատ են ծնում...
Նրանց երախը ժայիքող հրաբխի
Կրատերներ են լայն,
Որ վեր են հանում դեպի մութ լազուր,
Սրակն, հրե լեզուներ հազար
Լիզում են օդը։
Սրակն մրրիկ...
Իսկ մեջը նրա, արդանդում լեռան
Հրե հեղուկը՝ պողպատի արյուն։
Օ՜, պետք են այսոնք թուխները հմուտ՝
Փորձված ու կենտրված վարպետը կյանքի,
Թե չէ անպիտան, ուշացած քայլից
Նիզը պողպատի, նիզը երկաթի
Կարող է փշանալ։
Հա՛, պետք է այսոնց վարպետը գործի.
Այսոնց Պատման է առնգծագործի։
Հիմա մեր երկրում,

Աշխարհի մեր այս վեցերորդ մասում,
Մեր խորհրդային այս լայնածավալ
Ու անծայր երկրում—
Գործարանը՝ հին գործարանը չէ՝
Մաշող ու հյուծող,
Եվ ոչ բանվորը— բանվորը այն հին՝
Սարսուռը նախկին։
Հիմա սովետի բանվորը վարպետ
Պողպատը բովող,
Հիմա վարպետը— գիղարվեստագետ։

---

Այդ օրը պայծառ գործարանը մեր
Վառվում էր կարմիր հրդեհի նման։
Ամեն տեղ դրոշ, պլակատ ու գիր
Ոսկե աստղերով շողշողում էին
Աստղերի նման։

Կանաչ ու ծաղկով, բաղեղ ու թավշով
Փաթաթել էինք դիզելները մեր,
Որոնք այդ օրը ավելի ուրախ,
Ավելի կայտառ էին նվագում։
Փողերը երեկ երգում ու թնդում։

Ու ձուլվել էին նռանդն ու խանդը,
Երգն ու նվագը,
Փոքրն ու ավագը,
Պոետն ու քնարը։
Ու ձուլվել էին ստեղծագործության
Թափն ու հանճարը։

Այդ օր մենք ամենքս կարմիրներ հագած,
Կրծքներիս կարմիր մեխակներ զարկած,
Աշխատում էինք այնպիսի թափով,
Այնպիսի խանդով,
Երգ ու ծիծաղով,
Որ ես չեմ հիշում, թե բանած լինեմ
Իմ կյանքում այդպես։

Զգում էի ես, ու ինձ հետ նույնպես
Ընկերները իմ,
Թե մենք վաստում ենք անկող մորենու
Ջահերի նման.
Ու չենք մոխրանում, ու չենք հագենում։
Ու այսուհետև այսպես կաշխատենք
Մենք ամենքս էլ՝
Այսպիսի խանդով,
Այսպիսի խինդով։

Օ՛, լավ է այրվել, ճարճատով վառվել,
Ինչպես վառան ցախ Բորնում ճարճատող
Ու չմոխրանալ, չհանգել երբեք։
Լավ է, շատ է լավ եռալ, բորբոքվել,
Ինչպես վառրանում են եկած լավա,
Ու աշխատանքիդ հոտը կրակ
Թափել կաղապար, որ իրը մարմնանա։

Այդպես էինք մենք աշխատում այդ օր
Ու մեզ համարում անվերջ բախտավոր։
Այդպես էինք մենք հիմքերը շարում
Լավ ապագայի՝ երանելության,
Որ ապագայում օրինակելի,
Պարզերես մնանք
Նոր սերում առած անունդի առաջ։

Ու այդպես էինք այդ օրն աշխատում
Մենք՝ մեղուներս,
Որ աշխատանքի մեր Բունում խայթով
Նոր Բունավորնենք հանդիսավ վրան
Մեր սահմանից դուրս թշնամիներին...

---

Հետս ի անջատ, անվերջ շարքերով,
Լայնարձակ դաշտում,
Նոր գործարանի կորպուսներն են հագիր
Տարածվել խրոխտ.
Կարծես գրկել են հուժիս, ահարկու

Լայն բազուկներով հողը բանկապին։
Գլուխը իրենց աշատրակներով
Հառել լազուրում
Ու լողանում են հատակ օդի մեջ։
Մեր երեսը պարզ և խիղճը արդար,
Օտար չենք իրար,
Այլ հարազատ ենք,
Մենք ընկերներին չենք շահագործում,
Կամ չենք կեղեքում...

Հաղար ու հաղար գեղագետ վարպետ,
Բանվոր պրոլետար—
Մարդիկ են այստեղ— տիտաններ հսկա,
Մարդիկ են այստեղ ստեղծում, ծնում
Հաղար մի տեսակ բարդ մեքենաներ՝
Ու չեն էլ հոգնում։
Կռվում են անվերջ չուգունի, հրի
Ու պողպատի հետ,
Կռվում են, կռվում.
Ու մինչ մի նոր ձև, մի կյանք չեն տալիս
Անշունչ մետաղին՝
Չեն հանգստանում։
Պատիվն է այն՝ կարմիր գիպանոց՝
Մեր Պատիվական,
Որը նատել է Նեապի ոսին
Եվ նյութ է հորդում
Ոսկի հանքերին հանրապետության։
Անթիվ մեքենայք՝ գործարաններին,
Ուրալ-Կոնբասի ածխահորերին,
Երկաթ-հանքերին,
Բարխա ծովացած նավթահանքերին...

---

Ածուխի փոշուց, ջրից ու քարից
Մենք ուժ ենք հանում,
Էներգիայուն և ուժ, շոգի ու նավթ՝
Կյանքը շարժելու։

Անցիր մի Դոնբաս, մտիր կայանը
Անվան Արտեմի,
Լույս է տալիս նա Ռոստովին ամբողջ
Ու Սևմաշատրոյին։
Կայանն իր ուժը առնում է միայն
Ածուխի փոշուց,
Երբ վառում են այն։
Մի բան, որ առաջ անպետք էր խպտոռ։

---

Մենք շինում ենք կոմբինատ մի,
Որ մեզ պիտի նյութի հայթայթի,
Որով ազատ և անարգել
Սարեր-քարեր պիտի ծաղկեն,
Ապառաժներ լեզու առած
Ռադիոյի պես պիտի երգեն...
Անտառները նոր թափ առած
Պիտի պարեն ու կաքավեն՝
Փարթամության շոյող թափից,
Ու ցորեններ, դարու դաշտեր
Ծափին-ծափ տան ու ծածանվեն
Միրանագույն ծովերի պես
Ուրախության անեզր շափից։

---

Երբ հույսն է հառնում բորբ ու շիկացած
Հալոզ հնոցից,
Լույս ճառագայթող ձույլից արևուտ,
Մտե՛ք գործարան ու տեսեք ինչ նա
Ինչպե՛ս է բրտնում շոգեմուրճի մոտ։
Տեսե՛ք ինչպե՛ս է կռվում, պայքարում
Մետաղների հետ,
Ուր նա օդի տեղ ծծում է միայն
Գաղջ ծծումբի հոտ.
Ու երբ զանգվածին տալիս է մի ձև,
Ինչպե՛ս է ժպտում աշխատանքից հետ՝
Երջանիկ ու դոհ, հոգսերից ինքիև,
Ու հանգիստ քնում մինչև առավոտ։

Տևանէ՞ լ եք արդյոք այսօրվա կռվող
Հերոս բանվորին,
Որը իր ջղերը լարված շարնշար
Նման տավիղին,
Խիզախ հոխորտով կերտել է ուզում
Անշունչ մեռապին։

Ջահել պոետներ,
Դուք, որ սիրում եք, որ ձեզ պրոլետար պոետ
անվանեն,
Տղե՞լ եք արդյոք գործարանների մռայլ հարկի տակ,
Շարժվե՞լ է արդյոք ձեր բազուկների դոնն մի երակ,
Տարե՞լ աշխատանք։
Քե՞ հեռվից միայն դիտել եք նրա
Ծխանելույզների ծխերը հրդեհ,
Քե՞ անցել միայն դուք նրա կողքից,
Ու հրճվել նրա շառաչով դղորդ...

Խորքերը իջեք, կենդանի հողեք,
Կեղևը, դիտե՞ք, նեռվում է որպես անպիտան
մի աղբ։
Ես իմ շունչը, ես իմ հոգին, իմ ամանդը կտամ
նրան,
Ով սիրել է մեր գործարան։

---

Ասել ենք՝ հասնել և առաջ անցնել։
Ու մենք հասնում ենք լրջմիտ ու խոհուն,
Ու մենք անցնում ենք ծիծաղ ու խինդով,
Հացի ու կաթի, մեռապի, հոթի,
Էլեկտրոնների ու գարաժնների
Ցնծության ծափով,
Որ ծնունդ առան մեր հաղթ ձեռքերի,
Մեր գարդ հանճարի, ավյունի թափով։

---

Ինչո՞ւ է այսքան փշշում ու թշշում,
Թնդում, որոտում Պուտիլը կարմիր։
Հեյ, հե՞յ, չգիտե՞ք, չգիտե՞ք, մինչև,

Որ ողջ C. P.-ում նրա արտակարգները
Ու շոգեկառքերն են վազում խիտղով։
Հեյ, հե՛յ, չգիտե՞ք, որ դաշտերը մեր
Երկաթե ձիու դոփյունից ապշած
Հետ-հետ են մղել նահապետական
Եզ ու գոմեշին,
Ջուն ու էշին։
Տաճներիս հաղար արտակարգ ավելց
Այս տարի կարմիր մեր Պատիվովից.
Ասել է՝ օրը երեսուն մաշին։
Մյուս տարի կուա երեսուն հազար։
Հե՛յ, ուրախացիր հարսիկ դեղջուկ,
Հե՛յ, ուրախացիր C. P.-ի բանվոր։
Պատիվովը մեր տալիս է նաև
Շոգեմեքենա ժիր արտադիպ,
Հյուսիսից հարավ,
Սպիտակ ծովից մինչև Սև ծովը
Մաշին ու մաշի՛ն...
Մոսկովից Տաշքենդ ու Վլադիվոստոկ
Պատիվովն է այն տալիս ավիտոկ։

---

Երբ տանս նստած անդանիս առաջ
Ես մտածում եմ մեր աշխատանքի
Տեմպերի մասին,
Իմ աչքի առաջ կարծես ծառանում
Են փոքրիկում են
Մանչոցներով ու պրնդացող
Երկաթե թռչող միլիոն ձիաններ,
Միլիոն արտակարգ։
Չգում են օգում կռվի շտապով
Չորքերի արուն, պենքերի շաչյուն.
Կարծես գետերի, գարնան հեղեղի
Վշշանք ու շաղփյուն,
Կատաղի վշշոց հսկա չրվեժի,
Որի վշշոցը լսում են հեռու
Վնասների վրա։
Ու թեղ թվում է, թե մեր Միության
Մթնոլորտը ողջ

Լցված է այսպես ժիր նժույգների
Անթիվ բանակով.
Ու հառնում են, ու հառնում են
Աշխատանքների շեշտող կայծակով։

---

Հրեն հազար մի գյուղերից եկած
Որմնադիր, մշակ, վարպետ բանվորներ
Թափվել են այստեղ, արտերում մութաղ,
Աչքերում հուրեր։
Այն խոպան դաշտում, ուր առաջ մացառ
Ու քար էր անանց՝
Մի տարի չանցած կանգնել է քաղաք-գործարան
Հսկա։

---

Ոչ մի արնգակ և ոչ մի գնդակ
Այնպիսի թափով չի սուրում առաջ,
Ինչպես մեր կյանքի հսկա հաղթանակ
Շինարարության վազքով աննահանջ։

---

Ու թե հում նյութը պակասում է մեզ,
Մենք գիշերներն ենք վեր կենում անդից,
Գնում դաշտերը՝ արտով պարզևներս,
Նյութը խլում մեզ ապառող հողից...

---

*Համագումարում, նախագահության մեջ
նստած են Ստալին, Կալինին, Վորոշիլով,
Կիրով, Օրջոնիկիձե, Մոլոտով և այլք.*

*Բանվորների պատվիրակությունը՝*

Բերել ենք ձեզ մեր ձուլածո նոր պողպատի
Նմուշ միայն,
Ձուլել ենք մենք՝ գիշեր-ցերեկ մեր ուժերի
Կամքով միայն,
Առանց դրսի մի օգնության։

Տեսե՛ք, այստեղ, այս մեսաղում
Կուտակված է, խտացած է
Մեր հանճարի ուժը միայն.
Տեսե՛ք, ամեն բիլը սրա
Հյուսված է մեր մկանունքից,
Ու ամբացած մեր արտերի
Արյունաոտար երակներից։
Ամեն մի մուրճ, մուրճի հարված
Կռած, կոփած
Մեր արտերի Բունդ բաբախից։
Բունդ բաբախից ուրախության,
Որ մեր շնչից կյանքն է շարժվում
Առանց դրան մի օդնության։
Այսպես, կռվի ու պայքարի
Փոթորկի մեջ
Ծնվում է նոր
Մարդը բանվոր,
Աշխատավոր։

---

Հիմա բանվորը պատրաստ մեծ փորձով
(Հիսուն տարեկան ծերուկ հաստակում),
Զարած միրուքով
Չավոդից ուղիղ մոնում է վառոդ,
Դառնում ինժիներ ու պիտուն վարպետ
Ու ճարտարապետ։
Հիմա ամեն մի կին ու կամառոդ
Բյուրավոր դյուցից,
Գլուզտոնտես է, դյուզտոնտ, պիտուն,
Հիմա հեմարան, կամ համալսարան
Բառարակն է դնում։
Սիրտդ է դոփում, արյունդ ծփում
Ոգեխռովյունից,
Երբ տեսնում ես, որ նրանք հարատում՝
Մեր տնից, ջրից,
Հալալ օջախից,
Պրոլետար հոգով ու կենցաղով նոր
Մերոնք են բոլոր...

---

Ու նստել է առնչպարը ծեր
Տրակտորի պաղ բազին,
Ու փոփոխը դլխից հանած,
Բարձր պահած ձախ ձեռքին՝
Ղեկունում է ուրախ-ուրախ
Գարնան ժպտուղ արևին...

---

Նեպի օրերին, հիշում եմ, ասվեց՝
Մենք նահանջում ենք լոկ նրա համար,
Որ վագրի թաթով, ինչպես կայծակ նետ
Վրա տանք նորից է՛լ առաջ վազենք
Բոպևին հարմար:

Վրա ենք տալիս.
Հաղար դնդերով, բանակ առ բանակ,
Ինչպես նոանդոս օվկիանի ալիք,
Ինչպես ամպերի նրկնած հոծ քանակ՝
Վրա ենք տալիս:

Բանակ է, բանակ չէ՞ որ
Ամեն մի շարաթ, մեր ամեն մի օր...
Ահա, իմ զավակ, այսպիսի թաթից
Մի՞թե Բշնամին մեր չի ատրատփի:

---

Հիմա մեր գետը դուրալ մի ջրվեժ,
Հիմա մեր կյանքը՝ խլրտուն ու թեժ:
Հիմա մեր գետի պղտոր չէ ալիք
Եվ ոչ էլ մռայլ մեր գվարթ գալիք:
Հիմա ահազանգը մեր հաղթ հնչումն է
Ողջ աշխարհի մեջ նմանը չունի:

---

Մենք ենք սրանք, մեր բանվորն է
Ջնարում ծնված ու կյանք առած.
Ահա մի շարք արտադրիչներ
Աբշավանքով ընկան առաջ:
Ու մի ժամում հնձեցին արտն,
Որ կհնձվեր հինգ օրվա մեջ,
Ու մի ժամում հավաքեցին
Ամբարիները խութերի շեղջ:

---

Սա մեր արտի զարկերակն է,
Որ անընդհատ, ամեն վայրկյան
Հա՛ զարկում է, հա՛ զարկում է՝
Աշխատում է։
Սա մեր լարած մեքենան է,
Գիշեր-ցերեկ որ երգում է
Ու չի լռում, չի հանգչում,
Հա՛ զարկում է, հա՛ զարկում է...

---

Մեր մեքենում, զավոդներում
Սոցիալիզմն է արշավում,
Տեմպով արագ, թափով արագ
Արշավում մեր աշխարհում։

Գլխարկ ունի գլխին [գրած],
Կարմիր գլխարկ վարդերից,
Գառակ ունի հանկուճն հյուսած
Մեխակներից, վարդերից։

---

Մեր նոր կյանքը՝ հրաշք, հեքիաթ,
Հիացում,
Նոր մարդիկ են այս նոր կյանքը
Իրենց ձեռքով
Կառուցում...

---

Աշխարհում այս մեր ի՞նչ կա ավելի
Վեհ ու գեղեցիկ,
Քան կառավարությունը համանխառական,
Ո՞վ է ավելի երջանիկ ու վեհ,
Քան կոմունիզմը պատմությունում։
Նրա հիմքերը մեր երկրագնդի
Հիմքերի նման խորունկ ու հաստատ,
Նրա շարժումը մեր երկրագնդի
Պտույտից արագ,

Եվ նրա ուրին՝ հավիտյան առաջ՝
Դնալի հարատև կատարելության։

Ոչ ոք և ոչինչ անխախտ չէ այնքան,
Որքան մեր հավատի խարիսխը հաստատ,
Կուռ ու խորանիստ։
Ոչինչ և ոչ ոք չէ վանում այնքան
Եվ պայծառ այնքան,
Որքան ջահերը մեր վեհ ուսուցման
Եվ ճառագայթող նրա գիտության,
Որքան իդեան հավատարության։
Ոչինչ և ոչ ոք այնքան չէ հզոր
Եվ հաղթանակող,
Որքան կամունան...

---

Ես քեզ եմ նրգում, ու ողջունում քեզ,
Օ՛, դու նվաճում, հաղթական աճում
Երիտասարդության։
Ես պարզ աչքով եմ տեսնում ամեն օր,
Որ դպրանում ես ո՛չ տարրևներով,
Այլ ամիսներով ու շաբաթներով,
Որ ջիղ արմատով և՛ խորանում ես,
Ե՛վ կուռ ամրանում։
Ողջունո՛ւմ եմ քեզ...
Կերտող բրիշիդ առնդամարմին,
Եվ կոթողներիդ նրբակերտ ոճով,
Երգող քնարիդ հաղարաձևում,
Որ նվագում է հանճարի շնչով՝
Բոլշևիկի պես
Ողջունում եմ ես...

Ջրվեժի նման ցայտող գրերիդ,
Որ խլրտում են պոետի ձեռքում,
Որոտի նման թնդացող լեզվիդ,
Որ ճարտասանին հնչում է երգում՝
Ողջունում եմ ես՝
Բոլշևիկի պես...

---

Կոմունիստ՝ մարդն է, որ սիրուդ է ինդում
Ու հոգիդ ցնծում,
Երբ պատահում ես նրան դեմ ու դեմ
Ու հետը խոսում։
Խոսում նրա հետ,
Մարքուր, անաղարտ հոգու տեր մարդու
Ու կարծում, որ դու,
Որ դու արևոտ մի աննյակ մտար,
Ուր հոգնած հոգիդ կարող է խոկալ
Ու հանգստանալ
Մի մեծ ու կանաչ, հովանավորող ծառի
տակ ձգված,
Կողքին էլ աղբյուր, վճիտ, առնտրակ,
Որից կարող ես ծարավդ հագեցնել
Շոգ ու տապից ետ։
Հա՛, իմ լավ բալիկ, կոմկրիտ տղա,
Որ ահա քանի տարիդ լրանա
Այս թարմ հասակիդ,
Այս ճկուն, ծաղկուն, բուրավետ օրից՝
Այս իմ պատգամը դու լավ միտդ բեր
Ու հիշիր միշտ լավ.
Լավ կոմունիստը
Պետք է, որ լինի նույնպես և լավ մարդ։

---

## Բ Ո Լ Շ Ե Վ Ի Կ Ը

Ճակատը լայն է, աչքերը խոշոր.
Հարկավ Լենին չէ, ո՛չ էլ Ստալին,
Սակայն աչքերում կրակն է բոսոր
Ու նոանդը՝ անց մութը մեծ սալին։

Հարին շինել է, էն էլ ո՛վ դիտի
Կռպիտ մահուդից ու մաղից կտրած.
Մի ոտը ծիուն, մյուսը՝ միշտ գետնին—
Կարծես աշուղ է դադարեցուն դաստած։

Այսօր կոխոպում, վազը սովխոզում,
Բամբակի ցանք է, ին դարնանացան,
Սիրտը իր կրծքից թռչել է ուզում,
Ո՞ր գործն է տարվում առանց իր ցուցման։

Պառկում է շինելն հագին շատ անգամ,
Ու դեռ պլուխը բարձին չդրած,
Նա քուն է մտնում անուշ մուշմուշով
Ու արթնանում է ժպիտ-հանաքով։

Անդիկ է շարժուն, ամեն տեղ խոսուն,
Ամեն մի հարցին դպատա, փորփորող,
Դառող ու վիճող՝ լեզվով կարկաչուն,
Ժողովը ամբողջ համոզման բերող։

---

Հերոսիս տունը հեռու չէ իմից,
Հարևան ենք մենք՝ լավ բարեկամներ,
Երկու բնակիներ։
Նա իմ, ես նրա դրադարանից
Փոխանակում ենք հազվադյուտ գրքեր։
Երբ ես մտնում եմ նրա բնակարան
Պատկառանքըն է հոգիս պաշարում.
Այստեղ մի մարքսյան մտքի շռնմարան,
Այստեղ գիտական գրքերի շարան։
Հրեն «կապիտալ» ոսկի կազմի մեջ,
Տոհմականության կնիք ճակատին—
Ու կապիտալի բազմահազար էջ՝
Գիտակցության վառ ջահով լուսածին։
Հրեն Պլեխանով, Լենինը հանճար
Նայում են աչքիդ համոզիչ, անհաղթ։
Զգում ես իսկույն, որ տները սրա
Մարքսիստ է մի մեծ, խրոխտ գիտնական,
Թվում է՝ այստեղ իր գահի վրա
Բազմած է քննող դիալեկտիկան։
Ու կանգ ես առնում գրքերի դիմաց,

Խոսում է մխոցդ, քայլում է առաջ.
Գյուխում է ուշքդ իմաստը նրանց
Ու զգում ես աճ...

---

Կա ջահել ու կա՛ ջահել էլ,
Մեկը՝ առողջ պաղատու ծառ,
Մյուսը՝ միջից փտած խնձոր.
Մեկը՝ դառը ու անհոգի,
Ու հոգու տակ՝ միայն շոգի,
Շոգեքացող,
Մյուսը՝ զարնան շամանդաղի
Թարմաշունչ ցող։
Կան ջահելներ ու ջահելներ,
Մեկը՝ ծաղիկ է անթառամ
Սիրտ պարուրող,
Մյուսը՝ ծաղիկ շիրմի վրա,
Իսկ նրա տակ՝
Նեխված դիակ։
Մեկը՝ կյանքի կոզ<ք>ով անցած,
Վառոդի հոտ տանգամ չառած,
Գլխապտույտ շտապում է,
Որ աքեռը նախատահի
Համշաակի
Ու պատմության դիրկը ընկնի...

---

## Մ Ե Ն Շ Ե Վ Ի Կ Ը

Մենշևիկը մխին ու ան.
Գյուխը կախ, ժողչ մի դեմ
Քայլերի մեջ անգամ կասկած.
Կամքը ատաման, ո՛չ հարատև
Որքա՞ն էլ դեշ, նենգ ու խարդախ
Հոդի ունի։
Իր էութեամբ բոխշիկ գործի
Օձի նման...

Օ՜, խորտակվի նրանց ճամփան,
Որտեղի՞ց էր մեզ ոստո՜ւմ նկան.
Որքա՜ն, որքա՜ն խանգարեցին,
Որքան տուժեց մեր ապագան,
Թևև վերջը ճխլվեցին
Մեր անխիմ պատւոյտի տակ,
Թևև վերջը հաղթանակեց
Բոլշևիկյան մեծ աշխատանք։

---

## ՊՆՍԻՄԻՍՏԸ

Դու վատն ես տեսել քո ամբողջ կյանքում—
Ահա թե ինչու վատատես ես միշտ.
Բոլշևիկ չես դու, որ կյանքի շերտում
Ու ամեն ծալքում տեսնես դու աճում,
Ջոջաս, թե ինչպես մեր խանդի կայծով
Մենք հրդեհել ենք արդյունքի մի ծով,
Եվ ինչպես հողը սերմած մեր ձեռքով
Պատուղ է ավել մեկին հազարի,
Առել բոլշևիկի քրտինքով բարի։

---

## ՀԻՆ ԲԱՆՎՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ВРЕДИТЕЛЬ-ԻՆ

Դե էդ ա էլի, հորդ օդորմի,
Պետության խազնան հենց ա թե լինի
Հորդ բոստանը,
Որ որքան ուզես՝
Քաղես ու լափես։
Կամ թե կարծում ես պապիցդ թողած
Ժառանգությո՞ւնն է դախլումդ Ռահած...

---

Ու մենք ուրախ խինդ ու ծաղով,
Տանջյակ հաղար ջահել, փիքող,
Ահռեն հասակ,



387 — 12

Մանուկ կամքով ու բարեխոզ
Ջնրմ սրտերով
Պահանջում ենք կյանքի կոչնել,
Հասակ շինել
Ավանդները Լենինի մեր։
Ու մենք աճող բյուր բանակով,
Ուրախության աղաղակով
Միածանի կարմիր վզնոց
Պատրաստվում ենք կապել երկրի
Պարանոցով։
Ու թող ծիա, ալեկոծվի աշխարհը մեր՝
Օվկիաններից դեպի օվկիան,
Մուխերից ծով։

---

Երանի թե մեր հայրերը, մեր պապերը չարաչանջ,
Որ կրել են իրենց վզին արջի թաթի ծանրություն,
Որ ապրել են անձրևի տակ, հողմ ու բքին առանց
տուն,
Որ թողել են մեզ այսօրվա ժառանգություն—
Հմտություն,
Երանի թե ելնեն հողից,
Ու տեսնեն մեր երջանկությունն այսօրվա,
Ու հիանան, որ զուր չանցան իրենց ջանքերն ու
արյուն,
Որ թափեցին մեր այսօրվա նորեկ կյանքի ծննդյան։

---

Մեր ծնունդն ու մեր աճումը,
Մենք կռիվն ու նվաճումը
Մի վայրկենու էր նմանե
Որ կոկոն իր տերևներից,
Որ ճկուն իր երակներից
Ծնեց մեզ վարդ աննման։

Դուք ինձ ասում եք՝
—Ի՞նչ էիր այնքան
Տնքում ու տանջվում
Աշխատանքի մեջ,
Ի՞նչ էիր ուզում։

Դուք հարցնում էիք՝
Ի՞նչ էի այնքան
Թշնամիք որսած,
Այս ու նրա
Աչքերը ընկնում,
Հալածվում, զրկվում։
Ի՞նչ էի ուզում,
Ի՞նչ էի ուզում...

— Ա՜խ, իմ ընկերներ,
Հենց այս մեծ օրվա
Օրն էի ուզում։
Այս էի ուզում,
Այսօրվա հաղթը,
Այսօրվա բախտը։

Հենց այս օրերի
Երջն էի ուզում,
Երջը հաղթական
Փիոներների—
Կարմիր կտուցով
Դեղձանիկների։

Հենց այս օրերի
Երջն էի ուզում,
Երջը հաղթական
Եղնիկի նման
Կայտառիկ քայլող
Կոմսոմոլների։

Դուք ինձ հարցնում եք՝
Ի՞նչ էի ուզում։

Ինչ էի ուզում
Քարեր կրծելով,
Մութ նկուղներում
Ու ընդհատակյա
Մութ անկյուններում
Եռանդ մաշելով։

— Ա՜յ իմ ջահելներ,
Ա՜յ իմ ահեղներ,
Եվ բարեկամներ
Ու թշնամիներ.
Հենց այս էի ես,
Այս էի ուզում.
Այսօրվա օրը,
Այսօրվա հաղթը,
Այսօրվա բախտը։

---

Քո ուղեղով ու արյունով
Ծնունդ առավ իմ հոգին,
Քո բույրերի ու վարդերի
Բույրը շնչեց իմ կյանքին։

Ես ծիծաղս քո ավետման,
Ես փողհար քո մեծ կռվի,
Ա՜խ, ես վաղուց գիտեի որ
Ծագիկներդ պիտ փռվին։

---

Իմ պիոնները առել է հասակ,
Մարգարիտան իմ՝ ծաղիկ հասակով.
Իմ պիոնները գարձել է հիմա
Կոմերիտուհի ծաղիկ աչքունքով։
Նոճիի նման առել է հասակ,
Իմ պիոնները—կոմերիտուհի։
Թարմ գաղիներից մի սիրուն պատկ,
Օ՜, իմ ճակատին խորշոմ ու վաստակ,
Ինքս ինձ ասի՝
— Ինչ յաղ կապրի։

Ու այդ օրից ետ,
Այդ թարմ ու ջահել դափնյա պսակին
Դարձա ես ընկեր։
Իմ պիոնները հիմա դարձել է
Կոմերիտուհի քսան տարեկան,
Մայիսյան վարդից բույրով է անգամ։
Ու թարմ արշալույս,
Անց դարնանային պայծառ առավոտ,
Ու արյուն վառող,
Անց որ արևը ջահել ու կրքոտ։
Ու նուրբ արբի բույր,
Անց որ նոր հասած ողկույզ խաղողի,
Ու նրա թուշը,
Անց որ կարմրած ծիրանի թուշը
Նայիրյան բաղի։
Առողջ է, կայտառ, ճկուն ու սիրուն
Կոմերիտուհին՝ ընկերս գարուն։
Երբ նա քայլում է, նրնիկն եմ հիշում
Թավ անտառներում,
Երբ փողոց ելնում ցույցերի ժամին
Խրոխտ է նա վեհ, ու վստահ անվերջ,
Հազար փայլյանքի, հազար հույլերի
Ու ցոլքերի մեջ։

---

Հաղթ բազեների ձագեր են նրանք—
Բոլոր ազգերից, բոլոր ցեղերից։
Նորեկ սերնդին նկնք տանք հարգանք,
Հազար քաղաքներ, հազար գյուղերից։
Ու ասենք նրանց՝
Մենք ասպնջկինք, դուք շարունակեք
Մաղկեցնել նրան՝
Սոցիալիզմը մեր։

---

Կարա՞վ է քայլում,
Ի՞նչ այծյամ սիրուն—
Սև, թաց աչքերով,
Աչքերում գարուն։

Հպարտ է քայլում,
Կայտառ ու թեթև,
Կարծես աւրում է
Առած երկու թև...

---

Ու պիրլյանդներն մի ծառից մյուս ծառ
Կախկըխված էին կարծես լապտերներ,
Նվ արևի տակ անուշ ու պայծառ
Պըտպըտում էին կաղնու տերևներ։

Մի ուրիշ տեղում ալ փողպատներից
Շաղկաշարք էին նրանք ձիգ հյուսել.
Թե ո՞նց էր ժպտում պիոներներին
Արևը այդ օր, չեմ կարող ասել։

---

## Պ Ի Ո Ն Ե Ր Ը

Մեսծանի յոթը դուչնից
Նա կարմիրը սիրեց միայն,
Ու այն կախեց եղնիկ վզից—
Ալ վզնոցը պիոներյան։

Տարերքների բյուր ձայներից
Որոսի շեշան ընտրեց միայն—
Ահա ինչու նա այդ որից
Իր թմբուկից է անբաժան։

Նվ փողերից հազարականչ
Նա շեփորը սիրեց միայն,
Կարմիր մանչը որոտ կանչով
Ոգջունում է մեր առօրյան։

---

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# 1894

## ԵԱԴՍՈՆ

* * *

Ողջ էությամբ քեզ պատկանել
Ես չեմ կարող, նազելի,
Ինձ հուզում են այլ պատգամներ,
Այլ ցնորքներ խնկելի։

Եվ նոցանից ինձ անջատել,
Օ՜, չե՛ն կարող քո գովանք,
Ո՛չ հրատապ լուռ արցունքներ,
Եվ ո՛չ սիրո մի տանջանք։

Սիրելով քեզ, այն էլ գիտեմ,
Որ կյանքը չէ լոկ բերկրանք,
Եվ ես բոզոք չարությանդեմ
Դարձըրի ինձ գավանանք։

Եվ ահա ես ահեղ ձայնով
Մղում է ինձ պատերազմ,
Ես վարում եմ դեպ կյանքի ծով
Իմ մակույկը ամրակազմ։

Թո՛ղ նա ճնդրկի խոլ ալիքներ
Ամարթի հետ կռվելու,
Անհամասատ այդ կռվի մեջ
Լուսո կոթող կանգնելու։

**Ս. Գ. ՃՐՈՒԳ**

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՅՍ Է

*Յոթը տարիս նոր լրացած,*
*Ասաց մայրս հոգատար.*
*—Դե՛, զավակս, ժամն է հասած*
*Դպրոց մտնել՝ գիրք կարդալ։*

*Նոր-նոր շորեր ինձ հագցրին՝*
*Վայել ապիլ օրերի.*
*Վարժապետին ինձ հասցրին—*
*Անունըն էր Բեր—էլի։**

*Նստացնելով, ձեռքս տվին*
*Այբենարան, որ կարդամ.*
*Փայփայելով խնդրում էին,*
*Որ տառերին անուն տամ։*

*Ես կարդացի տառերն կարգով,*
*Եվ շնորհքիս փոխարեն՝*
*Առաստաղից ինչ-որ հրաշքով*
*Թափթփվում էր բաղդրեղեն։*

*Մինչ Բեր—էլին (լո՛ւյսը հոգուն),*
*Առում էր ինձ հայրաբար.*
*—Հրեշտակներն են այդ ուղարկում,*
*Որ դու սիրես միշտ կարդալ։*

---

* Բաբրի եղիա։

* * *

Օրեր, տարիք թևին տվին,
Եկավ ժամը տխրության.
Իմ անմոռաց վարժապետին
Մահը խլեց հավիտյան։

Մահվան վերջին հրաժեշտին
Նա ինձ ցողեց այս պատգամ.
— Ասի՛ր, որդիս, պիտույքն է՝
Լույս, կյանք և ուժ մշտակյան։

Այժմ էլ հենց որ ես ուզում եմ
Բացել գրքի մի երես,
Քարե կարկուտ լուկ տեսնում եմ
Թափթփվում է իմ վրես։

Օ՜, ինչ շա՛տ են, իմ Բեբ — էլի,
Այդ քարերը ինձ ցուցում.
Ո՞վ է ձգում... Մի՞թե էլի
Հրեշտակները...
Չէ՛ լսում

Պատավ էլին։ Խուլ, անբարբառ
Գերեզմանից ձայն չկա...
Շուրջս խավար...ես ուժասպառ...
Բայց դեռ որքա՜ն համփռ կա...

* * *

Թողու՛ հոգիս դեպի այն հեռուն,
Ուր վայրն է դալար ընկած անսահման.
Նա մեծ է որպես իմ վիշտը նուռն,
Որպես իմ վիշտը՝ անճար, անդուման։

Կրակարիճներն այնտեղ ֆախտված հույսերս,
Եվ հավատս ջերմ, անուշ հույզերս,
Մենավոր վայրում հեղեղի նման
Կհոսեն լռիկ ջերմ արցունքներս։

Սրտիս թևերին կպարեմ ամուր,
Կբռնեն երգեր նրա վերջերից,
Եվ միանգամից խնդէ հոգիս՝ թափուր
Կլինի ճնշող, մաշող հոգսերից։

Թողու՛ հոգիս այն չքնաղ հեռուն,
Ուր վայրն է դալար ընկած անսահման.
Նա մեծ է որպես իմ վիշտը նուռն,
Որպես իմ ցավը՝ անճար, անդուման։

## ՊՐՈՄԵԹԵՎՍԻՆ

Անհուն տանջանքը անդմած իմ կրծքին
Ես դեռ լսում եմ քո հառաչն ու լաց,
Նայում ահռելի այս լերկ քարափին,
Ուր շղթաներով էիր կաշկանդված։
Օ՜, Արամազդը անգութ էր, անխիղճ,
Անողոք իրա պատաստանի մեջ։
Բայց պահ մի լռի՛ր, ո՜վ դու անմահ պոհ
Վրնժխանդութեան, ու լսի՛ր դու ինձ.
Չե՛մ հաւիշտակել ես աստուածանից
Անխրատաբար արարչան կրակ.
Նա ի՛նքը ավեց իրա կամքով ինձ,
Որ տանեմ վառեմ ամբոխի ձրագ։
Եվ այդ կրակը առանց տրիտուր
Չէ՛ ինձ շնորհված վերին պատգամից.
Արդուն-արդունքովն իմ ազնկատուր
Լոկ կարողացա գնել նորանից։
Եվ մինչ այսօր էլ կրակի գնով
Վճարում եմ տուրքս արդուն-արդունքով.
Եվ ո՛չ βն մի անգղ է ինձ պիշատում,
Այլ հարյուր անգղեր, բյուրավոր օձեր
Իմ որդ, անպաշտպան սիրտս են խայթում
Ու պատառոտում արդունատ վիրքեր։
Օ՜, քո տառապանքդ կլինի անհատ,
Թէ համեմատենք իմ կսկիծի հետ։

## ՏԻՐՈՋ ՍԿԻՀԸ

(Լեգենդա)

Ասա՛ ինձ, մայրի՛կ, ճշմարի՞տ է այն,
Ինչ-որ պապիկը այսօր ինձ ասաց.
Իբր՝ երկնքում սկիհ ահագին
Աստծո գահի առաջ կա դրած,
Եվ ամեն անգամ ո՛րևէ հարված
Երբ մե՛զ է հասնում անխիղճ մարդկանցից,
Այդ սկիհի մեջ արցունք է կաթում
Վշտահար Տիրոջ տխուր աչքերից.
Իբր, երբ լցվի սկիհն արցունքով,
Այն ժամանակը միայն Մեսիան
Կիջնի երկնքից,
Նա՛, որի փառքը արբագործվում է
Աղոթքներով մեջ,
Նա՛, որին այսքան դար սպասում է
Մեր ամբոխը խեղճ,
Նորա հույսերին չի լինում մի վերջ...
—Այո՛, դավակս, ճշմարիտ է այդ—
Մայրիկը տխուր պատասխան տվեց։
Ու լռեց որդին... խորհում էր անթարթ...
Բայց շուտով մորը նորից հարցրեց.
—Ասա՛, մայրի՛կ ջան, բայց ե՞րբ կլինի,
Որ այդ սկիհը մինչ բերան լցվի։
Գուցե նորա մեջ արցունքն է ցամքում
Հավիտյան, գուցե... նա հատակ չունի՞։
Եվ քնքուշը դեմքով ու լի հեզությամբ

Նա իր աչերը մանկան պարզությամբ
Իր մորն ուղղեց,
Մինչ սա զխտակոր և անպատասխան
Մանուկին թողեց,
Նվ միայն լռիկ մի կսկիծ արցունք
Հանկարծ թաց արավ նորա թերթերունք։

---

Այդ ջերմ կաթիլը նման գոհարին՝
Փայլելով դիպավ մանկան դանդուրին
Ու բավալելով ճակատին մարեց։
«Օ՛, վշտի Աստված», մայրը հառաչեց.
«Ո՛ր այս արցունքն էլ գլորվի քո խնդճ
Սուրբ սկիհի մեջ»։

* * *

Մի բևեր կացին անտառի միջով
Տանում էր սայլը հիշ ու հոխշով,
Եվ արևագալի հղոր ճառագայթներ
Փայլեցնում էին նորանոր պողպատյա
Սուր-սուր բևեռներ:

Եվ ահա հանկարծ մատաղ թղթենիք,
Լսելով ձայնը անգութ տապարի՝
Վախկոտ շշուկով սկսան դողալ,
Ջգալով իրենց մահը եղկելի.
Բայց ծեր եղևնին, դարերի որդին,
Շշնջաց կամաց թղթենիներին.
—Ինչո՞ւ վախենաք, դողում եք որպես.
Թող որքան կուզեն կտրեն մեզ հիմքից,
Մենք չենք վախենալ մեր ոտնաներից.
Քանի կացինին դուք կատաք կոթներ—
Դեռ շա՜տ պիտ պրկվեք ձեր ցավակներից:

## ՀԱՆՈՒՆ ՕՐԵՆՔԻ

Ապրում էր նաչար այրին մեկուսի
Իր երկու մանուկ զավակների հետ.
Մի օրավար հող նրա ամուսին
Թողել էր միայն իր մահվանից ետ։

Գարնան՝ երբ այրին սկսեց վար ու ցանք,
Տանու քահանան եկավ ու ասաց.
—Էշը հորթի հետ լծելն է հանցանք,
Լուծի՛ր, օրենքով է՛ այդ արգելված։

Դաշտը մշակված, հերկված էր արդեն՝
Եվ գնաց այրին սերմը ցանելու.
Նորից խրատով եկավ քահանեն,
—Զգուշացիր, կին, կորեկ խառնելուց։

Մինչդեռ մոտ էին հունձի օրերը
Կրկին երևաց, ասաց քահանան,
—Անհունձ պիտ թողնես արտի կողերը,
Ա՛յս է օրենքի արդար հրամանս։

Յորենը հարդից զատելու ժամին
Եկավ քահանան երկու պարկ ձեռքին՝
—Ասածս տուրքը, դե, չամփիր, ո՛վ կին—
Իսկ ատամնորդը նրա ծառայինս։

Չէ՛, ապրել այսպես էլ ես չե՛մ կարող.
Եվ այրին վճռեց վաճառքի հանել
Հողի կտորը և նրա փողով
Շուտափույթ մի զույգ գառնուկներ առնել։



387—13

Եվ գառնուկները շուտ մաքի գարձան.
Բայց երբ խուզելու օրը մոտեցավ,
Հայտնվեց քուրմը, ասաց պահանջով՝
—Առաջին բուրդը ի՛մն է օրենքով։

Երբ արժանացան նորածին գառան,
—Պետք է սրբությամբ պահնս օրենքը,
Նկատեց այրուն ասլրծո ծառան,
—Կամ տնպրանիկը, կամ տուր փրկանքը։

—Ով արդարադատ, արարիչ Աստված,
Այժմ ի՞նչ անեմ, լալիս էր այրին.
Արդյոք չմորթե՞մ արանց նոր ծնված,
Գոնե քիչ ապրուստ լինի որդերին։

—Հերին, գլուխը ու փորոտիքը
Հանեցեք տալ ինձ, ասաց նա կրկին,
Այդպես է հնուց գրված օրենքը...
—Հեռացի՛ր, անպուճ... լալում էր այրին...

—Ի՛նչ եմ այս օրից նվիրում միայն
Իմ վերջին լուման, ի՛նչ, ո՛վ Արարիչ.
—Սրճե այդպե՛ս է, գոչեց քահանան,
Այժմ ամենը պիտի տաս դու ինձ։

—Ի՞նչ... ինչո՞ւ, օ՜, քուրմ,
Մի՞թե չես լսում,
Որ նվիրում եմ ամենն Աստծուն.
—Եվ ամենը այն, որ Աստծունն է,
Պիտի իմանաս, իմըն է, ի՛մ քույր...

## Ա Վ Ա Զ  Ե Վ  Ա Ս Տ Ղ Ե Ր

Հին ուխտի դրքում ես միշտ կարդում եմ՝
«Ագռ իմ հարուստ,
Մխրատրծական քայլերիդ համար սերունդդ ազատ
Պիտի բազմացնեմ, որպես աստղերը երկնակամարի,
Բյուր-բյուրից դարձնեմ որպես ավազը անհուն ծովերիս»։
Օ՛, Աստվածաշունչ, սուրբ գիրք անդրանիկ՝
Առեղծվածության,
Քո հին էջերը երբ կարդում էի օրով մանկության,
Կամ՝ տևանում էի անցած-դնացած բախտը մարդկության,
Հրճվում էի ես հաղիանակովը վեհ արդարության։
Այժմ ասա՛, Տե՛ր, է՞ր չիրագործվեց կատակիդ սուրբ էջ,
Տե՛ս, ժողովուրդդ հնծո՛ւմ, անքում է հոգս ու ցավի մեջ.
Ավազի տեղ ենք այժմ ծառայում աշխարհի համար,
Եվ ամեն երկրում, ամեն անցորդի լինում ոտնահար։
...Եվ ա՛յն աստղերը, որոց բազմությունն մեզ էր խոստացած,
Ո՛ւր են նրանք, Տե՛ր... մեզ համար նրանք վաղուց են
խամրած...

## ՍՈՒՏՆ ՈՒ ՔԱՄԻՆ

Երբ Արարիչը կամեցավ ջնջել
Մեղսոտ աշխարհը ջրի հեղեղով,
Եվ արքաներին խնդրամահ անել
Իրանց հպատակ ժողովուրդներով,
Որ ապագայում կյանքը հանրային
Վերանորոգվի Թարմ սերունդներով—

Նա հրամայեց ալևոր Նոյին
Ողջ էակներից զույգեր ընտրելու,
Եվ իր փրկարար կենաց տապանում
Բոլոր զույգերին պատսպարելու։

Եվ ահա՛ բոլոր երկրի ծայրերից
Գալիս են, թռչում, սողում դեպ տապան—
Արուն էգի հետ, ջոկ ջոկի նորից՝
Կենաց հարկի տակ փնտռում ապաստան։

Երկնից հրամանին հլու, խոնարհած՝
Ե՛վ երերային եկան ոգիներ,
Մարդկային ոգու ուժերից ծնված՝
Աննյութ, վերացիկ շա՛տ գաղափարներ.—

Եվ հեզաբարո մտավ Ողջումն՝
Ապաշխարության ձևորիցը բոնած,
Ապա զույգերով Անկարության
Ապիկարության ուսերին հենված,
Մտերմությունը գրկված Սիրո հետ
Եկավ ու մտավ ուրախ ու վետ-վետ,

Ահա ննջեցյալ հուշիկ սողալով,
Ոխը հետևից վրեժխնդրության,
Երկյուղն անվատահ անվերջ դողալով,
Սահից ու փարվից մեղկ վախկոտության.
Սրանց հետից տապանը մտան
Սարկությունը՝ շողոքորթության,
Անզորությունը՝ խաղաղության հետ,
Իսկ Տրտմությունը մռայլ հառաչատ.
Հետևից վշտին լալով անընդհատ.
Վերջապես մտավ տապան փրկավետ
Ե՛վ ջերմ Հավատը պրկված Հույսի հետ։

Ամանդությունը այսպես է ասում.
Փորտոզի տալով նրանց մեջ թաքուն
Եկավ և՛ Սուտը ճարպիկ ու ճկուն.
Կրկուի նման կրկում է, խոսում,
Առնետի նման սուրում, վխտում,
Մերթ թագնվում է, կուչ գալիս, լսում.
Այս և այն ձևին համակերպվելու,
Սրան կամ նրան նա նմանվելու
Փորձեր է անում,
Փրկության տապան մտնել է ջանում.
Բայց իզուր, նրան այդ չէ հաջողվում,
Նոյի Յափանցիկ աչքից սրատես
Սուտը խուսափել չի կարողանում,
Եվ ձայնը Նոյի հնչում է այսպես.
—Դու է՞լ ես այստեղ, բայց ո՞վ է քեզ հետ,
Մենա՞կ ուրեմն... Դե՛, շո՛ւտ դարձի՛ր նա.
Գնա՛, գտի՛ր քեզ արժանի ընկեր,
Երբ ուզում ես հեղեղից փրկվել։

Ու գնաց սուտը տխուր ու նկուն
Եվ ճանապարհին պատահեց Փառուն.

—Այս ո՞ւմ եմ տեսնում, սիրելի ընկեր,
Եվ այդպես տխո՞ւր... Ի՞նչ է պատահել,
Չէ՞ մի ժամանակ դերի ազատ թռչնիկ,
Եվ խայտաճամուկ որպես Քիթեռնիկ,
Դու թռչում էիր ինձնից էլ արագ.

«Աստ—կոանի» խմբակներին մեջ,—
Սիրած քույրերիդ շրջանում անվերջ,
Թափառում էիր աղատ համարձակ,
Առասպելական շորերդ հագնում,
Թևեր ու ճկուն նրանց մեջ բարձում։

—Ա՛խ իմ արտակից, սիրելի ընկեր,
Դժբախտությանդ եմ այսօր հանդիպել.
Նույն մոտ էի
Եվ պիտես, էլի՛,
Ատում է,— հարկավ, արտանդ եմ ուրախ
Ընդունել և՛ քեզ իմ համեստ փարախ,
Սակայն ոչ մենակ... մի՛ր անարդել,
Երբ կըճաշես քեզ արժանի ընկեր.—
Իմ հոգու հատոր, աղնիվ բարեկամ,
Գնա՛նք միասին, օգնի՛ր այս անգամ։

Քամին տալիս է Սոին պատասխան՝
—Աստ, բարեկամ, չգիտե՞ս մեթեն
Որ իմ երկրային թռիչքը թևեն
Աղատ անարգել չունի մի սահման.
Նույն տապանը չէ՞ որ ինձ համար
Նեղ է, անազատ, անպետք, անհարմար։
Բայց դև ինչ արած, քանի խնդրում ես
Տեղափոխվելու քեզ հետ միասին—
Օգնել ընկերոջ պատրաստ եմ և՛ ես.
Միայն տապանում երբ ոեղ առանաս,
Ի՞նչ վարձատրություն դու ինձ պիտի տաս։
—Օ՛, ամենայն բան, ինչ էլ կամենաս,
(Քո հավատարիմ ատրուկն եմ, գիտեաս),
Եվ ա՛յն ամենը, ի՞նչ ձեռք կբերեմ՝
Ես դյուրահավատ մարդկանց շրջանում,
Իմ հարստիկությամբ ինչ էլ ժողովեմ,
Պարզևել միայն քեզ եմ խոստանում։

Այն օրից, ինչ որ Սուսն է ժողովում,
Աղատ, համարձակ քամին է տանում։

Լինում են օրեր, այլ և տարիներ,
Երբ առաւօրեն նա հունձ է անում,
Կառուցանում է քարէա կամարներ,
Նրանց դռներին փականքներ դնում.
Ե՛վ խորհրդաւոր մութ նշաններով,
Ե՛վ ահեղագոչ բյուր նզովքներով,
Փակում, կնքում է անխորտակելի
Ամուր նիգերը հակա շենքերի։
Բայց քամին խիզախ — ոգին ճշտութեան,
Ավետարերը վեհ ազատութեան՝
Թռչում է խակուն և անմատչելի
Ջարդում, փշրում է դռներն ու չղթան
Գող ու անառիկ ամրութիւնների.
Եվ բնակրները հակա շենքերի
Մի հզոր թափով ցրիվ է տալի,
Որպես մութ երազ խոլ զառանցանքի,
Կամ որպես փոշի լայն անապատում,
Որպես թանձր ծուխ վառված խարույկի,
Անսահման դաշտում։

## ՋԱՏԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

(Փոխադրություն)

Մռայլ ու մխուր խարխուլ խրճիթում
Մանկական անհոգ ժպիտը դեմքին,
Կանգնած զատկական սեղանի առաջ,
Հարցնում է մանուկն իրա հայրիկին.

—Ասա՛, հայրիկ ջան, արդյոք ո՞ւմ համար
Այն մեծ բաժակը լցրիր գինով.
—Մեր հյուրի համար, սիրելի զավակ,
Որ այցելության պիտ գա պիշերով։

Այս պիշեր հենց որ սեղան կնստանք
Մեծն Փրկիչը երկնքից կիջնի,
Եվ ամեն հայի տունը մտնելով
Զատկական ուրախ սեղանը կօրհնի.

Ապա ամեն տան մի ումպ, մի կաթիլ
Այս մեծ բաժակից կըմպի նա գինու։

* * *

Զատկական համեստ բաժախումիցետ
Խեղճ ընտանիքը սեղանը թողից.
Մինչդեռ զարմացքով, ահա, իր հորը
Մանուկը տխուր նորից հարց տվեց.

—Բայց ո՞ւր է, հայրիկ, Մեծն Փրկիչը,
Գիշերըն անցավ, նա մեզ չայցելեց։
—Սիրուն իմ զավակ, նա արդեն եկավ
Եվ սուրբ շուրթերով մեծ թասըն ըմպեց,
Եկավ աննկատ, կրկին չգացավ։

# 1895

## ԱՁՈՐՆՍՈՆ

### I

Կանաչ տերևով ծառը ծածկվից
Եվ կոկոններով ինքույշ հագնվից.
Կենսատու ցողով մարդարտանման
Ուռճանում էր նա շնչովը գարնան։
Բայց նորա գալար շյուղերին մոտիկ
Թաքնվից դաժան ձեր—սառնամանիք։
—Է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, մանուկ կոկոններ,
Չե՛ս տալ, ան՛ս, գոռով ինքս կքաղեմ...
—Ա՛խ, Բողիր հանդիստ իմ բողբոջներին.
Նորա ծաղիկներ գոնե բացվեին...
Սառնամանիքին ծառը չընջաց
Եվ ողջ էութեամբ արմատից դողաց։

### II

Եվ ահա կամաց-կամաց բացվեցան
Անուշ բուրմունքով գեղաշուք կոկոններ
Եվ արևակից ջերմ փայփայվեցան,
Իսկ Բոշունները անհոգ երամներ
Հնչեցին ուրախ, սիրահար երգեր։
Հանկարծ ծառի մոտ Բոսով շար քամին.
—Է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, սիրուն ծաղիկներ,
Կը հաճեցանեմ Քե չէ այս ժամին...
—Ա՛խ, խնայիր ինձ և մի՛ արգելիր
Իմ ծաղիկներին պատառ լինել...
Կատաղի քամուն ծառը չընջաց
Եվ ամբառներով վախից դողդողաց։

Բայց ահա մատաղ պատուղներին խակ
Քնքշացրնց սիրով ամռան արեգակ,
Եվ ծառը զուգվեց հասուն մրգերով։
Մոտեցավ նորան հուշիկ քայլերով
Հրաշալի կույսը՝ առպիրը նեղված.
— Ա՜խ, տա՛ր ինձ, ասաց, անուշիկ մրգեր.
Ջոռով չեմ խլիլ երեխայրիքներ...
— Ա՛ռ քեզ, նազելի, ահա իմ ճղներ
Քեզ են սպասում վաղուց անհամբեր,
Որ դաս հեշտացնես նորանց ծանր բեռ....
Եվ ծառը սիրով նորան ողջունեց
Ու խոնարհվելով ճղները կախեց...

# 1897

## ԳՈՋՄԱ ՊՐՈՒՏԿՈՎ

* * *

Երբ դու տեսնես բոկոտն մանկին,
Ճակատը մռայլ նման կապտանկին,
Ցիրցան մազերով, որ խնչակորույս
Անվերջ ասրտուտով չղաձգական
Մոնչար անհույս,—
Գիտցիր նա եմ ես։

Երբ դու տեսնես դժրախտի մանկին,
Որին նզովն ամրոխի որդին,
Որ հակատից— կրքից կուրացած—
Պոկել դահիճներըը նորա վաստակած
Նա չանար միայն, —
Գիտցիր նա եմ ես։

...Նա՛, որ ոչոքին ծունկ չէ խոնարհում
Եվ ոչ իր ճկուն մեջքը գալարում...
Բայց բավական է...
Ժպիտն է սահում իմ շրթունքներից—
Մինչ սրտիս խորքում
Օձն է թունալից...

ԳԾՈՓԵ

## ԲԱՅՐՈՆԻՆ

...Մի լացիր այդպես սգավորի նման,
Մենք նախանձում ենք փայլուն վիճակիդ.
Կապրեիր դու վեհ, բեև վշտահար,
Հայաթա երգերով տոգորված հոգիդ:
Ա՜խ, ծնված էիր դու բախտի համար,
Որպես մի զավակ հին փարթամության,
Բայց, ավա՛ղ, շատ վաղ հալ ու մաշ եղար՝
Մաղիկ հայրական պատանեկության:
Քեզ ի՞նչ էր պակաս... հայե՞ցք թափանցիկ,
Սրտի ջերմությո՞ւն, ինչ կորովի միտք,
Կնոջ արվեստ ընդունակությո՞ւն,
Խիստ երգերի ստեղծագործությո՞ւն:
Դու ծնվում էիր անմրրիկ բախտով,
Հեռավոր վայրեր ճեղքում-սլանում,
Դու առում էիր խորին զգվանքով
Տիրող կարգերը իրենց օրենքով,
Եվ ուժեղ միտքդ բարձր խոհերին
Անբիծ զգացմանդ ապամիներով,
Դու ձգտում էիր դեպի երկնային.
Բայց իզուր... կյանքում նրանց չգտար,
Եվ ո՞վ կգտնի... Տխուր այս հարցին
Անողոք կյանքը պատասխան չունի...

## Մ Ի  Ա Ն Գ Ա Մ

Մի անգամ մտա ես թավուտ անտառ,
Տեսա նապլուս ու քնկա նորից.
Հենց որ մոռացա, նա ինձ կզռամ,
Վկանչեմ մարդկանց, հետոյից ինձնից։

—Ոչինչ,— ասում եմ,—
Եվ իմ նապլուն սեղմում եմ կրծքիս,
Համբույրի տարան շաղ տալիս առատիկ.
Բայց նա՝—ա՜խ, կամա՜ց, կամա՜ց, սիրելիս,
Այդպես մեզ չանլ կարող են մարդիկ...

# 1 9 0 4

**Մ. ՌՇՈՒՆԻ**

## Ա Մ Ե Ն Ի Յ Ա Ռ Ա Ջ...

Չքավոր, եղիր դու աշխատասեր,
Հպարտ ու ազնիվ ամենից առաջ.
Թե սորուկ անանց, շուռ տուր երեսդ,
Նա առնչի է ամենից առաջ։

Հարուստ իշխանի նվաճող ուժից,
Տե՛ս, չվախենա՛ս— ամենից առաջ,
Հարստությունը չէ՞ որ ընկեր է
Անազնվության— ամենից առաջ։

Թող ցամաք հացը լինի կերածդ,
Վերնաշապիկդ՝ կոշտ վուշից կարած.
Ուրիշը թևկուզ բավի՛շ է հագած,
Բայց արիկա՛ է ամենից առաջ։

Ամենից առաջ, չքավոր եղբայր,
Տիտղոսը չէ՞ որ հնչյուն է դատարկ,
Բայց թե ազնիվ ես— կունենաս միշտ հարդ.
Ազնիվն արքա է ամենից առաջ։

Ահա ա՛յլ հարուստ դառը ու փրփած,
Մեզ ի՞նչ օգուտ, թե ոսկումն է թաղված,
Թո՛ղ հպարտանա իր հարստությամբ,
Բայց որ հիմա՛ր է ամենից առաջ.

Ամենից առաջ, ամենից առաջ
Մե՛ղ— աշխատանքի որդիներուս համար
Նրանց ժպտալն ու շուքը ոսկեզար
Միծաղելի՛ է ամենից առաջ...

## ԳԱՐՆԱՆ ԱՎԵՏԻՔ

Գնալի սառույցի-ցրտերի աշխարհք,
Հետու հարավի-արևի երկրից
Սլացավ մեզնակ թռչնիկը սիրուն
Եվ սկսեց երգել՝ քև իր հետևից
Գալիս է գարուն։

Ծնդաց անտառը երգի հնչյունից,
Երկինքը ժպտաց ուրախությունից։
Պարզվեց ճակատը մռայլ լեռների,
Ամեն տեղ աղմուկ, հրճվանք ու զրույց
Տիրեց բնակյալի։

Լուրը շուտ հասավ և վտակներին,
Նոքա էլ սարսան սառած գետերին.
Գետը արթնացավ և լույս հորձանքով
Տվնց ու փշրեց սառույց շերտերը
Իրենց կապանքով։

Ապա գրոհ տալով ժայռոտ ափերին,
Հեղեղեց ձոր, դաշտ— ինչ տեսավ ճամփին.
Եվ ալիքների ծածան հոսանքով
Տեղդեց ճահիճներ խիզախ աղմուկով։

Զարթացավ ծերուկ սառնամանիքը,
Գոռաց.— Ո՞վ բնիկ համբավը գարնան,
Ո՞վ խիզախեց իմ վրդովել կյանքը,
Ե՛տ, խեղդել ձյունի հյուսերով նորան։

Խնդացին ծերի բարկությանն վրա
Կայտառ գետերը՝ ճերմակ փրփուրով,
Հակա ապերը՝ կանաչ կատարով,
Եվ ներում ինդող որսը՝ սրով։

Դողդողաց ծերը իր ձյունե գահից
Եվ դառն լացից հուսահատ, տխուր.
— Օ՜, դուք անմիտներ, մի՛ ծաղրեք դուք ինձ,
Ձեր չար խնդումից զգում եմ ապտուտ։

Ես չէ՞ի, արդյոք, որ փայփայեցի
Ձյունյա քողիս տակ գարնան երազներ,
Ես չէ՞ի, արդյոք, որ կաշկանդեցի
Իմ խիստ օրենքով ձեր ըմբոստ հույզեր...
Այսպես նա խոսեց արցունքը աչքին
Ու անհետացավ լեռների ետքին...

---

Մինչ ուրախության երգերն են ինդում,
Մերուկին ծաղրում,
Մայր երկրի վրա, վառ ու հաղթական,
Գարունն է տիրում։

# 1902

## ՄԱՐՍԵԼՅՈՉ

Հրաժարվե՛նք, ընկերնե՛ր, հին օրենքներից,
Նրանց փոշին թափ տանք մեր ոտքերից.
Մենք պաշտել չենք կարող ոսկե կուռքերին,
Գարշում ենք բռնակալ ցարերից.
Մենք կերթանք հալածված ընկերների հետ,
Մենք կերթանք մերկ, սոված բանվորների հետ.
Դավադիր բշնամուն մենք միշտ կանարգենք,
Ու կովի նրան դուրս կքաշենք։

Դե՛հ, է՛լ, բողոքի՛ր, ա՛յ բանվոր դասակարգ.
Ելի՛ք, բշնամուն կովելու, ջա՛ն եղբայրք.
Թող պրոհ տա ամբոխը անվախ, քաջ
Առա՛ջ... առա՛ջ... առաջ...

Բռնակալ հարուստներ անկուշտ հաղուրդով
Ծծում են մեր արյուն-աշխատանք.
Գոփում են, հղփանում նրանք մեր քրտնով,
Պահանջում, որ մեր հացն իրենց տանք.
Սոված կաց, որ աղայը զվարճանան,
Սոված կաց, որ խաղում բիրժային
Իրենց խիղճն ու հոգին վաճառքի տան
Ու ծաղրեն մեր պատիվ մարդկային։
Դե՛հ, է՛լ, բողոքի՛ր, ա՛յ բանվոր... և այլն։

Դու հանգիստ կունենաս լոկ դերեզմանում.
Օր չանցնի— հարկերը չավելնան.
Վամպիր ցարն կտանջի քեզ իր գնդանում,
Վամպիր ցարն կարոտ է քո արյան.

Նրան պետք են միայն բյուր գինվորներ,
Դո՛ւրս քաշիր, տուր նրան զավակիդ,
Նրան պետք են խնջույք ու պալատներ,
Տուր նրան հյութերը ջղերիդ։
Դե՛հ, ե՛լ, բողոքի՛ր, ա՛յ բանվոր... և այլն։

Քա՛վ է էլ, որքան ցավ կրնցինք մենք,
Այսուհետ պիտ կուվենք հանապազ.
Հյուսիսից սկսած մինչև արևելք—
Վոլգայից մինչ հեռավոր Կավկազ.
Տերտերներ, ոսոխներ, հարուստներին
Եվ վամպիր թշնամի բիրտ ցարին
Տո՛ւր, ջարդի՛ր, նզովված այդ շարերին,
Մինչ փայլի արևը մեր օրին։
Դե՛հ, ե՛լ, բողոքի՛ր, ա՛յ բանվոր... և այլն։

Կշողա արյունոտ արշալույսին
Արևը սիրո, եղբայրության,
Նա գինված արյունով ժողովրդին
Պիտ հասցնի նրան երջանկության
Եվ կգա օրը մութ ազատության,
Բռնության ու շարիք կկորչին,
Եվ համայն մարդկության անուն միացած՝
Վեհ աշխատանքին ջերմ կհանգչին.
Դե՛հ, ե՛լ, բողոքի՛ր, ա՛յ բանվոր... և այլն։

# 1905

**Գ. ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿԻ**

## ՎԱՐՇԱՎՅԱՆԿԱ

Շաչում են ոխերիմ հոդմներն անընդհատ,
Սև, մութ ուժերը կատաղի ճնշում,
Նրանց դեմ վարում ենք օրհասական մարտ,
Անհայտ մի վիճակ է մեզ դեռ սպասում.
Բայց մենք կպարտվենք անվախ ու հպարտ
Ռազմի դրոշակը— բանվորի ազատ,
Դրոշակը մեծ գործի ժողովրդական,
Հանուն նոր կյանքի— սուրբ ազատության:

Դեպի մա՛րտ արյան,
Արդար, սրբազան,
Քայլեցե՛ք առաջ,
Բանվորներ քաջ:

} կրկնել

Մեռնում է մեր օրում բանվորը սովից,
Եղբայրնե՛ր, մի՞թե էլի համբերենք,
Մեր կորիճ ընկերներն կախաղաններից
Հերոսին վայել՝ չեն սարսել երբեք.
Վեհ գաղափարի համար ընկնելով
Չեն կորել անհետ պատմի գոհերը,
Նրանց անունը հաղթական երգերով
Պիտ հիշեն հետնորդ մեր սերունդները:
Դեպի մա՛րտ արյան, և այլն:

Առելի է թագը բռնապետների,
Ամբոխի շղթան միայն պաշտելի,
Նրա արյունով ողողված գահերը
Մեր ոտքերի արյամբ կնկրկենք.

Վրեժ ու ո՛խ անողոք բոլոր պիղծերին,
Բանվորի արյան կարոտ ցնցերին,
Վրե՛ժ, վրե՛ժ ու մա՛հ բոլոր պլուտոկրատներին,
Մոտ է հաղթության ժամը պանծալի։
Դեպի մա՛րտ արյան, և այլն։

## СМЕЛО, ТОВАРИЩИ, В НОГУ

Անվախ ընկերք, քայլենք շար-շար,
Հոգով կռվում ամրանանք,
Ազատության վեհ ճանապարհ
Կրծքով հարթենք մեզ համար։ } կրկնել

Մեր օրրանը՝ աղքատություն,
Մեր ծնողը՝ աշխատանք.
«Եղբայրություն, ազատություն»— } կրկնել
Այս լինի մեր դավանանք։

Շղթաներում շատ տանջվեցինք,
Շատ էլ սոված մնացինք,
Սև օրերը ահա անցան— } կրկնել
Մոտ է ժամը հատուցման։

Ժամ է այժմ էլ գործի դիմել.
Դնալի կռիվ սլանալ.
Մեզ՝ քաջերիս, չէ՛ էլ վայել } կրկնել
Մութ ուժերից վախենալ։

Եթե նորա գոհ էին, կուշտ,—
Այդ էլ շնորհիվ բանվորի.
Ե՛կ ինքներս լցնենք փամփուշտ, } կրկնել
Հրացաններին կապենք սվին։

Հզոր բազկով մենք նա մղենք
Լուծը՝ ընկած մեր մեջքին,
Եվ մայր հողի կրծքին մխենք } կրկնել
Ալ դրոշն աշխատանքի։

Մ. ՄԻՍԱԿՅԱՆ

## СМЕЛО, ДРУЗЬЯ, НЕ ТЕРЯЙТЕ...

Առա՛ջ, տղերք, մի վհատեք,
Նետվե՛նք անվախ դեպ կռիվ,
Մայր-օրրանը ե՛կ ազատենք,
Փրկենք մեր կյանքն ու պատիվ։

Թև պատահի, որ մենք մեռնենք
Աքսորում կամ բանտերում,
Գործն է անմահ, ա՛յն կիծողեննք
Սերունդների սրտերում։

Թող բանտերում մերոնք մաշվեն
Թող դաղնի մեզ կրակով,
Աքսորավայր թող մեզ քաշեն,
Պատժեն մահով, տանջանքով։

Թև պատահի, որ մենք մեռնենք
Աքսորում կամ հանքերում,
Գործն է անմահ, ա՛յն կիծողեննք
Սերունդների սրտերում։

Ամբոխը խնդճ հնծում, ենթում,
Տառապում է, հառաչում,
Ձեռքերը նա մեզ է մեկնում,
Օդնության է մեզ կանչում։

Թև պատահի, որ մենք մեռնենք
Աքսորում կամ բանտերում,
Գործն է անմահ, ա՛յն կիծողեննք
Սերունդների սրտերում։

Կգա ժամը աղատ օրի,
Ամբոխը մեզ կերգի հիմն,
Բարի խոսքով միտ կրերի
Ու կայցելի մեր շիրիմ։

Է՜հ, թող լինի, որ մենք մեռնենք
Աքսորում կամ բանտերում,
Գործն է անմահ, ա՛յն պիտ թողնենք
Սերունդների սրտերում։

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Ելե՛ք, անեծքի նշավակներ,
Քաղցի, ճորտերի ողջ աշխարհ,
Եռում են զայրույքից մեր սրտեր
Մահվան կռիվ մղելու համար.
Բոնության աշխարհը մենք կավերենք
Հիմնովին ու մի նոր աշխարհ
Նրա փոխարեն մենք պիտի հիմնենք,
Ով սարսուռ էր— նա կդառնա տեր։

Այս կլինի՛ և՛ վերջին
Ե՛վ վճռական մարտ,
Ինտերնացիոնալին
Կհարի ամեն մարդ։

Ո՛չ ոք չի տալու մեզ փրկություն,
Ո՛չ հերոսն, ո՛չ ցարն, ո՛չ աստված,
Ինքներս պիտ խլենք ազատություն
Մեր կուռ ուժերով միացած.
Եվ երբ տապալենք մենք բռնություն
Ու ձեռք բերենք երջանկություն,
Եկե՛ք, կոփե՛նք ու բորբոքենք կրակ,
Քանի որ երկաթն է տաք-տաք։

Այդ կլինի՛ և՛ վերջին
Ե՛վ վճռական մարտ,
Ինտերնացիոնալին
Կհարի ամեն մարդ։

Մենք ենք միայն տերը աշխարհքի,
Հզոր գործը աշխատանքի,
Երկրի տիրողը պիտ լիննենք մենք,
Իսկ պարազիտները՝ երբե՛ք.
Ու թե ահեղ մի որոտ պայթի
Դահիճ գամփռների դլխին,
Մեզ համար նոր արև պիտ ծագի,
Փայլի իր ջերմ ճառագայթով։

Այդ կլինի և՛ վերջին
Ե՛վ վճռական մարտս,
Ինտերնացիոնալին
Կհարի ամեն մարդ։

Ե. ՇԿՈՒԼԵՎ

## ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Դուք զոհ գնացիք կռվի մեջ վճռական,
Ամբոխի սիրով անկեղծ ուղեկված.
Դուք ջանք բափեցիք վերջին շունչ տալ նրան,
Տեսնել նրա կյանք, պատիվն ազատված։

Երբեմն մաշվեցիք մութ, խոնավ բանտերում,
Անխիղճ դատաստան ձեր դեմ վճռեցին.
Ոտքս դահիճներ անողոք, արնախում
Շաչող շղթաներ ոտքիդ կռեցին։

Մինչ ճոխ պալատում քեֆ կանի դահիճը,
Վառը դինիով կուզենա մարել,
Արդեն օրհասի երկաթյա կուռ աջը
Մահվան խիստ վճիռ նորան է դրել։

Հասել է ժամը, արթնացել բանվորը
Հակա, քաջադեր դիմում է մահին.
Իսկ ձեզ բարի՜ երթ, ընկերնե՛ր, ձեր գործը
Ազնիվ, վեհ տարաք ձեր հանապարհին։

Ձեր ետքից կգան թարմ ու նոր մարտիկներ՝
Պատրաստ գործելու, դիմելու մահին.
Իսկ ձեզ բարի՜ երթ, ընկերնե՛ր, ձեր գործը
Ազնիվ, վեհ տարաք ձեր հանապարհին։

## ԿՈՄՈՒՆԻՍՏ ԵՄ ԵՍ

Ես արշալույսն եմ սիրում դողդոջուն,
Եվ երկինքը ջինջ— կապտավուն սաթ.
Խոտոջն առվակի արծաթահնչուն,
Անտառ ու հանդերն մեր այն հարազատ:

Ազատությունն եմ սիրում ըղձալի,
Ըմբոստ փոթորկի շաչյուն անհանգիստ.
Օրերի շունչը տարերքներով լի,
Ես կոմունիստ եմ, ես մի կոմունիստ:

Իմ աշխատավոր եղբորն եմ սիրում,
Գործարաններում, դաշտերում ղվարթ.
Սիրում եմ տեսնել նրան հանքերում,
Ճակատը պարզած բարձր ու հպարտ:

Թող քիև սև է նա, շորը կարկատած,
Պայծառ է սակայն հոգին նրա միշտ.
Հարուստները պնդեն ապրող իր դիմաց
Թղուկնե՛ր են լոկ... Ես մի կոմունիստ:

Պարզությունն եմ ես սիրում մարդկի,
Եվ վեր ալացող թռիչքը հոգու.
Անհունության մեջ օվկիանների
Որոնում եմ լույս, թափ ու խորություն:

Սիրում եմ ձգտումն դեպի իդեալ,
Թող նրա ուղին տատասկոտ լինի,

Թող նա ապառնա մահով արնակալ,
Սարսափելի չէ՛... Նա մի կոմունիստ։

Կոշտերով ծածկված ձեռքերն եմ սիրում,
Արծիվի հայացք, խուխա գույնը դեմքի.
Կանչը մեռատի, արնդի պայքարում,
Մուրճ ու գութանի երգն աշխատանքի։

Եվ նա բանվորի քրտինքն եմ երգում,
Չէ՞ որ լուսատու արև է նա իսկ.
Մութլ, հարուստ մարդկանց գոյությունն
հերքում—
Նա մի կոմունիստ, նա մի կոմունիստ։

# 1 9 0 6

Գ. ՎՇՒՏԿԻՆ

## ԴՐՈՇԱԿԸ

Երազ տեսա, Թե զարկված եմ կռվի մեջ ու արնաքամ եղած
վերքից.
Կամաց ընկնում... գլորվում եմ իմ դիրքից.
Եվ դրոշը ցողված իմ ջերմ արյունով վայր եմ գցել իմ ձեռքից...
Եվ դու, քույրիկ, այդ նեղ ժամին վրա հասար, նրան խնկույն
փրկեցիր,
Ամբոխի մեջ նորից հպարտ պարզեցիր.
Տեսա ես քեզ, կորյունի պես խոյանալով
Զգոում էիր դեպի առաջ, ամբոխի հետ գրոհ տալով,
Մինչ որ ընկար, որպես և նա...
Եվ դրոշը ներկվեց քո ջերմ արյունով:
Ա՜հ, ես տեսա՝ ինչպես նորից անվհատ,
Խիզախ, նոսրն ամբոխի մեջ մեր դրոշը հարատաւ,
Ընկերները մի վայրկյանում արնոտ ձեռքից են առնում,
Նորից կռվի մեջ նետվելով և՛ բախվում են և՛ մեռնում...
Եվ դեռ երկար ծածանվում էր մեր դրոշը մարտական,
Քաջի նման մերթ բարձրանում, մերթ ընկնում.
Եվ նրա ալ թևերի մեջ իմ արյան հետ առնական,
Տեսնում էի, դեռ չառած քո արյունն էր շողշողում...

## Ո Ւ Թ  Ժ Ա Մ

(Փոխադրություն)

Ախպերք, էլ ուժ չմնաց մեր մեջ,
Մենք չափազանց շա՛տ հոգնեցինք.
Կյանքի համար կռվել անվերջ—
Սա էլ կյա՞նք է, որ քաշեցինք...

Օդ ենք ուզում, կարմիր արև,—
Մաղիկ, աղբյուր անուշահամ,
Ազատ, վատահ եկե՛ք հայտնենք՝
Պահանջում ենք միայն ութ ժամ:

Գործարանում ու հանքերում,
Ամբոխի մեջ— ժողովներում.
Հուժկու ձայնով դուք կո՛չ արեք՝
Պահանջում ենք ամենուրեք—

Ութ՝ ժամ՝ աշխատանք,
Ութ ժամ՝ քուն,
Ութ— հանգստություն:

Դաշտում անգամ մեր եզները,
Թռչուններն ջինջ երիկում,
Սար ու ձորում գազաններն
Բախտավոր են մեզնից ապրում:

Թե այդպես է, էլ ինչո՞ւ ենք
Ապրում, եղբա՛յրք, այս աշխարհում,

Եկե՛ք, շարք-շարք միանանք մենք,
Մեր պահանջը կռվով տանենք.

Կռվով տանենք, այդպես ցույց տանք,
Թե ոչ ոքից չենք վախենում.
Հուժկու ձայնով, դե՛հ կոչ արեք,
Պահանջեցեք ամենուրեք—
Գործարանում ու հանքերում,
Ամբոխի մեջ— ժողովներում,

Ութ ժամ՝ աշխատանք,
Ութ ժամ՝ քուն,
Ութ— հանգստություն:

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՐԳԸ

Ձեր հարստությո՛ւն, ոսկին ու շուքը,
Ձեր հանգստությո՛ւն, կեր ու խնճույքը—
Մենք ստեղծեցինք մուրճով, քրտինքով
Եվ մեր կարիքով, դաժան կարիքով...

Նայեցե՛ք աղքատ այն խուլ թաղերին—
Այն աղտոտ, հսկա գործարաններին,
Որ նեղ ու մթին լուսամուտներով
Տնքում են մրոտ ծխնելույզներով...

Այնտեղ՝ զժոխքում խեղճ, չարված ջանքով
Աշխատանքի մեջ մարդիկ են տանջվում...
Հաց են վաստակում արյուն-քրտինքով,
Բյուրավոր ձեռքեր ճորտի պես մաշվում:

Ձեր հարստությո՛ւն, ոսկին ու շուքը,
Ձեր կյանքն անպորր, կեր ու խնճույքը
Մենք ստեղծեցինք՝ մուրճով, քրտինքով,
Ուժասպառ դարձած, ցնցոտացած ձեռքով:

Նայեցե՛ք մոռցված այն նկուղներին,
Ուր խոնավ, ցնծուռ գնանք տակ մթին
Գալարվում է մերկ աղքատությունը,
Կարճում իր կյանքը թշվառությունը...

Մարդիկ կորացած՝ շառապով գործում,
Գիշեր ու ցերեկ մուրճերն են ծեծում,
Այնտեղ մշտական հոգսի տակ ընկած
Ճախարակի տակ բանվորն է կանգնած...

Ձեր հարստությունն, ոսկին ու շուքը,
Ձեր զվարճությունն, կեր ու խնճույքը,
Մե՛նք ենք ձեռք բերել մուրճով, քրտինքով,
Մանր ու չարքաշ մեր աշխատանքով։

Նայեցե՛ք, պարապ, հղփացած բոներ,
Թե ինչպես մարդիկ լինդը ձեռքերում
Սապատուն մեջքով փորում են հորեր,
Տանջվում գետնափոր, խոնավ հանքերում.

Ճնշվում է կուրծքը համր խավարից
Գերեզմանային հեղձուկ դաղերից,
Փոշու մեջ խեղդված, անհայտ, մոռացված
Մարդիկ գետնի տակ մեռնում են հազից։

Ձեր փարթամությունն, ուժն ու հաճույքը,
Ձեր հարմարությունն, շուք ու խնճույքը
Մե՛նք ստեղծեցինք սապատուն մեջքով
Եվ մեր անողոք, սորուկ— կարիքով։

Ո՞վ ճեղքեց կուրծքը այն հաղթ սարերի,
Մութ խոռոչները անթափանցելի,
Երկաթուղիներ անապատներում,
Այն ո՞վ կամուրջներ ձգեց գետերով...

Ըմբոստ ուժերը օվկիաններին
Ո՞վ հաղթահարեց վիթխարի կամքով,
Կատաղի թափը վայրի հորձանքի
Ո՞վ զսպեց արդյոք իր աշխատանքով...

Ձեր կյանքն ու բարիք, ձեր ուժն ու ոսկին,
Ձեր իշխանություն ընդդեմ տարերքին
Մե՛նք ստեղծեցինք մուրճ ու կոր մեջքով,
Արյուն-քրտինքով, քաղց ու տանջանքով,
Եվ մեր կարիքով, դաժան կարիքով...

Ո՞ւմ ուժ ու ջանքով են կառուցանվում
Շուքը տաճարի, դուռ պալատների,

Ո՞ւմ շարշարանքով երկինք բարձրանում
Հսկա շենքերը մեծ քաղաքների...

Ո՞ւմ աշխատանքով բերել հասել եք
Լեռնակույտերը ձեր ապրանքների,
Մենք դրանց համար քրտնել, մաշվել ենք,
Բոլորը մեղնից խլեցիք ձրի։

Արթնացի՛ր, ուրեմն, մերկ—աշխատավոր,
Մութ նկուղներից լույս աշխարհ ելիր,
Է՛յ, աղքատություն, ցնցոտի—տկլոր,
Վերջին պատասխան դո՛ւրս եկ, պահանջի՛ր։

Դուրս ելի՛ք, խեղճե՛ր, դունատ ու հյուծված,
Մյուրված շապիկով, սապատուն մեջքով,
Կոշատացած ձեռքեր, դո՛ւրս ելեք, հոգնած,
Քաղց ու զրկանքի անդուստ բողոքով...

Արթնացի՛ր ամբոխ, խղի՛ր լռությունն,
Դո՛ւրս ել, աշխարհի վիթխարի գավակ,
Քո՛ղ որ ճախճախուն, գոռոզ մեծությունն
Լսի նոր խոսքդ վերջին, համարձակ...

Պահանջի՛ր քեզ բախտ, լույս, աղատություն,
Ազատ իրավունք, հավասարություն.
Պահանջի՛ր դու զոհ, անր ու միլիոն,
XIX դարի ռուս քննադատ Սեմյոն Յակովլևիչ Նագոնի (1862—1887) բանաստեղծությունը Հ.Հ.-ը թարգմանել է 1894 թ. սեպտեմբերի 1-ին, Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակություններում։ Հ. Հ.-ի առաջին թարգմանություններից է, որը բնորոշ է սկսնակ բանաստեղծի նախասիրություններին, դեմոկրատական հակումներին, խավար ու չար, իրականության դեմ ըմբոստ տրամադրություններին մասին դատափետ կազմելու տեսակետից։ Հատկանշական է, որ Նագոնից շատ բանաստեղծություններ են թարգմանել հայ դեմոկրատ գրողները (Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան, Ավ. Տատուրյան, Ավ. Իսահակյան և ուրիշներ)։ Բանաստեղծությունն իր էությամբ առնչվում է Հ. Հ.-ի սկզբնական շրջանի ստեղծագործության ոգուն։

Առաջին անգամ տպագրվել է ՄՀ, 1894, № 9, էջ 1243, այնուհետև՝ I տրանսից և արտատպվում է։

ՏԵՂԱՏՎԱԾԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տող 5 ՄՀ  Եվ նոցանից ինձ բաժանել.
9 ՄՀ  Սիրելով քնզ, ես հաչ գիտեմ,
11 ՄՀ  Ուսաի բոզոր չարության դեմ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՅՍ Է

(«Ցորր տարիս ետ լրացած...»)

(էջ 186)

XIX դարի վերջերին ժողովրդականություն էին վայելում ռուս դեմոկրատ գրող Սեմյոն Գրիգորևիչ Ֆրուգի (1860—1916) լիրիկական բանաստեղծությունները, լեգենդները, բալլադներն ու գրույցները, որոնց նյութը մեծ մասամբ հին հրեական կյանքից էր։ Հայ դեմոկրատ գրողներ Հ. Հովհաննիսյանը, Ավ. Տատուրյանը և ուրիշները նույնպես թարգմանում և մասամբ ազատորեն մշակում էին Ֆրուգի ստեղծագործությունները։ Իր գրական գործունեության առաջին իսկ քայլերից Հ. Հ.-ը հետևում է հայ կյանքի գրականության առաջավոր ուժերին՝ ոչ միայն իր բնքնուրույն ստեղծագործություններով, այլև թարգմանություններով։ Պատահական չէ, որ նա 30-ական թվականներին թարգմանում է հենց Ս. Գ. Ֆրուգի մի շարք բանաստեղծություններն ու լեգենդները, որոնք իրենց ոգով առնչվում են նրա ինքնուրույն ստեղծագործություններին։ Ֆրուգից կատարած առաջին թարգմանություններից է «Գիտությունը լույս է»։ Թարգմանված է 1895 թ., Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։

Առաջին անգամ տպագրվել է ՐԺ, 1899, էջ 64—66, որտեղից և արտատպվում է։

* * *

(«Թոցրո՛ւ հոգիս դեպի այն ճեռուճ...»)

*(Էջ 188)*

*Թարգմանված է 1896 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Բժ., 1899, էջ 75, որտեղից և արտատպվում է։*

ԳՐՈՄԵՐԵԼԱՅԻՆ

(«Անճոռն տանջանքը սեղմած իմ կրծքին...»)

*(Էջ 189)*

*Թարգմանված է 1897 թ. հունիսի 18-ին, Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակություններում։*

*Առաջին անգամ տպագրվել է Մշ, 1898, № 10—11, էջ 1445, այնուհետև I, որտեղից և արտատպվում է։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տող 12 Մշ Որ վառեմ խավար ամբոխի հրաց.
14 Մշ Ինձ չէ՛ շնորհված վերին պատգամից.
16 Մշ Միայն հաջողվեց գնել նորանից։
18—19 Մշ Վճարում եմ ես նորաճ արցունքով.
Ով չէ՛ քե մի անգղ է ինձ ճոշոտում,
23 Մշ Ո՛, շատ չճչին ևն fո տատապանքներ,

ՏԻՐՈՋ ՍԿԻՀԸ

(«Ասա՛ ինձ, մայրի՛կ, ճշմարի՞տ է այճ...»)

*(Էջ 190)*

*Թարգմանված է 1897 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Մշ, 1898, № 2—3, էջ 272—273, այնուհետև I, որտեղից և արտատպվում է։*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տող 9 Մշ Ու երբ կբլցվի սկիհն արցունքով,
15—16 Մշ Մեր խեղճ ամբոխը, բայց չէ նայտնվում հեչ,
22 Մշ Որ այդ սկիհը մինչ ծայր լցվի։
27—28 Մշ Մայրիկին ուզենց,
Բայց նա գլխակոր ու անպատասխան

* * *

(«Մի բեռը կացին աճառի միջով...»)

*(էջ 192)*

*Թարգմանված է 1898 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է ՄԷ, 1898, № 10—11, էջ 1446, որտեղից և արտատպվում է։*

## ՀԱՆՈՒՆ ՕՐՆՔԻ

(«Ձգարում է նաչար այրին մեկուսի...»)

*(էջ 193)*

*Թարգմանված է 1901 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է ՄԷ, 1902, № 6, էջ 101—103, այնուհետև IV, առանց վերջին տան, որը տալիս ենք ստեքսաչին տարբերակների մեջ։*

*Արտատպվում է IV-ից։*

### ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Տող 3 ՄԷ* — *Մի օրավար հոգ նորա ամուսին*
*18 ՄԷ* — *Նկավ քահանան գույգ առպրակ ձնորին՝*
*20 ՄԷ* — *Իսկ տատանորդը նորա ծառայիներ*
*23—24 ՄԷ* — *Հոգի կտորը և նորա փոզով*
*Շուտափույթ մի գույգ գառնուկներ գնել։*
*33 ՄԷ* — *—Ով արգարադատ, գթառատ Աստված,*
*35 ՄԷ* — *Արդյոք չմորթե՞մ սառանց նոր ծնեմած։*
*40 ՄԷ* — *—Հնազանդ՛ր, անգութ... ննջեցուկ էր այրին...*
*49-ից հետո ՄԷ* .

* * *

Եվ հրեշտակներ գլխիկոր, տրտում,
Լաց ու ողբով այրուն են դիտում,
Նորա արցունքին ձայնակից լինում.
Եվ լույս ամպերից լսվում է մի ձայն,
Որը կարդում է խիստ դատավճիռ՝
— Վա՛յ ձեզ, օ՛, հուսմեր, կույր ու անարժան,
Որ արդարության պղծում եք կշիռ.
Եվ մոտ է օրը մեծ դատաստանին,
Երբ սխտի մատնվեք հավերժ գեհենին։

## ԱՎԱՋ ԵՎ ԱՍՏՂԵՐ

(«Հին ուխտի գրքում ես միշտ կարդում եմ...»)

*(էջ 195)*

*Թարգմանված է 1902 թ. Քիշլխում, ինչպես թվագրված է հրատարակությունը։ Առաջին անգամ տպագրվել է ՄՀ, 1902, № 7, էջ 173, որտեղից և արտատպվում է։*

## ՍՈՒՏՆ ՈՒ ՔԱՄԻՆ

(«Երբ, աստիճը կամեցավ ջնջել...»)

*(էջ 196)*

*Թարգմանված է 1902 թ. Քիշլխում, ինչպես թվագրված է հրատարակությունը։ Առաջին անգամ տպագրվել է ՄՀ, 1902, № 8, էջ 72—75, որտեղից և արտատպվում է։*

## ՋԱՏԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

(«Մռայլ ու ախուր խարխուլ խրճիթում...»)

*(էջ 200)*

*Թախադրությունը կատարված է 1904 թ. Քիշլխում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1904, № 13, էջ 117, որտեղից և արտատպվում է։*

* * *

(«Կանաչ տերևով ծառը ծածկվեց...»)

*(էջ 202)*

*Նորվեգական նշանավոր գրող Բյորնսոնի (1832—1910) հիշյալ քանասանդծությունը Հ. Հ.-ը թարգմանել է Մելչինի (Գ. Յակուբովիչ) ռուսերեն թարգմանությունից, 1895 թ. դեկտեմբերի 4-ին, Քիշլխում, ինչպես թվագրված է հրատարակություններում։*

*Առաջին անգամ տպագրվել է ՄՀ, 1896, № 7—8, էջ 958—959, «Մելչինից», այնուհետև I, «Բյորնսոնից» վերնագրով։ Արտատպվում է վերջինիս տեքստը։*

### ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| *Տղ 3 ՄՀ* | Ու պատած ցողով մարգարտանման |
| *9—10 ՄՀ* | Թող մեզ հանգիստ դուման բողբոջներ, |
| | Գոնե բացվինք նոր ծաղիկներ... |

*Տող 13—14 Մէ* Անա և *կամաց-կամաց բացվեցան*
*Անուշ բուրմունքով կոկոն ծաղիկներ*
*20 Մէ* *Կհավիշտակեմ, թե շատս այս ժամին*
*24—25 Մէ* *Նվ աճ ու վախից սարսափից-դողաց:*
*Անա և մատաղ պտուղներին խակ*
*28—34 Մէ* *Մոտեցավ նորան ուրախ ու կամաց*
*Հրաշալի կույսը ոտգիրը ճոգնած.*
*—Ա՛խ, տո՛ւր ինձ, ասաց, աճուչ պտուղներ.*
*Ջուռով չեմ խմել ես ֆո ըննյուղներ:*
*—Ա՛ռ քեզ, նազելի, տես իմ ճղները*
*Մաճառացած վաղուց սպասում էին.*
*Որ* *բերքաճառ իմ ծառ բերը:*
*36 Մէ* *Ու խոնարհվելով բերը կախեց,*

* * *

(«Երբ դու տեսնես բոկոտն մեկին...»)

*(էջ 204)*

*Կոզմա Պրուտկով կեղծանունով հանդես են եկել XIX դարի ռուս գրողներ Ալեքսեյ Կոնստանտինովիչ Տոլստոյը (1817—1875), Ալեքսեյ Միխայլովիչ Ժեմչուժնիկովը (1821—1908) և Վլադիմիր Միխայլովիչ Ժեմչուժնիկովը (1830—1884): Հ. Հ.-ը թարգմանել է Կ. Պրուտկովի „Мой портрет" բանաստեղծությունը, 1897 թ. փետրվարի 13-ին Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակություններ:*

*Առաջին անգամ տպագրվել է ՄՀ, 1897, № 2—3, էջ 283, որտեղից և արտատպվում է:*

## ԲԱՅՐՈՆԻՆ

(«Մի լացիր այդպես սգավոր ճամա...»)

*(էջ 205)*

*Գերմանական հանճարեղ գրող Խոհան Վոլֆգանգ Գյոթեի (1749—1832) այս բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է 1897 թ. հունիսերեր 29-ին, Թիֆլիսում, ինչպես թվագրված է առաջին հրատարակություններ:*

*Առաջին անգամ տպագրվել է ԲԾ, 1899, էջ 44—45 վերնագրված՝ «Գյոթեից Բայրոնին», այնուհետև IV, XI. արտատպվում է վերջինից,*

### ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Տող 3 I, IV* *Կապրեիր դու վեհ, քայց միշտ վշտահար,*
*6 I, IV* *Իբրև մի գամակ հին փարթամության,*

## ՄԻ ԱՆԴԱՄ

(«Մի անգամ մտա ես բավուտ անտառ...»)

*(էջ 206)*

*Թարգմանված է 1902 թ. Քիֆլիսում, ինչպես թվագրված է վերջին հրատարակությունը։*

*Առաջին անգամ, «Գյոթևից» վերնագրով, տպագրվել է Տզ. 1904, № 34, էջ 324, այնուհետև IV, որտեղից և արտատպվում է։*

*ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Տզ 6 Տզ ես իմ նագելուն անգամ եմ կրծքիս,*

## ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ

(«Չմայո՛ր, եղի՛ր դու աշխատասեր...»)

*(էջ 207)*

*Շոտլանդական նշանավոր ժողովրդական բանաստեղծ Ռոբերտ Բյորնսի (1759—1796) բանաստեղծությունը Հ.Հ.-ը թարգմանել է 1904 թ., ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Տզ. 1905, № 3, էջ 33, «Եղլիից» վերնագրով, այնուհետև II, ուր հեղինակը չի նշված։ Արտատպվում է II-ից։*

## ԳԱՐՆԱՆ ԱՎԵՏԻՔ

(«Դեպի սառույցի — ցրտերի աշխարհ...»)

*(էջ 208)*

*Ռուս գրող Գոգոլյանի այս բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է 1904 թ., ինչպես թվագրված է երկրորդ հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Աշխ, 1906, № 9, էջ 132, ուր կարճ տողերը (5, 10, 15, 39, 41) չեն անջատված, այլ նախորդների հետ միասին կազմում են մեկական տող։ Այնուհետև՝ II, որտեղից և արտատպվում է։*

*ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Տզ 1 Աշխ Դեպի սառույցի— ցրտերի աշխարհ,*

## ՄԱՐՍԵԼՅԱԶ

(«Հրաժարվե՛ք, ընկերնե՛ր, հին օրենքներից...»)

*(էջ 210)*

*Ֆրանսիական հռչակավոր ունկլյուցիոն երգի (խոսք և երաժշտություն Ռուժե—դե—Լիլի՝ 1760—1836)՝ «Մարսելյոզ»-ի օրինակով ստեղծված հայտնի ռուսական «Հրաժարվե՛ք, ընկերնե՛ր, հին օրենքներից» երգի առաջին հայերեն թարգմանությունը Հ. Հ.-ը կատարել է 1902 թ. Թիֆլիսում։ Ունկլյուցիոն մասսաների մարտական հիմներ հանդիսացող այս երգը հայ աշխատավորության մեջ տարածվել է առանձին թերթիկներով, երգվել է ունկլյուցիոն ցույցերի և նույթինների ժամանակ, միտինգներում ու ժողովներում։*

*Մյուս ունկլյուցիոն երգերի հետ միասին (տե՛ս ներկա Հատորում) այս երգի թարգմանությունը նշանակալից է եղել նաև հենց թարգմանչի ստեղծագործական կյանքում, բարերար ազդեցություն ունենալով նրա վրա՝ ունկլյուցիոն-պրոլետարական պոեզիային անցնելու գործում։*

*Առաջին անգամ տպագրվել է Հեղ երգ, 1907, էջ 3—4, այնուհետև՝ V. թարգմանչի հետևյալ ժանրությամբ. «Այն թարգմանական երգերը, որոնք կրում են աստղանշան, հարմարացրած լինելով իրենց համապատասխան եղանակներին, չեն ենթարկվում հայկական տաղաչափությանը»։*

*Դրքում աստղանշան կրում են Հ. Հ.-ի թարգմանած բոլոր ունկլյուցիոն երգերը։*

*Արտատպվում է V-ից։*

### ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Տող 4 III* Դարչում ենք բռնակալ ժանեա ցարից.
*15 III* Լավում են հզփանում նորանէ մեր քրտնով,
*26—29 III* Նորան պետք են միայն բյուր զինվորներ,
Դո՛ւրս քաշիր, տո՛ւր նորան զավակիդ.
Նորան պետք են խնճույք ու պալատներ,
Տուր նորան հյութերը ջղերիդ։
*42—43 III* Նա գնված արյունով ժողովրդին
Պետ հաստնի նորան երջանկության.

### ՎԱՐՇԱՎՅԱՆԿԱ

(«Ճաչում են ոխերիմ հոդմերն անընդհատ...»)

*(էջ 212)*

*Ունկլյուցիոն պրոլետարիատի ամենասիրելի և լայնորեն տարածված մարտական երգերից մեկն էր։ Սկզբնական տեքստը գրել է չեհ բանաստեղծ Վացլավ Օվենիցկին 1883 թ.։ Ռուսական տեքստը միանգամայն ինքնու-*

բուլն է։ Այն 1897 թ. գրել է հնագույն ռևոլյուցիոն գործիչ, ակտիվավոր բոլշևիկ Գլեբ Մաքսիմիլիանովիչ Կրժիժանովսկին (ծն. 1874)։ Վերջինիս գրածը առանձնապես լայն տարածում է ստացել 1902 թվականից սկսած, երբ Բուռեվեստնիկների ձևով, առանձին քերթիկների վրա տպագրված մասսայականացել է, դարձել ռևոլյուցիոն պրոլետարիատի մարտական քայլերգ։

Հայերեն առաջին թարգմանությունը կատարել է Հ. Հ.- ռուսերենից, 1905 թ.։ Մյուս ռևոլյուցիոն երգերի նման տարածվել է հայ աշխատավորության մեջ։

Առաջին անգամ տպագրվել է Կծ, 1906, № 41, Պրոլետար ստորագրությամբ, այնուհետև՝ III, V։ Արտատպվում է V-ից։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոզ 3 III, Կծ — Նորանց դեմ վարում ենք օրհասական մարտ,
18 Կծ — Ջեն կարշի անհետ պատմի գոհերը,
19 III, Կծ — Նորանց անունը հազթական երգերով։
24 III, Կծ — Նորա արյունով ոռոգված գոհերը

Смело товарищи, в ногу!
(«Անվախ, ընկե՛րք, քայլենք շար-շար...»)

(էջ 214)

Ռուս ռևոլյուցիոներ-պոետ Լ. Պ. Ռադինի (ծննդյան թիվն անհայտ է, մահացել է 1901 թ.) այս հայտնի ռևոլյուցիոն երգի թարգմանությունը Հ. Հ.-ը կատարել է 1905 թ., ինչպես թվագրված է հրատարակություններում։ Հայ բանվորների ու աշխատավորների մեջ տարածվել է Հ. Հ.-ի թարգմանած մյուս ռևոլյուցիոն երգերի նման։

Առաջին անգամ տպագրվել է Հնչ երգ, 1907, էջ 9—10, այնուհետև՝ IV, որտեղից և արտատպվում է։

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոզ 17 III — Եթե նորա գոհ են ու կուշտ,—

Смело, друзья не теряйте!..
(«Առաջ, ազնիվ մի՛ վհատիր...»։

(էջ 215)

Ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատ բանաստեղծ Միխայիլ Լարիոնովիչ Միխայլովի (1829—1865) այս նշանավոր երգի առաջին հայերեն թարգմանությունը Հ. Հ.-ը կատարել է 1906 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակություններում։ Մա ավելի շուտ այդ երգի ազատ փոխադրությունն է. մասնավորապես՝ ընագրի

*երկու տունը թարգմանիչը գործերով է շրջս և յուրաքանչյուր անից հետո գրել կրկնորդը։*

*Առաջին անգամ տպագրվել է Աշխ, 1906, № 19, էջ 291, «Երգ» վերնագրով, Ֆրոլետար առորագրությամբ և թարգմանիչի հետևյալ ծանոթությամբ. «Երգումն է „Смело, друзья, не теряйте!..“-ի նգանակով»։ Ռուսերեն վերնագրով տպագրվել է Հնչ երգ, 1907, էջ 5—6, որտեղից և արտատպվում է։*

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

(<եկե՛ք, աճենքի ճշավակներ...>)

*(էջ 217)*

*Պրոլետարիատի միջազգային հիմնի, ռևոլյուցիոն մասսաների ամենասիրելի երգի՝ «Ինտերնացիոնալի» անբասր 1881 թ. գրել է Փարիզի Կոմունայի Կոմիտեի անդամ, պոետ-ռևոլյուցիոներ Էժեն Պոտիեն (1816—1887)։ Այն տպագրվել է 1887 թ., Ձայնագրել է 1888 թ. Ֆրանսիական բանվոր-կոմպոզիտոր Պիեր Դեգեյտերը (1848—1932)։ Առաջին անգամ երգվել է Ֆրանսիական Լիլլ քաղաքում, 1888 թ. հունիսին, բանվորական ռեմի ժամանակ և լայնորեն տարածվել ամբողջ աշխարհում, թարգմանվել տասնյակ ազգերի ու ժողովուրդների լեզուներով։ Ռուսերեն թարգմանել է պոետ-ռևոլյուցիոներ Պ. Յա. Կոցը (1872—1943), սկզբում, 1902 թ., միայն երեք տունը (առաջին, երկրորդ և վերջերորդ), ապա՝ նաև բոլոր վեց տները (1937 թ.)։ Ըստ որում ոուս թարգմանիչը, բնագրի տողերի հիման վրա, տանղծել է կրկնորդը, որի առաջին տողը՝ „Это будет наш последний...“ («Սա կլինի մեր վերջին...»), հետագայում ռևոլյուցիոն մասսաները ճշտել են, մարսել բոցերի մեջ երգելով „Это есть наш последний...“ («Սա է մեր վերջին...») ձևով։*

*1917—1944 ԹԹ. «Ինտերնացիոնալը» աշխարհում առաջին սոցիալիստական պետության՝ Սովետական Միության պետական հիմնն էր, այժմ հանդիսանում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և աշխարհի մյուս կոմունիստական պարտիաների հիմնը։*

*Հայերեն առաջին թարգմանությունը Պ. Յա. Կոցի ոուսական տերտից կատարել է Հ. Հ-ը 1906 թ., Թիֆլիսում, ոչ լրիվ, այլ միայն երեք տունը՝ պահպանելով կրկնորդի առաջին տողի «Այս կլինի...» ձևը։ Կրկնորդի այդ տողը նոր ձևով («Սա է...») տվել է Նիկիշ Չարենցը (1898—1937) «Ինտերնացիոնալի» իր թարգմանության մեջ, որը և, ինչպես հայտնի է, Հայաստանում Սովետական Իշխանության հաստատվելուց հետո, ընդունված էր կատարել տոնախմբություններին, հանդիսավոր նիստերին, հեղափոխական հանդեսներին, միտինգների և այլնի ժամանակ։*

*Հ.Հ-ի թարգմանությունը ունի պատմական խոշոր նշանակություն։ Ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում հատկապես այն լայնորեն տարածվել է հայ բանվորների-աշխատավորների մեջ՝ թե՛ բուլգինների ձևով, թե՛ ռևոլյուցիոն ժամուլի միջոցով, թե՛ բանավոր մենք մյուսին հաղորդելու միջոցով, երգվել է մասսայական ցույցերի ու միտինգների, ռևոլյուցիոն նշումների ու փողոցային մարտերի ժամանակ, գաղտնի ժողովներում։*

*Հ.Հ.-ի թարգմանությամբ «Ինտերնացիոնալը» առաջին անգամ տպագրվել է 4ծ, 1906, № 27, Գրոլնատար առորագրությամբ և թարգմանիչի հետևյալ ծանոթությամբ. «Երգը, որ թարգմանված է ռուսերենից, իր նշանակով չի համապատասխանում հայկական տազաչափությանը։ Այնուհետև տպագրվել է III, V, վերջինում՝ միայն առաջին և երրորդ տները։ Տպագրված է V-ից, երկրորդ տունը՝ III-ից։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Տող 7 III, 4ծ* — *Նրա տեղ մնում մենք պիտի հիմնենք,*
*9 III, 4ծ* — *Այդ կլինի և՛ վերջին*
*13—24 V* — *չկան։*
*30 III 4ծ* — *Դահիճ գամփռների գլխով.*

## ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԴ

(«Դուռ զոհ գնացիր կովի մեջ վճռական...»)

*(էջ 219)*

*Դուռս նշանավոր բանաստեղծ, մի շարք ռևոլյուցիոն երգերի հեղինակ Ֆիլիպ Սահակյանովիչ Շկուլևի (1868—1930) լայնորեն հայտնի «Вы жертвой пали» երգի առաջին հայերեն թարգմանությունն է։ Թարգմանված է ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում (1905 թ.) և մյուս ռևոլյուցիոն երգերի նման լայնորեն տարածվել է հայ բանվորության ու աշխատավորության մեջ։*

*Առաջին անգամ տպագրվել է Հնչակ երգ. 1907, էջ 13—14, այնուհետև որոշ փոփոխություններով, մասնավորապես առանց երրորդ բառյակի՝ V։ Տպագրվում է V-ի անբատր, երրորդ բառյակը՝ III-ից։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Տող 3—4 III* — *Դուք չանք թափեցիք վերջին շունչ առ եռուռն.*
*Տևանել եռուռ կյանք, պատիժն ապաստած։*

## ԿՈՄՈՒՆԻՍՏ ԵՄ ԵՍ

(«Ես աշխատյաց եմ սիրում դողդոջուն...»)

*(էջ 220)*

*Թարգմանված է 1934 թ. Բիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։ Առաջին անգամ տպագրվել է Նն, 1936, էջ 40—41, թարգմանիչի հետևյալ ծանոթությամբ. «Ֆիլիպ Շկուլևը Գ. Նեչաևի հետ նախահաշիվներից մեկն է ռուս պրոլետարական գրականության։ Մեռել է 1866 թ. (Համաձայնարար վրիպակ է,*

պետք է լինի՝ 1868—կազմողներ)։ Բանվոր է եղել գործարանում, մեքենան կտրել է նրա աջ թևը, դարձել է հաշմանդամ. գրում է ձախ ձեռքով։ «Мы кузнецы»[1] հեղափոխական երգի հեղինակն է»։

Արտատպվում է ՆՆ-ից։

## ԴՐՈՇԱԿԸ

(«Երազ տեսա, թե զարկված եմ կռվի մեջ...»)

*(էջ 222)*

*Թուա պոետ ու քննադատ Գեորգի Անդրեևիչ Վյատկինի (ծն. 1885) բանաստեղծությունը Հ.Հ.-ը թարգմանել է 1906 թ. Քիֆլիսում։ Հրատարակություններում թվագրված է՝ 1907, որը վերաբերում է երկրորդ վերամշակմանը։*

*Առաջին անգամ տպագրվել է Աշխ, 1906, № 33, էջ 515, Պոլևաստ ստորագրությամբ, այնուհետև՝ III, XI. արտատպվում է վերջինից։*

### ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Տող 3 III, Աշխ Եվ դրոշը ցողված իմ չերմ արյունով—վայր եմ ձգել իմ ձեռքից—*

## ՈՒԹ ԺԱՄ

(«Ախպե՛ր, կլ ուժ չմնաց մեր մեջ...»)

*(էջ 223)*

*Անգլիական գրող Բլանշարդի բանաստեղծությունը Հ. Հ.-ը փոխադրել է Ֆ. Ֆ. Յակուբովիչի (Ռ. Տ., Մևչին) ռուսերեն թարգմանություններից, 1906 թ., ինչպես թվագրված է Հրատարակություններում։*

*Առաջին անգամ տպագրվել է Աշխ երգ, 1906, էջ 19—20, «Նմանողություն» ենթավերնագրով, անուհետև՝ III, երկու դեպքում էլ առանց հեղինակի անունը հիշատակելու։ Արտատպվում է III-ից։*

### ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| *Տող* | *1* | *II* Տղե՛ր, էլ ուժ չմնաց մեր մեջ, |
| *23—24* | | *II* Մեր պահանջը առաջ տանենք, |
| | | Առաջ տանենք, այդպես ցույց տանք, |
| *28—29* | | *II* չկան։ |

[1] «Մենք պարբերներ ենք»։

## ԲԱՆԼՈՒՐԻ ԵՐԳԸ

(«Ձեր հարստությունը, ոսկին ու շուքը...»)

*(էջ 225)*

*Ռուս պոետ Ն. Մ. Տիխոմիրովի (Ն. Նեմանևիչ) այս բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է 1906 թ., ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Աշխ երգ, 1906, էջ 13—17, հեղինակի անունը՝ վերնագրի տակ, փակագծերում՝ «Ն. Ն.»։ Արտատպվում է Աշխ երգ-ից։*

## ԿԱՐԱՊԸ

(«Մանճաղն է ճնած...»)

*(էջ 228)*

*Ռուս պոետ Կոնստանտին Դմիտրիևիչ Բալմոնտի (1867—1942) բանաստեղծությունը Հ.Հ.-ը թարգմանել է 1909 թ. Բիթլիսում, ինչպես թվագրված է հրատարակություններում։*

*Առաջին անգամ տպագրվել է Գղ, 1909, № 3, էջ 99, այնուհետև՝ IV, որտեղից և արտատպվում է։*

## ԱՆՀՈՒՆ ՄԱՎԱԼՈՎ

(«Անհուն ծավալով պարզվել է իմ դեմ...»)

*(էջ 230)*

*Ռուս դեմոկրատ բանաստեղծ Պյոտր Իսաևիչ Վեյնբերգի (1830—1908) այս ոտանավորը թարգմանությունը Հ. Հ.-ը կատարել է 1911 թ. Բիթլիսում, ինչպես թվագրված է հրատարակություններում։*

*Առաջին անգամ տպագրվել է Գղ, 1911, № 4, էջ 122, այնուհետև՝ IV, որտեղից և արտատպվում է։*

## ՏԵՔՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| *Տող 9 Գղ* | Ես իմ խորտակված երազ— հույսերի |
| *14—15 Գղ* | Ես, որ բախտիս հետ հաշտվել եմ անդառձ,<br>Նման անտերին... |
| *34 Գղ* | Ես իմ ինձնամուն համառ ու անպարտ |
| *38—39 Գղ* | Ազատ բնությանը<br>Ջարդնումի ոգուն առնագանիելով, |

## ՍԻՄԱՂԵՑԻ՛Ք

(«Միծաղելուց մի՛ վախենալ...»)

*(էջ 232)*

*Ռուս պրոլետարական պոետ-ռևոլյուցիոներ Սեմյոն Տարասովի (1882—1943) բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է 1911 թ., ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է ԲԺ, 1912, էջ 135—136, էպիգրաֆը նույն բանաստեղծության առաջին տողն է («Միծաղից չպետք է վախենալ»)։ Արտատպվում է 1912 թ. ԲԺ-ից։*

* * *

(«Նորից երբանի մեր ճանապարհ...»)

*(էջ 234)*

*Ռուս նարոդնովոլց պոետ-ռևոլյուցիոներ Պյոտր Յակուբովիչ Յակուբովիչի (Մելշին, Պ. Յ. 1860—1911) բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է 1911 թ., ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է ԲԺ, 1912, էջ 137, «Մելշինից» (Պ. Յ.)* վերնագրով, որտեղից և արտատպվում է։*

## ՄԻ ՀԱՏՎԱԾ

(«Անիա իմ առաջ կայարաններ...»)

*(էջ 235)*

*Բելգիական նշանավոր բանաստեղծ Էմիլ Վերհարնի (1855—1916) «Բանկիրը» բանաստեղծության մի հատվածը Հ. Հ.-ը թարգմանել է ռուսերենից 1916 թ. ինչպես թվագրված է հրատարակությունը (Լրիվ թարգմանությունը կատարել է Սպիշն Չարենցը։ Տես Սպիշն Չարենց, Երկեր, 1954, էջ 231—232)։*

*Առաջին անգամ տպագրվել է ԲԺ, 1935, էջ 294, որտեղից և արտատպվում է։*

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՈՒՏՆԵՐԻՆ

(«Ուրախ է հոգիս ձեր բռիշճների որոնումներից...»)

*(էջ 236)*

*Ռուս սովետական բանաստեղծ Վասիլիյ Դմիտրիևիչ Ալեքսանդրովսկու (1897) այս բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է 1920 թ., Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակություններում։*

*Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 2, Ալ—կաս աստղագրությամբ, այնուհետև՝ XI, որտեղից և արտատպվում է։*

* * *

(«Ես ինչում եմ այն ապրկան փայլ աչերով ճուրճրաճ...»)

*(էջ 237)*

*Թարգմանված է 1921 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 3, որտեղից և արտատպվում է։*

## ԱՀԱԶԱՆԴԸ

(«Հե՞յ զանգահար՝ զանգատանից առար անագանգ...»)

*(էջ 238)*

*Բուա սովետական պոետ Գ. Ավետյովի այս բանաստեղծությունը Հ. Հ-ը թարգմանել է 1921 թ. հունվարի 12-ին, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 9, որտեղից և արտատպվում է։*

## ԱՐՇԱԼՈՒՅՍՆԵՐ

(«Աչքյանե՞ր — հոդնճճերի, բոցերի...»)

*(էջ 241)*

*Բուա սովետական պոետ Ն. Գուրնևակու այս բանաստեղծության թարգմանության թվականը ստույգ հայտնի չէ։*

*Առաջին անգամ տպագրվել է Դրբ, 1922, № 1, էջ 8, որտեղից և արտատպվում է։*

## ԴԱՐԲՆՈՑՈՒՄ

(«Կաւ մեր պարի պատույտներով բոցերի...»)

*(էջ 242)*

*Վրաց նշանավոր բանաստեղծ և դրամատուրգ Սանդրո Էուլիի (ծն. 1890) այս բանաստեղծությունը Հ. Հ-ը թարգմանել է 1922 թ. Թիֆլիսում։*

*Առաջին անգամ, Պրոլետար առորագրությամբ, տպագրվել է Դրբ, 1922, № 1, էջ 8, որտեղից և արտատպվում է։*

## ԿՈՒՍՏՈՄՍԸ

(«Ուան չատ խելացնեղ, գառամի մայրեր...»)

*(էջ 243)*

*Ռուս ամենատարած նշանավոր պոետ Ալեքսանդր Իլյիչ Բնդիմենսկու (ծն. 1893) այս բանաստեղծությունը Հ.Հ.-ը թարգմանել է 1924 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է ԲԺ, 1935, էջ 296—298, որտեղից և արտատպվում է։*

## ԹՈՌՆԻԿԻՆ

(«Այո՛, թոռնիկս, կյանքի մեր ուղին...»)

*(էջ 247)*

*Ռուս պրոլետարական պոեզիայի հետագայի ներկայացուցիչներից մեկի՝ Եգոր (Դեորգի) Նիկիտովիչ Նեչաևի (1859—1925) բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է 1935 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Նն, 1936, էջ 42—44, որտեղից և արտատպվում է։*

## ՀԻՆԴ ՕՐ ՈՒ ԴԻՇԵՐ

(«Եվ եախրաե վակնե իր դամբարանում...»)

*(էջ 249)*

*Ռուս ամենատարած ականավոր բանաստեղծուհի Վերա Միխայլովնա Ինբերի (ծն. 1891) ստանավորը Հ.Հ.-ը թարգմանել է 1935 թ., ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է Նն, 1936, էջ 37, որտեղից և արտատպվում է։*

## ՈՒԼԵՑՈՒՅՑ ԱՍՏՂ

(«Մութ և գիշերը... Բայց չէ հավիտյան...»)

*(էջ 250)*

*Ռուս նշանավոր գրող Դեմյան Բեդնու (Եֆիմ Ալեքսանդրի Պրիդվորով, 1883—1945) այս բանաստեղծությունը Հ. Հ.-ը թարգմանել է համանուն տարի 1935 թվականին։*

*Առաջին անգամ տպագրվել է Նն, 1936, էջ 38, որտեղից և արտատպվում է։*

## ԽՐՏՎԻԼԱՒ

(«Իմ ոտքիճ և ձնաղ ճայրք...»)

*(էջ 251)*

*Գ. Բնգնու հայտնի «Пугало» էպիգրամի այս թարգմանութիւնը Հ. Հ.-ը կատարել է հաւանաբար 1935 թ., Թիֆլիսում։*

*Առաջին անգամ տպագրվել է ՆՆ, 1936, էջ 39, թարգմանիչի հետևյալ ծանոթությամբ. «Այս էպիգրամը փորված է Ալեքսանդր Երիստի կայտնի արձանի պատվանդանի վրա, որը մինչև օրս էլ կանգնած է Լենինգրադի «Վոստանիե» (Նախկին «Ջնամենկա») հրապարակում։ Արձանն ուժմ հանված է։*

*Արտատպվում է ՆՆ-ից։*

## ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ

(«Բանվորական մեծ բանակին մենք փառապաճծ...»)

*(էջ 252)*

*Գ. Բնգնու այս բանաստեղծությունը Հ.Հ.-ը թարգմանել է 1935 թ. Թիֆլիսում, ինչպես թվագրված է հրատարակությունը։*

*Առաջին անգամ տպագրվել է ՆՆ, 1936, էջ 47—51, որտեղից և արտատպվում է։*

# Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

«ՆՈՐ ԱՌԱՎՈՏ» ՊՈԵՄԸ
ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

# ՆՈՐ ԱՌԱՎՈՏ ?

(Պ ո է մ)

## I

Ահա իմ մուզան կյանք առավ նորից
Եվ պատանեկան աշխուժով նորեն
Խոսեց արտիս հետ անցած օրերից —
Անցած օրերի հմայքը[1] սիրուն.
Օրեր՝ որ անցան ծաղիկների մեջ,
Էի վայելքներով անհոգածկական, ?
Օրեր՝ որ անցան շարնշար, անվերջ,
Բոլոր հույզերով պատանեկական:
Եվ ի՞նչ է կյանքը... մի նրբ դյուցազական,
Որ կրկնվում է հիասքանչ, թովիչ
Նվեններով, նշանակներով,
Որը հնչում է այնպե՞ս գրավիչ
Ու մարում ցավի արձագանքներով...
Կյանքը մի նկար, որը հյուսվում է
Հազար գույներով, հազար ցոլքերով,
Կյանքը հակա ծով, որ փոթորկում է,
Նավեր խորտակում ու վերջը մնում
Մենակ ու տխուր իրա խոհերով:
Ահա իմ մուզան տանում եմ նորից
Տանջված անցյալի ծանր երկունքից,
Պոետիս ծննդ կյանքի նոր գարուն —
Մի պատկեր սիրուն.
Պատկեր մի կույսի, որին շա՜տ վաղուց
Որոնում էի, բայց չէի գտնում,

Не совсем складно

Անհարմար խոսք է քիմում

Դնդնդնդի է. մանավանդ խմաստով. ավելի լավ կլիներ. որ վերջումն էլ ցավի արձագանքներ չլինեին. որ կյանքը միայն երջ. նկար ու հակա ծով լիներ.

1 Շահումյանն ուզել է՝ համբյուր

Նա մի իդեալ, որին հինավուրց
Ե՛վ տեսնում էի և՛ չէի տեսնում,
Որին ես ձգտում՝ բայց չէի հասնում...

## II

Այժմ տեղ նա... տեսնում եմ, զգում,
Որ իմ հոգին է նրա մեջ ապրում.
Որ իմ և նորա հոգու ծալքերում
Կա մի հարազատ իրար նման գիծ—
Որը ակռաված միասին ցավից...
Քա՛ղցր է, քա՛ղցր, ես շնի կշտանում
Նրա դրախից, խոսուն աչքերից
Եվ ամեն անգամ մի բան եմ գտնում,
Մի միտք հղանում նորա պատկերից,
Որ ուշքս լարած նայում եմ նորին. Только для рифмы

Это наречие к слову ակռաված, а ты хотел как прилагательное к слову ցավից (միասին ցավից).

Ա՛խ, այն աշխրում մի ամբողջ աշխարհ,
Այն թախծոտ շուրթին մի ցավոտ ժպիտ,
Իսկ հրապո՛ւյրը դեմքին վշտահար...
Զգում ես, որ նա կրել է մի վիշտ,
Մի խոր անհուն վիշտ, որը չդիտես
Ո՛ւր է վերջանում, նրան ո՛ւր տանում,
Կամ ինչո՞ւ հոգիդ այնպես տատանում,
Ու մտածում ես, ու մտածում ես—
Եվ չես հասկանում...
Զգում ես, որ նա մատաղ հասակում
Շատ է տառապել, շատ է դիմացել,
Ու թեև նորա կյանքը ծաղկալից
Հոդմների տակ է անվել, մնծացել՝
Բայց էլի անդած վշտերի բոմից
Մի գնդացիկ բան դարձյալ մնացել,
Օ՛, ես սիրեցի այդ նազան կույսի
Շողը երեսի.
Քանի նայում եմ — էլ չեմ կշտանում,
Ջահած ժամին խորը վշտանում,
Կարծես կորուսած մի անձ թանգագին[1]

Իսկը անանցի է. արտվնան հաճադրությունն չեմ. ամեն յավ կյանքը քվում է.— «Ու մի մնդմ հրապո՛ւյրը դեմքին վշտահար. կամ՝ «Ու մնդմ հրապո՛ւյրը դեմքին վշտահար. կամ առանց ու»։

Լավ է

էլի և դարձյալ մեկնության բան է

Նախադասությունն ուղիղ չի կազմված և այդ պատճառով դարձ չի տեսը

[1] Շահումյանն ուղղել է՝ թանգագին։

Նորա[1] սուգն է սրտիս ծանրանում.
Ահա ես մենակ սպասում եմ լուռ
Ամեն մի րոպե, թե հա՛, պիտի գա,
Ու բանա իմ տան դռնակը տխուր
Նվ իմ առաջև կանգնի հեկեկա,[2]
Կանգնի ու ասի՝ տեսա՞ր որ եկա,
Նկա պիտնալով, որ կրակի պես
Հալվում ես մենակ... եկա որ շոյեմ
Ճակատդ տխուր ու քեզ փայփայեմ,
Որ սրտիդ ցավը հնշտությամբ առնես
Ու տեսնես, որ ես ա՛յնքան էլ անգութ,
Ա՛յնքան էլ քար չեմ, ինչպես կարծում ես...
Ու երազի պես անորոշ ու մութ
Ասես ու գնաս, ասես ու գնաս՝
Ու մենկ էլ տեսնեմ, որ դու էլ չկա՛ս,
Որ դու էլ չկա՛ս...

## III

Տեսնում եմ նորից քո մեն աննյակում
Նստել դիտում ես աչքերով թաքուն.
Սիրո՞ւմ ես դու ինձ, թե՞ հոգիս պննում—
Այդ չեմ հասկանում,
Այդ խորհրդավոր լռակյաց ժամին
Քո հրապույրն եմ ես միայն զգում,
Կյանքի արևը իրա խնամսով
Ջդում եմ, աչքիս հմայք է առնում
Ու շոյող, անուշ մի ճառագայթով
Հալվում ու կորչում իմ հոգու խորքում։
Համ[3] նայում ես երկար ու թաղուն...
Աչքերդ կարծես մերկով ծածկված
Մի աղբյուր լինեն, որ ուզի բացած
Տերևի տակից գնում է, հոսում,
Նայում[4] երևակս, սրտիս հետ խոսում։
Ու ես ծարավի տապ մարող ջրիդ

Նորա. սրա—չեն դրծածում այժմ. այլ ետս. սրա

Համեմատությունը բանաստեղծական է. ես չեմ պատահել այդ տեսակ համեմատության. Նայում խոսքի տակ ես կասնի իմաստը երևակս

1 Շահումյանը մի քանի տեղ «նորա», «սորա» գրածել է «նրա», «սրա»։
2 Շահումյանն ուղղել է, կանգնի, հեկեկա։
3 Շահումյանը «կարծես» բառն առել է առաջինների մեջ։
4 Շահումյանը «նայում» բառը ջնջել է և գրածել «թափվում»։

Ու ես կարոտի մարդու բյուրեղից
Ընկնում եմ լանջից, որ սիրտս բացեմ,
Փղձրկամ կրծքից, ցավս կուշտ լացեմ՝[1]
Բայց մեկ էլ հանկարծ աչքես չքացած,
Որպես մի այծյամ սարն ի վեր նայած,
Տեսնում եմ, ավա՛ղ, որ դու էլ չկա՛ս,
Որ դու էլ չկա՛ս...
Օ՛, այդ աչերը այնքան դրսիկ—
Կարծես պուրակում մարգարիտ-ծաղիկ
Հեռուն ցնորող, բայց կյանքն կարոտ,
Ինձ խոստանում են մի նոր առավոտ.
Զգում են նորանք ինչ որ անհայտիւ
Կարծես որոնում մի աշխարհ դաղտնի,
Գաղտնի մի աշխարհ, ուր կին հոգին
Երջանիկ դդար ու շուտ մահանար՝
Ո՛չ մի ափսոսանք չէր առաջանար.
Զգում են նրանք, որոնում մեկին[2]—
Գերբնական աչեր, դուք ո՞ւմ եք ուղում,
Գուցե երջանիկ կյա՞նքը երազում,
Կյանք խնամատիկ, կյանքը խրնկան,
Կյանքը կյանքի մեջ դաղտափարական,
Լի հուզումներով, ցանկություններով
Եվ երջանկության փոթորիկներով...

Ես էլ գեղջկի հոգի եմ, բայց մեծ ամայության աչքերը՝ սպրյուրը՝ մարգարիտ չեն կարող հիշեցներ. Մի խոսք է պակասում— նոքանից:

?

Խոսք է նշանակում. Ձայն մեջ չէր առաջանա ափսոսանք. Դարձյալ օրինակ համար ասել ես տառաքանատ—հոգ հասկան խանգարող ուշի մեջ. հոգիդ-յանն էլ է քոչոր տալիս այդ:

## IV

Եվ ես վազուց է հետս կարոտի
Մի ցավ եմ դդում իմ ցավոտ սրտում,
Եվ ես վազուց է սիրո անոթի՝
Նորա դող ու հույզն էլ կարոտում.
Արթնացավ իմ մեջ նա մի նոր ուժով,
Լքրնց[3] սիրտս[4] այնպիսի հույզով՝
Կարծես վիրավոր մի խոցի մրմունջ,
Կարծես փայփայող կանացի մի շունչ

[1] Շահումյանը բառիք ջնջել է և դրել վերջակետ
[2] Շահումյանը գծիկը (—) ջնջել է և դրել վերջակետ
[3] Շահումյանը ջնջել է ը տառը
[4] Շահումյանն ուզել է՝ իմ սիրտը

Ողջ էութիւնդ շոյում, գուրգուրում
Ու հոգուդ բերում
Ծաղկունքից բուրող մի քաղցր զրկիս,
Մի անուշ ինքիր...
Եվ այդ ժամերին մի կյանքն ի՞նչ է,
Հարյուր կյանք ին տամ այդ րաղդին՝ քիչ է.
Ու ես իմ հոգու ուժերի ինսիով,
Որ խտացել է ծով-սրտիս խորքում,
Ուզում եմ քեզ գամ ձիշ ու սարսափով
Ու այնքի պես ծնկներդ փարիմ,
Շուրթերդ մաղնիս քաշիմ — համբուրիմ,
Ասեմ, իմ անգին, այսպես իմ կյանքում
Ես դեռ չեմ սիրել, բայց պիտի սիրեմ,[1]
Ու սեկ էլ աչքս ես վերև հառեմ,
Տեսնեմ ինձ սենակ. խակ դու էլ չկաս,
Թռե՞լ ես, մարե՞լ, որպես խուլ երազ...

Ընդհատված լսել է ուշ-ուշ ինչ-որ խոսակցություն։ Ինքնին ԽՍՀՄ ՀԱՀԱՊԱՀ.

Դեղձիկի է!

## V

Ու վերջին անգամ տեսա նազելիս,
Հազար պշրանքով, հազար ինովչանքով.
Տեսա քեզ սենակ սիրտդ հուզվելիս
Մոսխոհ ծովի բուռն հորձանքով,
Գլուխդ հետ տարած, մազերդ ցիրցան
Հուսահատ ինսիով ջղաձգական
Ձեռքերդ ջարդում, մատներդ սեղմում,
Արդյոք ո՞ւմ մասին ես դու մտածում.
Հայտի՞, անհայտի՞, ներկա մի անձի՞,
Թե՞ մի ցնորքի
Տեսա քեզ ինչպես լարած միտք ու խելք
Ուզում ես գոնել կասկածիդ մի ելք...
Ու մի սիրալիր ժպիտ իմ բաժին
Պայծառում է հանկարծ շուրթերիդ ուժգին.
Ջարի, բարին ուժե՞րն են կռվում,
Թե՞ հանապարհիդ վարդերը փուշում.
Ներկայի փշեր, ապագա հուշե՞ր,
Թե՞ դեռ անորոշ մի համր դիշեր...

Դեղձիկի է!

[1] Շահուխյանը առաջակատ ջնջել և գրել է վերջակետ։

Ես մտածում եմ, գուցե սա ունի
Հետս աշխարհում իդեալ սիրուն,
Գուցե փայփայած մի անհատ ունի,
Գնդամարդ կոշվելուն հպարտ արժանի,
Որը ապրում է Ասպծո[1] նման
Եվ հոգին հագցնում կատարելությա՞ն։ ?
Ասա, իմ ապիր, իմ հոգու պատկեր,
Ո՞վ է այն հսկան, որ կարողացավ
Քնել լինել ընկեր.
Ո՞վ այն տխուրը, որին հաջողվից
Տիրել քո սրտին, իշխել քո մտքին.
( Ո՞վ, այն երկինքը, որը խեղդախեց )
Ամփոփել իր մեջ քո օվկիանն հոգին[2].
Կյանքի ծարա՞վը նահականության,
Անհաս խոհ՞երը բանականության, ?
Արդյոք աշխարհիկ վայելչությո՞ւնը,
Թե՞ փարթամ կյանքն սին կնիք ու խոսք.
Արդյոք քո հոգու, մտքի ու սրտի
Ո՞ր պահանջ տենդը նա պիտի լցնի.
Իր ուժի, մտքի կատարելությամբ
Անախտական իր մոլորությամբ ?
Նա պահանջ չունի՞...
Օ՛, ին նա տևաներ իմ ցավ ու կսկիծ,
Քնել ինձ կըպիշներ այն հետու տեղից.
Քնել ինձ կըպիշներ ոչ թե անձնական
Լոկ բախտիս համար — իրրև կարեկից —
Այլ ձեռքդ առած որպես թևակից
Աշխարհ կերթայինք կյանքը մտնելու,
Մեր մխաքն ու հոգին մարդկության տալու
Եվ, ասա՛, ինչո՞ւ մի ձայն հավիտական
Կայծակի նման ինձ է բնկատրում,
Որ դու միայն իմ աշխարհն ես սիրում.
Ինչո՞ւ քո նոր առասպելական ?
Քանիլ գնում է, ավելի զովում, ?
Ավելի պարզվում նիների նման.

---

1 Շահումյանը գործածել է փոքրատառով։

2 Շահումյանը ջնջել է մինչև նրա վերջակետը։

Կամ ինչո՞ւ միտքս հուժկու ձայն առած
Ազդակելով միշտ նույնն է ասում,
Որ քո խելացի աչերը անուշ,
Որ քո այդ աղնիվ ժպիտը քնքուշ,
Որ քո երևոը, որի մի կևոը
Վշտի, զրկանքի բերնից է խոսում,
Մյուսը բաղդավոր օրեր երազում՝
Մեկին սիրելու համար չեն ստեղծված.
— Մնված են նոքա ամբոխի համար,
Նոքա ծուխըն են ստոստոված կյանքի,
Նոքա ծնունդ են մի այլ աշխարհքի,
Նոքա պիտ ապրեն մարդկության համար,
Օ՞, եթե փչի իմ պլխին կամար
Ես չե՛մ հավատալ, ես չե՛մ հավատալ,
Որ հոգիդ պայծառ և սիրուդ ազատ
Կարենան գրել մի էակ—անհատ.
Դու ինձ ես սիրում, դու իմ իդեալ.
Ես չեմ հավատալ,
Որ միտքը ճնշի սրտի բարտախում,
Սրտիդ մեջ մի այլ կրակ է մխում.
Սիրտը Աստված է, սիրտը անսխալ,
Սրտին քե լսես, էլ չես սխալվիլ:
Եվ այդ գոհարը նվիրել մեկին
Շա՜տ է նսեման—կաշկանդող հոգին,
Նրա թռիչքը մի ցնորք անտես—
Անհիմն մի հոգ, ուր ինչ էլ ցանես
Պիտի բառանա, պիտի չորանա—
Սկիզբ ու վախճան երբեք չունի նա:
Եվ ի՞նչ է մեկը:
— Մեկը մի սովեր, որ ինչ էլ լինի
Նման թույլ ու մեղկ օտար հնչյունի
Արձագանք չունի.
Այլ է հաղարը, այլ նորա կոչում,
Նորա գրահից աշխարհն է թնդում:
Եվ ասա՛, մի՞թե մի մի աստիճան
Առաջ բնթանալ կյանքի չէ նշան,
Միշտ ձգտել հառաջ, մտնել նոր աշխարհ

Խակ դու անհատ չէ՞ս

Ես չեմ հավատում, որ սիրտը ազատ կարող է գրել մի էակ—անհատ

Ես չեմ հավատում

Ինչ ես ուզում ասել

Տ ա ա ն

Ապրել ու տանջվել շատերի համար
?
Մի՞թե ամենևին չէ նշանակում՝
Բայց ոտնել մի տեղ անխորհուրդ, անել,
? ( Մի սովորական պարերդ կատարել,
( Կամ թե սավառնել ցնորք-երևույթ
Առանց ցնցումի, առանց սարսուռի,
Վեհոտ սպասել մարդկանց փրկությունն
Առանց միտք դառը, հուզող տեսլերի—
Ա՛յ իմ սիրելի,
( Չէ ծնվել այդպես ոչ մի գաղափար
( Եվ ոչ մարդկության ծաղկել պատմություն։

## VI

Այսաեղից սկսում է պարզ ու զգեցիկ։

— Երեն իրավ է, նազելի սիրուն,
Որ քո աչերը կյանքի չերմ կարոտ
Մի նոր — իրական աշխարհ են փնտրում
Եվ ինձ խոստանում մի նոր առավոտ,
Արի տանեմ քեզ իմ սիրածի մոտ.
— Դեպի գործարան

Արի տանեմ քեզ, ուր մարդիկ աշխատող
Չեն ապրում միայն ցավով անձնական,
Այլ ցավը քաշում հանուր մարդկության.
Ուր գործ և կռվի մեջ են որոնում
Հմայք—բանալին բաղդավորության։
Աչքովդ միասին և բնկերուհի
Իրար թև կտանք, նեցուկ կլիննանք,
Որ այրող ցավը հնշտությամբ տանեննք,
Ես քեզ կսիրեմ ոչ լոկ սիրելու—
Հաճույքի համար,
Այլ անեմ ձուլվելու քո մաստոզ հոգում,
Որ դու ավելի լիներս դիմացկուն
Այս դաժան կյանքում.
Ա՛խ, մանկությունից բնկեր սիրելու
Խնդրագարն եմ ես,

!

Սիրտը Աստված է, արտին Ին լանս
Կգաս միասին,
Էլ չես մտածիլ անհետաւոր մասին,
Ոլ կանցնի քնդ հետ կյանքի նեղ ուղին
Երանի նորան,

Սրտի ու մտքի հարցը նորից անհասկանալի է։

## VII

Ինանք գործարան...
Բայց լսիր ասեմ, սիրելի ընկեր,
Որ չկան այնտեղ ծառ ու ծաղիկներ,
Բաղնղ ու խոտեր,
Հավքերի նվագ, դուլ-դուլ աղբյուրներ,
Եվ ոչ ալ վարդեր.
Չես տեսնիլ այնտեղ լուսնյակ գիշերի
Լուսաշող ամպեր,
Ոչ էլ սիրահար չահկ արտի
Կթրատ հաճարքներ.

Կարծես ամեն լավ կիներ. ար աս չիներ։

Այնտեղ ծառի տեղ ցցված են խրոխտ
Երկաթի սյուներ,
Բաղնղ—խառն տեղ ցանցերի փշոտ
Պողպատի լարեր.
Գնդախառ թռչնոց երգի փոխարեն
Կըլսես այնտեղ
Ճախարակների անգադին օրոր
Եվ խանի փոկերի համերգը ահեղ.
Այնտեղ խեղդվում են շոգու ամպերն,

Հանում

Պաղ աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն օր.
Վարդի փոխարեն
Մորում, քամվում է արյուն սրտերեն
Եվ շուրջդ բոլոր
Շունչ ու ժիտ...
Կրտևանես ինչպե՞ս թանձրացած մխով
Մխանելուղները
Երկինք են կառչել ագահ երախով
Մրոտ պոչերը,
Կարծես հրաշունչ վիշապի նման

Հավ է

Ուզում են շնչել
Ու իրենց քարշել
Անհուն բարձունքից փայլուն աստղերը,
Որ նորանց Բաղեն մշուշ-ծխի մեջ։
Կրտեսնես շարված ադամոր ու խնդճ
Արհեստանոցի ապրուս—պատերը
Խոնավ ու թաց-թաց,
Կարծես բանվորի քրտինքով թրջված...

Դեղեցիկ է

Շատ լավ է

VIII

Եվ դու կըմտնես այն գործարանի
Համարների տակ,
Որտեղ նստած է Բաժով աշխատանքը.
Կրտեսնես այնտեղ արհեստանոցի
Հարուստ զավակ կաղնի—բանվորին,
Կարծես Բահալը նստել է նորա
Կորացած մեջքին։
Ա՛խ, շա՛տ եմ տեսել նորան, իմ բնաբնիկ ??..
Սևացած երես ծխի մեջ կորած,
Ու դեռ հասակը երեսուն չառած՝
Կամ մեքենան է ճխլում իր Բաժով,
Կամ ալ հեղուկը այրում, փոթորում,
Կամ ոսը փշրում, բազուկը հառում,
Եվ կամ հանքի տակ գերեզման գտնում։
Ես տեսա նորան, սիրելի ընկեր,
Մի մթին գիշեր
Քուրան էր վառվում, փնշում կատաղած
Ամեն անկյունից որպես վիշապներ
Կարմիր կրակը լեզուներ հանած՝
Օդը լիզելով երկաթին էր ծամում,
Ծուխ-ծուխ շիկանում,
Եվ նորա դիմաց գործիքը կանգնած,
Ալ բոցի դույնից Բաժի, նոանդ առած՝
Ջորցած մատներով երկաթն էր կռում
Եվ պողպատ մեջքով համառին ծռում
Կռում ու կռվում...
Եվ մինչ մի նոր ձև, մի կյանք չէր տալիս
Անշունչ մետաղին—չէր հանգստանում։

Լավ է

Ուշ անհարթություն կա. ձև էր չնկատում.

Ես խորհում էի... ահա՛ թե ուր է
Զգում բանվորի առնծող ոգին.
Ահա թե ինչու կարմիր ալ գույնը
Նա սիրեց այնպես խանդաղատագին.
Ու թեև կաթ-կաթ քրտինք է ծորում
Մրոտ ճակատից,
Բայց էլի մի գործ, մի իր է ձուլում
Անշուշտ երկաթից,
Մի գործ հոյակապ,
Որով կոփվում է իր կամքը երկաթ,
Մնվում ու բովվում հավատըն անհաղթ։
Մի ուրիշ անգամ այդ սիրասիրտներին
Ես տեսա, ընկեր, մեծ ձուլարանում
Դույլեր ու ձողեր ձեռքերը առած՝
Եռուն հնոցի շուրջը բոլորած՝
Թուջ էին հալում.
Կաթսան ամեհի կարմրել էր, փսփսել,
Ուզում էր պայթել...
Եվ ահա մեկը անվեհերներից
Սուր ձողը ձեռքում
Կաթսայի կուրծքն է պայտուլիով մխում,
Երակը խայթում. ?
( Կարիքն է կանչ պայտուլիդ ու վրնժ
Նրա ականջում. ) ?
Կարմիր հալոցքը ջրվեժի նման
Վիժում է ուժգին,
Կարծես հոխորտում կյանքն նորան,
Ով որ խելագնաց վերջ տալ իր կրծքին,
Բայց բանվորը քաջ սովոր է նրան,
Մաղրում է հեզնում չեռուն հեղուկին,
Հալոցքի մեջ է անվախ, մնծացել
Նորա հարգի հոգին։

## IX

Այդպես շարժվելու նորանք միշտ սովոր,
Այդպես անհանգիստ, եռուն ամեն օր
Գալիս են անվիրջ՝
Հազարը մեկի պես, մեկը՝ հազարի—

Մի ալիքից հետո՝ բյուրավոր ալիք—
Զույգում է նա-ր հզոր մենք-ի մեջ
Եվ մեռած կյանքի հուզում փոթորիկ։
Նոքա գալիս են արդարությունը
Ուսուցանելու,
Նոքա պայքարում ողջ մարդկությանը
Հանդիսատես բնելու.
Նոքա ատելում են ո՛չ ինձ, քեզ, մյուսին,
Զորրորդի համար,
Նոքա մեռնում են ինձ, քեզ, երրորդի,
Եւ աւելի համար.
Եվ հակառակն մի ցավով տարված
Զգում են առաջ, անցնում խումբերից
Եվ սիրան[1] է ինդում այդ միությունից։
Տե՛ս, այդ նրանք են, ու ամեն մեկը
Մի ծառ է թաղում մոլության նեղան
Ապագա շենքի հոնում հիմքը,
Ու երբ տեսնում է պատերը նրան,
Նրան բարձրացան և գործն է կենդան՝
Ոգևորվում է առյուծի նման։
Գնանք գործարան,
Հոգսի, կարիքի, քաղց ու տանջանքի
Այդ շտեմարան.
Այնտեղ կտեսնես գրկանքի որդուն,
Ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում.
Այնտեղ կարող ես հասկանալ մարդուն,
Լվանալ վերքեր սրտիդ արյունով,
Հրեշտակային այդ բարի դեմքով,
Քնքուշ, երջանիկ կանացի հոգով
Այնտեղ կարող ես ցավեր ամոքել
Եվ վհատելի սիրտը բորբոքել,
Որ լքման ժամին
Վշտին դիմանալ նա կարողանա,
Մինչ մի լավ օրի նա կմոռանա...
Մոռացիր նորան, ա՛յ իմ սիրելի.

[1] Շահուժյանը ջնջել է վերջին 6 տող։

Տանջվիր նույն ցավով,
Նա՛, ով շա՛տ տանջվում՝
Ամենից լավ է կյանքը հասկանում...

## X

. . . . . .
. . . . . .
. . . . . .

## XI

Ասել էր մենք հույնի պիտուններից,
Որ լուսնյակի տակ
Ամեն ինչ շարժվում, փոխվում է նորից —
Փոխվում է անվերջ...

Не склади

Ա՛խ, ես մեռցի դարձյալ մեն-մենակ
Իմ ցավերի մեջ,
Որպես մի ցնորք, դուցե և պատրանք
Նա եկավ, անցավ,
Շոյեց, փայփայեց քնդրկեց հոգիս,
Նորից չքացավ.
Նա եկավ, անցավ աստղի նման,
Որպես հուզող անձկ,
Ու թողեց սրտիս ցավոտ պատմության
Մի տխրալի էջ.
Եվ ես զգացի, որ նա ինձ համար
Մոռնկ, բայց օտար—և՛ կար և՛ չկար։
Ես տեսա նորան իմ երազանքում,
Ես տեսա նորան երկու բարձունքում,
Լուսնյակի պես երևալ համառ
Ամպերի ծոցից
Անհասկանալի երազ աշքերով
Գյումեական ժպիտ շուրթերին փայլելիս—
Ինձ վե՛ր կանչելիս։
Ա՛խ, ես հասկացա, որ իմ նազելիս
Կավի չէ՛ր ստվոր,
Նորան հանդիսատ էր միայն հարկավոր,
Դուցե և վաղանց մի կյանք բոխտավոր.



387—23

Ես նոր իմացա, որ այն ինչ պետք
Իրա բնական համրով ընթանար
Աստղան համար գոյություն չունի
Մի այլ համատարած

Այն էլ իմացա, որ իրանքին
Եվ գնդերիկին
Թեև միասին երկուսս ենք ձգտել,
Բայց ամեն մեկս տարբեր հասանքի
Կյանքի իմաստը ա՛յ նրանում... Нескладно

Եվ նրնե այդպե՛ս,
Ինչո՞ւ իմ հոգին կրակվեց այնպես...
Ա՛խ, այդ չիմանար որպես մի կատակ,
Թյուրիմացություն չէր սա մի դատարկ.
Սրտի զգացմունքն էր, ցույն պես հայտ,
Այրող, առչորող,
Բայց էլի ծարավ սիրո անզսպելի,
Անհուտ եռանդով. — 4 e e e

Սրտի զգացմունքն էր, որ երկու համար
Անհամեմատ ուժեր ձգտում են իրար,
Այրվում առչորվում մեկ մեկու համար.
Գուցե և հոգով, մտքի, իմաստի
Նմանություն էր այս,
Որը տալիս է մարտիկ պոետի
Թռիչքում անհաս. —— Ով տեղ...

Ես ուշ հասկացա, որ ես այրվել եմ
Լոկ իմ կրակից,
Որը մի անգամ մարդու մեջ վառվում,
Հանուում է նորան: ? Нескладно
Որ նա մի անոթ, ուսկից ծծել եմ
Հեղուկ կենսատար,
Նա մի բնություն, որից ազդվել էր
Հոգիս խանգավառ:

## XII

Այդպես ամեն ինչ տառան կյանքի մեջ
Եարժուն, երերուն, չունի մի կայուն,
Միակ հաստատուն հավատն է անշեջ ?

Համառոտ դևպի վանք ապագան.
Համառոտ գործի, կռվի և կյանքի,
Համառոտ կայուն հաղթ աշխատանքի.
Եվ հուզվեց իմ մեջ բազդի նման
Հպարտասիրությունը իմ վեհ մեծության.
Գիտի՞ ես արդյոք դևրի մեսալի
Եղևրի կնոջ,
Թուլնի, նորա ետրից գնացի՞...
Եվ հոգիս անպատրաստ պատասխանեց՝ ոչ,
Մեկ է պատմիտա, մեկ նորա ուղին,
Ուրիշ հանապարհ գոյություն չունի
Երբեք քեզ համարա
Եվ ահա այսօր մի գյուղիչ աշխատի
Իրա խոհերով, իրա ցավերով
Անդամած իմ կրծքին,
Ես բաժանում իմ ունկնդրությո՞ւն[1] ?
Իմ ներքին ձայնին.
Կամ ձգտել կյանքին, կռիվ մղելով,
? Նորան բնել տեր,
Կամ որ իմ հոգին սուրբ փոթորկին
? Ու նորան բնկեր...
— Բայց ո՞ւր է նա այժմ, ինչո՞վ է ապրում,
Ո՞վ նրան փոթորկի,
Ահա այս մեկը մեռավ ինձ համար
Մի ցավոտ զազրանքով...

1 Շահումյանը «ունկնդրությո»-ը գործել է «ունկընդրության» իմաստով.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


էջ

Պոեմներ

Նոր տաղտուկ . . . . . 9
Կարմիր ալիքները . . . . . 24
Համաստաւրութիւն . . . . . 51
Համատառ պատմութիւն . . . . . 64
Երգը քառաթև . . . . . 69
Աստղածնները խռովքին . . . . . 74
Բայլերիկ է Շեբեկանալը . . . . . 88
Վոլխովստրոյ . . . . . 92
Լենինգրադյան պոեմ . . . . . 98
Քաղաքը . . . . . 116
Թիֆլիս . . . . . 125
Կարմիր Աստղիկը . . . . . 131

Ազգիսկ պոեմներ

Կուլը Աշուղը . . . . . 141
Հատուածներ անաւարտ ու անտիպ պոեմից . . . . . 147

Թարգմանություններ

ՆԱԶՍՈՆ

*** Ոգջ էութիւդ քեզ պատկանել . . . . . 185

ՅԵՐԱՒԴ

Գիտութիւնը լույս է . . . . . 186
*** Թոզրատ հոգիս դեպի այն հեռուն . . . . . 188
Գրամեքենային . . . . . 189
Տիրոջ սիրհը . . . . . 190
*** Մի բնութ կացին . . . . . 192
Հանուն օրենքի . . . . . 193
Ավազ և աստղեր . . . . . 195
Սուտն ու քամին . . . . . 196
Ջատկական լեզենդ . . . . . 200

ՈՏՈՐԿՈՄՆ

Կաղնուց տերևով ծառը ծածկվից . . . . . 202

ԿՈՉՄԱՆ ՊՐՈՒՏԿՈՒ.

*** Երբ դու տեսանես բոկոտն մեկին . . . . . 204

ԳՅՈՒՂ

Բայրաններն . . . . . 205
Մի անգամ . . . . . 206

ՈՏՈՐԿՈՒ

Ամեննից առաջ . . . . . 207

ՊՈՍՏՈՒՊԱՆՈՒ.

Դարձան ամիսքը . . . . . 208

ՈՒԽԱԿԱՐԴՈՒԼԻՈՒ.

Մարտակյոզ . . . . . 210

ԿՐՔՈՒՆԿՈՒՄՈՒՄ

Վարշամյանկա . . . . . 212

ՈՒԼԳՈՆ

Смело, товарищи, в ногу! . . . . . 214

ՄԻՆԱՑՈՒ.

Смело, друзя, не теряйте! . . . . . 215

ՊՈՏԻԲ

Խանկրնացքոնալ . . . . . 217

ՇԿՈՒԼԻՈՒ.

Թագմաե քայլերզ . . . . . 219
Կամաևնքսա եմ ես . . . . . 220

ՎՇԱՏԿԻՆ

Գրաշակը . . . . . 222

ՈՒԱՆՉԱՐԳ

Ուբ ժամ . . . . . 223

ՏԻՆՈՒՐԻՐՈՒ.

Բանվարնեկբ երգը . . . . . 225

ՈՒՑԻՄՈՆՏ

Կարտալը . . . . . 228

ՎԱՏՆՈՒՆԳ

Անհուն ծովալով . . . . . 230

ՏԱՐԱՆՈՒՄ.

Մեծապնդիկը . . . . . 232

ՄԵՑԱՏԻՆ

*** Նորից երթանք մեր հանապարհ . . . . . 234

ՏԱՐՓԱՐՄՆ

Մի հատված . . . . . 235

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻՆ

Գրպետարանի պահանջքին . . . . . 236
*** Ես հիշում եմ այն ազգկան . . . . . 237

ՍԿՆՑԱԳԻ.

Ահագանգը . . . . . 238

ԳՈՒԹԱՆՈՒՄ

Աշխատություններ . . . . . 241

ԷՄԻԼԻ

Դարբնացում . . . . . 242

ՈՒՇՄԱՆՈՒՄ

Կատաղումը . . . . . 243

ՆՈՐՔԻ.

Քոռնիկին . . . . . 247

ԻՆԹԻՐ

Հինգ օր ու գիշեր . . . . . 249

ՈՒՐԴՈՒ

Ուղեցույց առաջ . . . . . 250
Քրոմվէլլ . . . . . 251
Մրջյուններըը . . . . . 252

Տաճարապետությունը . . . . . 257
Հավելված . . . . . 339



## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 328 | ն. 1 | Օվկնիցկին | Մվկնիցկին |
| 355 | ն. 3–5 տողերի ձախ յուսանցքում | ում չի վերջանում | Լում չի վերջանում |

«ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՑԱՆ — ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ»

ՀՍՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Հրատ. խմբագիր Է. ՊԻՎԱԶՅԱՆ
Կազմը. առաջին ֆորզացը և անվանաթերթերը
Գեղարվ. Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

Տեխ. խմբագիր՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ Կոնցեռալ սրբագրիչ՝ Ս. ՇԱՀՐԱԶՅԱՆ

Թղթ. № 267 Հրատ. 1241 Դիմը 9 ռ. 60 կ., կազմը 2 ռ. Վ 01099

Հանձնված է արտադրության 16/X 1955 թ., ստորագրված է տպագրության 27/II 1956 թ., պատվեր 387, տիրաժ 5000, հրատ. 15,6 մամուլ, տպ. 22½ մամուլ + 3 ներդիր, թուղթ 60×92½։

Հայկական ՍՍՌ Գիտ. հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան 124։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028314



II
28314